

ՄԴՂԿ-ԿՈՄԻՆՏԵՐՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՂԻԿ ՃԻՐԷՃՅԱՆ

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն (ՄԴՂԿ)-Կոմունիստական Ինտերնացիոնալ (Կոմինտերն) յարաբերութիւնները պատմագիտական միտքին համար կը ներկայացնեն որոշակի հետաքրքրութիւն, որովհետեւ անոնց հետ ուղղակիօրէն կապուած են ՄԴՂԿի լուծարքը Սորհրդային Միութեան տարածքին, ՄԴՂԿը Կոմունիստական Կուսակցութեան մէջ լուծարելու փորձերը Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) եւ կարգ մը այլ երկիրներու մէջ եւն:

Այսուհանդերձ, պատմագրութեան կողմէ ցարդ լիարժէք կերպով ու Համապարփակ ուսումնասիրուած չեն այս յարաբերութիւնները, թէեւ այդ մասին հրատարակուած են որոշ թիւով փաստաթուղթեր, ինչպէս նաեւ կարգ մը գրութիւններ՝ ցրուած հոս ու հոն:

Ելլելով վերոնշեալ պարագաներէն եւ այս նիւթին հետ առնչուող տակաին անտիպ փաստաթուղթեր գիտական շրջանառութեան մէջ դնելու հնարաւորութենէն, նախաձեռնեցինք սոյն ուսումնասիրութեան:

Չենք խորհրդ, որ շօշափուած նիւթը այս ուսումնասիրութեամբ սպառած ըլլայ: Եստ հաւանաբար, սպագային ի յայտ գած նոր փաստաթուղթեր, Բացառուած չէ նաեւ, որ մեր տեսողաշտէն վրիպած ըլլան նիւթին վերաբերեալ տպագրուած որոշ կարծիքներ: Մեր կատարածը միայն նիւթը իր ամբողջութեան մէջ ներկայացնելու առաջին փորձն է:

Մեր յօդուածի հիմնական կիզակէտը կը կազմեն Կոմինտերնի գործունէութեան տարիները՝ 1919-48: Սակայն, քանի որ Կոմինտերնի հիմնադրութիւնը սերտ առնչութիւն ունի Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժման պատմական զարգացումներուն հետ եւ մանաւանդ որովհետեւ ՄԴՂԿի յարաբերութիւնները Կոմինտերնի հետ անմիջականօրէն պայմանաւորուած էին Կոմինտերնի անդամ ամենակարեւոր կուսակցութեան՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան (ՌՄԴԲԿ)՝ հետ ՄԴՂԿի հետ ունեցած նախապատմութեամբ, ՄԴՂԿ-Կոմինտերն յարաբերութիւնները ճիշդ պատկերացնելու, անոնց ներքին ծայրերը ներթափանցելու եւ ՄԴՂԿի ներկուսակցական կեանքին վրայ այդ յարաբերութեան ձգած հակասական ազդեցութիւնն ըմբռնելու տեսակէտէն, հարկաւոր գտանք յօդուածին սկիզբը ամփոփ ձեւով անդրադառնալ նաեւ Ի. դարասկիզբի ՄԴՂԿ-ՌՄԴԲԿ յարաբերութիւններուն:

ՄԻՂԿ-ՌՄԴԲԿ ՅԱՐԱՐԵՐ ՈՒՔԻՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ 1914

ՄԻՂԿի հիմնադրումով (1887), Հայ կեանքին մէջ կը սկսի գործել սոցիալիստական գաղափարախօսութեամբ առաջնորդուող առաջին կուսակցութիւնը: Բնական է, որ ՄԻՂԿ իր գործունէութիւն ծաւալած երկիրներուն մէջ փնտէր գաղափարակիցներ՝ անոնց հետ գործակցելու եւ դաշնակցելու Համար յանուն կուսակցութեան վերջնական նպատակներուն՝ Հայաստանի անկախացման եւ այնտեղ սոցիալիստական իրաւակարգի Հաստատման: Այս խմատով իւրաքանչեւ նշանակութիւն կը ստանար Ռուսաստանը, որուն կազմին մէջ էին Արեւելահայաստանն ու Հայ ժողովուրդի մէկ մեծ Հատուածը:

ՌՄԴԲԿն Ռուսաստանի մէջ սոցիալիստական ուղղուածութեամբ ամենազօր կուսակցութիւնն էր՝ ծնունդ առած Մարտ 1898ին Մինսքի մէջ գաղտնի գումարուած Համագումարի մը ընթացքին՝ Ռուսաստանի տարածքին գործող շարք մը սոցիալիստական խմբաւորումներու միացումով: Յուլիս-Օգոստոս 1903ին Պրիբաւէյի եւ ապա Լոնտոնի մէջ կայացած ՌՄԴԲԿ Բ. Համագումարին, կուսակցութիւնը կ'երկփեղկուի երկու Հատուածներու՝ բոլշեւիկեան (մեծամասնական) ու մենշեւիկեան (փոքրամասնական): Տեսական ու մարտավարական Հարցերու շուրջ տարակարծութիւններ ունեցող զոյգ Հատուածները երկար ժամանակ կը շարունակեն դոյակցիլ կուսակցական նոյն կառոյցին մէջ մինչեւ 1917ի ռուսական Փետրուարեան եւ Հոկտեմբերեան յեղափոխութիւնները:

Սկիզբէն եւեթ, յառաջ կու գայ ՌՄԴԲԿ-ՄԻՂԿ յարաբերութիւն մը, որ սակայն Հարթ ու խաղաղ չ'ընթանար, այլ կ'արձանագրէ վերիվայրումներ: Հարցն այն էր, որ Ռուսաստանի բազմազգեան իրականութենէն եւ իր միջազգայնական գաղափարախօսութենէն մեկնելով, ՌՄԴԲԿն կ'որդեղրէր բազմազգեան կազմակերպչական ձեւ, որուն խտտոր կը Համեմատի ազգային կառոյցով սոցիալիստական կուսակցութիւններու գաղափարը: Բոլորովին այլ էր Հայ իրականութենէն ծնած ՄԻՂԿի պարագան: Անոր առանձին գոյութիւնը ՌՄԴԲԿի կողմէ կ'ամբաստանուի որպէս «նաց-իոնալիզմ» (ազգայնականութիւն), «սպեցիֆիզմ» (Հայ ժողովուրդէ իւրաքանչեւեան բացարձակացում), բանուորական շարժման պառակտում եւն.:

1900ականներու սկիզբէն, ՄԻՂԿի մէջ կրեւան կու գան երկու Հոսանքներ: Ըստ առաջին Հոսանքին, Ռուսաստանի եւ Անդրկովկասի մէջ սոցիալիստական պայքար մղելն ու Թրքահայաստանի մէջ ազգային-ազատագրական պայքար մղելը միեւնոյն կուսակցութեան Համար անհամատեղելի են: Իրավիճակի տուեալներէն մեկնած, պէտք է դադրեցնել ազատագրական պայքարը Թրքահայաստանի մէջ եւ ամբողջութեամբ նուիրուիլ Ռուսաստանի սոցիալիստական շարժման: Այս տեսակէտը պաշտպանողները,

որպէս տարրերակ կ'առաջարկէին նաեւ ՄՊՀԿը բաժնել երկու ինքնուրոյն՝ իրքաւայ եւ ուսական Հատուածներու՝ Ռուսաստանի եւ Անդրկովկասի մասնաճիւղերուն առջեւ առաջադրանք դնելով ամբողջական գործակցութիւն ՌՄԴԲԿի Հետ՝ ընդհուպ՝ ամբողջական միաձուլում:

Այս տեսակէտի զարգացման մէջ վճռորոշ դեր կը խաղար միջազգային սոցիալիստական շարժման կարգ մը ակնանաւոր դէմքերուն այն մօտեցումը, որ իրքաւայ ազգային-ազատագրական շարժումը կը նկատէր ազգայնական շարժում մը, ուստի եւ իր վերջնական նպատակին մէջ՝ անյարբիր սոցիալիզմի միջազգայնական ըմբռնումին⁵: ՄՊՀԿի յայտնի պարագայութիւններէն Ստեփան Սապահ Գիւլեան, որ այդ շրջանին յարաբերութիւններ ունէր Եւրոպայի սոցիալիստ դեկաւարներուն Հետ, կը վկայէ, թէ այդպէս կը դատէին, օրինակի Համար գերմանացի Վիլհելմ Լիբկնեխտն ու Փրանսացի Ժան Ժորէսը⁶: Երբ 1894ին դիմում կ'ըլլայ դիտական սոցիալիզմի Համահիմնադիր Ֆրիդրիխ Էնգելսին, որպէսզի գրէ հոմունիստական հուսակցութեան Մանիֆեստը երկի Հայերէն թարգմանութեան յաւանջարանը, վերջինս կը մերժէ այդ առաջարկը, առարկելով թէ ինք ծանօթ չէ Հայ իրականութեան, ուստի եւ չի կրնար թելադրական խօսք ըսել Հայ ընթերցողին: Էնգելս պատասխան նամակը կ'եզրափակէ այսպէս. «Իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը թուրքերից, ինչպէս նաեւ ուսանելից Հնարաւոր կը լինի միայն այն օրը, երբ կը տապալուի ուսական ցարիզմը⁷: ՄՊՀԿի Հիմնադիրներէն Գէորգ Ղարաջեան (Ս.Տ. Արկումեղ) կը վկայէ, թէ արդէն տարիներ առաջ՝ 1880ին, ուսական սոցիալիզմի տեսարաններէն Գէորգի Պլեխանով Համանման տեսակէտ յայտնած է իրեն⁸:

Այս տեսակէտը կը պաշտպանէին նաեւ ՌՄԴԲԿի Հայ գործիչները վերջիններուն Համար, սակայն, այս Հարցը իր տեսական բնոյթէն անդին ունէր գործնական նշանակութիւն մը եւս: ՌՄԴԲԿի գործիչներուն վկայութեամբ իսկ, այդ շրջանին, Անդրկովկասի արդիւնաբերական քաղաքներուն ու Հեռաւոր գիւղերուն մէջ տիրապետող ներկայութիւն էր ՄՊՀԿը⁹: Հակառակ որ շատ մը բանուորական եւ յեղափոխական ելույթներ կը կազմակերպուէին ՄՊՀԿ-ՌՄԴԲԿ գործակցութեամբ¹⁰, վերջին Հաշուով, կուսակցական մրցակցութեան ու կուսակցական առակութիւն ձեռք բերելու դիտանկիւնէն, ՌՄԴԲԿին Համար ձեռնտու էր, որ ՄՊՀԿի մէջ զարգանայ այս առաջին Հոսանքը: Փաստօրէն ՌՄԴԲԿի Համար կը ներկայանայ ՄՊՀԿը իր մէջ լուծարելու լաւագոյն առիթը: Վերոյիշեալ տեսակէտը կը պաշտպանեն ՄՊՀԿի Հեղինակաւոր դէմքերէն Աւետիս Նազարէկեան, Մարօ Նազարէկեան, Ռուբէն Պանազատ, Գրիգոր Վարդանեան, Խաչիկ Վարդանեան, Ահրիման (Մարգրիտ Քալաշեան) եւն.:

ՄԻՂԿԻ մէջ երկրորդ հոսանքը կը գտնէր թէ Օսմանեան Կայսրութեան մէջ ազգային-ազատագրական պայքար մղելուն եւ ցարական Ռուսաստանի մէջ սոցիալ-դեմոկրատական պայքար տանելուն միջև. անհամատեղելի ոչինչ կար Յրկութեան այ ճնշման եւ անարդարութեան դէմ մղուող պայքարի արտայայտութիւններ են, իւրաքանչիւրը՝ մեկնելով իր պայմաններուն առանձնախտկութենէն: Ուստի ոչ մէկ պատճառ կայ խախտելու կուսակցութեան մէկութիւնն ու ամբողջականութիւնը: Այս տեսակէտը կը պաշտպանեն կուսակցութեան հեղինակաւոր դէմքերէն Արամ Ալըզգաչեան, Լազո (Յակոբ Ղազարեան), Սապահ Գիւլեան, Փարամազ (Մատթէոս Սարգիսեան) եւն.:

1900ականներու սկիզբէն արդէն, ՄԻՂԿԻ մէջ իրենց տեսակէտերը ընդ-Հանրացնելու Համար, առաջին հոսանքի պարագլուխները կը նախաձեռնեն քարոզչական աշխատանքի 1902ին, Աւետիս Նազարբէկեան, զգուշաւոր քարոզչութիւն կատարելու Համար, Ռուսնուզի (Պուլկարիա) մէջ կը սկսի Հրատարակել *Վերածնութիւն* կիսամսեան⁶, կիսամսեակի էջերուն մէջ այլ գիծը կը պաշտպանեն նաեւ Խանազատ, Ահրիման եւ Սարգիս Կասեան: 1904ին, ՄԻՂԿԻ կեդրոնական Վարչութեան գիտակցութեամբ, Աւետիս Նազարբէկեան բանակցութիւններ կը վարէ ՌՄԻՐԿԻ հետ, օրակարգ ունենալով ՄԻՂԿԻ ռուսաստանեան մասնաճիւղերուն լուծարքը ՌՄԻՐԿԻ մէջ, ինչպէս նաեւ վերջինիս օրկան *Պրոյեկտարիատի Գոբըթ* թերթին վերահրատարակումը ժնեի մէջ՝ իր խմբագրութեամբ: Նոյն թուականին, Աւետիս Նազարբէկեանի կողմէ պատրաստուած գործունէութեան նախագիծ մը կը քննարկուի ՄԻՂԿԻ Կովկասեան Մասնաճիւղերու Պատգամաւորական ժողովին, որ երկար վիճարանութիւններէ ետք կը քուէարկէ Հետեւեայ բանաձեւը. «Ռուսաստանում ու Կովկասում հնչակեան կուսակցութիւնը պէտք է մասնակցի բանուորական ցոյցերին, զոր-ծաղուչներին, ինչպէս եւ քաղաքական կուխին, Համերաշխ ՌՄԻՐԿԻ-ի հետ՝ հիմք ունենալով դասակարգային կուխը»⁷: 18 Յունիս 1904ին, ՌՄԻՐԿԻ Խորհուրդը, բոլշեիկեան Հատուածի պարագլուխ Վլատիմիր Լենինի մասնակցութեամբ, կը քննարկէ Հնչակեան Կուսակցութեան հարցը եւ միաձայնութեամբ կ'ընդունի Հետեւեայ բանաձեւը.

Խորհուրդը յանձնարարում է Կենտկոմին Համաձայնութեան գալ կուսակցութեան Կովկասեան Միութեան հետ, իր կազմում ընդունելու «հնչակեաններին» այն կազմակերպութիւններին, որոնք ցանկանում են մտնել կուսակցութեան մէջ: Դրա հետ միասին խորհուրդը յանձնարարում է Կենտկոմին առաջարկել Կովկասեան Միութեանը իր ձեռքը վերցնել, երբ «հնչակեան» կազմակերպութիւնն այլ առաջարկի, Բուլղարիա-

յում հրատարակուող նրա օրգանը (այսինքն՝ Վերածնունդին կիսամսեան - Ե-Ճ)¹⁶։

Մայիս 1904ին, Թիֆլիսի մէջ կայացած ՌՄԴԿ կովկասեան Միութեան Գ. Համագումարը կը մերժէ այս առաջարկը, գտնելով որ Հնչակեան մասնաճիւղերը հաւաքական կազմով պէտք չէ մուտք գործեն ՌՄԴԿի շարքերը, այլ այդ պէտք է տեղի ունենայ անհատական դիմումագիրերու հիմամբ։ 1905ին Փարիզի մէջ Աւետիս Նազարբէկեան եւ Քանազատ կը հանդիպին ՌՄԴԿ մենչելեիկեան Հատուածի պարագլուխ Լ. Մարտովի Հետ, որ ռառաջարկեց մեզ, որպէս մարքսիստների, ձեռք վերցնել մեր ազգային գործունէութիւնից Թիւրքիայում եւ միացնելով ու ձուլելով Հնչկուսակցութիւնը Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան մէջ, ամբողջովին նուիրուիլ Ռուսաստանի յեղափոխութեան գործին¹⁷։ Լենինի Հետ որոշուած հանդիպումը տեղի չ'ունենար՝ վերջինիս Փարիզէն անակնկալ մեկնումին պատճառով։ Հանդիպում մը կը կայանայ նաեւ ՌՄԴԿ Գ. Համագումարի Պաքուի հայազգի պատգամաւոր Բողղան Կնունեանցի Հետ, որ մօտաւորապէս կը կրկնէ Մարտովի թելադրանքը¹⁸։

ՄԴՀԿ Ռուսաստանի մասնաճիւղերը կը մասնակցին 1906-07ի Ռուսական Առաջին Յեղափոխութեան Այդ յեղափոխութեան անմիջական ազդեցութեան տակ, Սեպտեմբեր 1905ին Փարիզի մէջ կայացած ՄԴՀԿ Ե. Համագումարը առաւելաբար կը զբաղի այս հարցի քննութեամբ եւ կ'որոշէ՝

Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս մի ուրոյն քաղաքական յեղափոխական կուսակցութիւն պէտք է շարունակէ իր գործունէութիւնը մեր ժրագրի տուած սկզբունքներով որպէս մի ամբողջութիւն՝ մի ընդհանուր կենտրոնով, մի պաշտօնական օրգանով «Հնչակ», մի ընդհանուր կասասյով, ընդունելով տաճկահայ դատը կուսակցութեան ամենատաքիմ գործը։ Ռուսաստանում էլ պէտք է գործել սօցեալ-դեմօկրատական սկզբունքների վերայ՝ համերաշխ Ռուսաստանում գործող սօց-դեմօկրատների հետ¹⁹։

Այս որոշումէն դժգոհներ, ինչպիսիք՝ Գրիգոր Վարդանեան, Կասեան եւ ուրիշներ վերջնականապէս կը խզեն իրենց կապերը ՄԴՀԿի Հետ ու կ'անցնին ՌՄԴԿ շարքերը։ Այս քայլին կը դիմեն անհատաբար թէ՛ խմբակային ձևով Երևանի²⁰, Պաքուի²¹, Սիմֆերոպոլի²², Եայթաի եւ Թիֆլիսի մասնաճիւղերու որոշ անդամներ։ ՄԴՀԿ Ե. Համագումարին մասնակից Ատրպատականի Երջանի պատգամաւոր Ստեփան Քան Եղիազարեան, Պարսկաստան վերադարձէն ետք, Հնչակեան խումբ մը գործիչներու՝ Արտաշէս Չիլիկարեանի, Վառժ ֓իլոսեանի, Նիկողոս Տէր Յովհաննէսեանի եւ Սեդրակ Բանուկեանի Հետ հիմը կը դնէ ՌՄԴԿի Պարսկաստանի Մասնաճիւղին։ Կուսակցութեան մէջ Հեղինակութիւն վայելող մէկ այլ խումբ Աւետիս եւ Մարո Նազարբէկեաններ, Քանազատ, Քաշիկ Վար-

դանեան եւն.) իրենց վարչական-կազմակերպչական բնոյթի կապերը կը խզեն կուսակցութեան հետ, սակայն չեն յայտնուիր ՌՄԻՔԿ շարքերուն մէջ:

Ինչ կը վերաբերի ՄԻՂԿի Հանդէպ ՌՄԻՔԿ պաշտօնական դիրքորոշման, ապա, ՌՄԻՔԿ Անդրկովկասի Դ. Համագումարը 1936ին, «Վերաբերմունք Դէպի Հնչակեան Կուսակցութիւնը» վերնագիրին տակ, կ'արձանագրէ հետեւեայ որոշումը:

Իրան սոցիալ-դեմոկրատական եւ յեղափոխական անուանող հնչակեան կուսակցութիւնը իրապէս հանդիսանում է ինչպէս իր կազմով, նոյնպէս եւ նպատակներով բուրժուազական-ազգայնական մի կազմակերպութիւն: Նրա ամբողջ գործունէութիւնն ուղղուած է եղել դէպի, այսպէս ասած, «Հայաստանի ազատութիւնը»: Իսկ այժմ երբ որ Ռուսաստանում բոլոր քաղաքական կուսակցութիւնները որոշել են իրենց սոցիալ-քաղաքական ֆիզիոնոմիան, Հնչակեանները, յամառաքար մնալով մերքնայարկերում, օգտուած են սոցիալ-դեմոկրատական եարկիկից (պիտակէն - Ե.Ճ.) եւ շահագործում սոցիալ-դեմոկրատիայի հեղինակութիւնն ու ազդեցութիւնը հայ ազգաբնակչութեան լայն խաւերում ընդհանրապէս եւ պրոլետարիատի խաւերում մասնատրապէս. սրանով նրանք մի կողմից ար(ա)տատրում են սոցիալ-դեմոկրատիայի եւ միւս կողմից էլ մթագնում պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցութիւնը:

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների 4-րդ հերթական համագումարն առաջարկում է սոց. դեմ. կազմակերպութիւններին վճռական կոչի մղել այս կուսակցութեան դէմ մերկացնելով նրա, սոցիալ-դեմոկրատական ֆրազաբանութեան տակ ծածկուած, բուրժուական-նացիոնալիստական էութիւնը¹⁷:

Միւս կողմէ, սակայն, Հնչակեան մամուլին մէջ մնացուն կերպով կը տեսնենք բարեկամական եւ բարեացակամ վերաբերմունք ՌՄԻՔԿի Հանդէպ: Փաստօրէն, Հնչակ պաշտօնաթերթը, ՄԻՂԿ-ՌՄԻՔԿ համատեղ կոչերուն կողքին, կը տպագրէ նաեւ ՌՄԻՔԿի առանձին յայտարարութիւնները:

Յետագայ տարիներուն, մտաւորապէս այս կ'ըլլայ ՌՄԻՔԿ կեցուածքը ՄԻՂԿի Հանդէպ: ՄԻՂԿ Ե. Համագումարէն առաջ սկսած ՄԻՂԿ-ՌՄԻՔԿ բանակութիւնը կը շարունակուի աւելի ուժգին թափով: Բանակութիւնը կը ներգրաւուին նաեւ Շախկին Հնչակեաններ: Այս իրավիճակը, քաղաքական պայմաններու բերումով, երբեմն կը ստանայ սուր եւ երբեմն Հանդարտ բնոյթ ու կը շարունակուի մինչեւ Համաշխարհային Առաջին Պատերազմի բռնկումը:

**ԲՈՒՇԵՒԿԵԱՆ ԵՒ ՀՆՁԱԿԵԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՕՐԵՐՈՒՆ**

Համաշխարհային Առաջին Պատերազմի նախօրէին, Երկրորդ Ինտեր-նացիոնալին (Միջազգայնական) անդամակցող սոցիալիստ կուսակցու-թիւններուն միջեւ կը ծագին գաղափարական ու մարտավարական բնոյ-թի յուրյ տարակարծութիւններ այն Հարցին շուրջ թէ Համատարած պա-տերազմի մը մօտալուր բռնկման պարագային, ի՞նչ պիտի ըլլար իւրա-քանչիւր երկրի բանուոր դասակարգին կեցուածքը, ուստի՝ ի՞նչ պէտք է ըլլար բանուոր դասակարգը կազմակերպելու եւ առաջնորդելու կոչուած տուեալ երկրի սոցիալիստ կուսակցութեան դիրքորոշումը:

Այս մէջեր իր տեսական ձեւին մէջ նոր չէր: Երկրորդ Ինտերնացիոնալի իրերայնորդ Համաժողովներուն արժարծուած էր այս հարցը եւ յառաջ եկած էին տարբեր տեսակէտերու Աւելին. 1905ին, «Սոցիալիզմ Եւ Հայրե-նիք» Նիւթին շուրջ հրատարակային աղմկայարոյց բանավէճ մը տեղի ունեցած էր տարբեր երկիրներու սոցիալիստ ղեկավարներու միջեւ, որուն որպէս Հետեւանք *Լա Վի Մտախաթ* (Լենկերվարական կեանք) Հանդէսը քննարկուող Նիւթին շուրջ նոյնանման Հարցումներ յղելով շարք մը ակա-նուար սոցիալիստ ղեկավարներու, տպագրած էր անոնց պատասխաննե-րը:

Յառաջ եկած տեսակէտերու տարբերութիւնը ակներեւ էր: Ձախ Հո-սանքը կը գտնէր, թէ բանուորութիւնը պէտք է հրաժարի պատերազմի դաշտ երթալէ եւ իր զէնքը դարձնէ իր իսկ երկրի իշխանութիւններուն դէմ զանոնք տապալելու համար: Այս թեզին կը Հակադրուէր այն տեսա-կէտը, որ կարելի չէ բանուորութիւնը գրկել Հայրենասիրական զգացում-ներէն: Վերստին հրատարակ կու գար Մարքսի եւ Էնգելսի կողմէ *Պոմու-նիստ կուսակցութեան Մանիֆեստը* երկին մէջ գրուած բանուորութիւնը Հայրենիք չունի լողունը: Եւ քանի որ *Մանիֆեստի* Հեղինակները մահա-ցած էին, ալ լողունդին կը տրուին բազմապիսի մեկնաբանութիւններ:

Միջին Հոսանքը կը գտնէր, թէ պէտք է տարբերակել պաշտպանողա-կան ու յարձակողական պատերազմները: Եթէ երկիր մը ենթարկուի յար-ձակման, ապա ալ երկրի բանուորութեան պարտականութիւնն է պաշտ-պանել իր Հայրենիքը, իսկ յարձակող երկրի բանուորութիւնը պէտք է մերժէ մասնակցիլ պատերազմին: Այս թեզին կը Հակադրուէր այն տեսա-կէտը, որ պատերազմներու ժամանակ բոլոր երկիրներու իշխանութիւն-ներն ալ դիմացի կողմը կը մեղադրեն որպէս նախարձակ, ուստի, սոց-իալիստ կուսակցութիւններուն համար գրեթէ անհնար է անմիջապէս ճշդել իրաւ նախարձակը, որպէսզի ճիշդ կողմնորոշեն բանուոր դասա-կարգը:

Աջ Հոսանքը կը դանէր թէ խաղաղ միջոցներով, խորհրդարաններէ ներս թէ դուրս, պէտք է պայքարիլ գաղութատիրութեան եւ ուղղափառութեան դէմ: Սակայն, երբ Հայրենիքը վտանգուի, պէտք է պաշտպանել զայն: Այս թեզին կը հակադրուէր այն տեսակէտը, թէ սոցիալիստ կուսակցութիւնները որեւէ երկրի խորհրդարանէն ներս մեծամասնութիւն չեն կազմեր եւ կառավարող շրջանակներուն որոշումներուն վրայ ազդելու համար լուրջ ոյժ մը չեն ներկայացներ: Ուստի, գործնական խնաստով, պայքարի այս ձեւը ապարդիւն է:

Համաշխարհային Աւաջին Պատերազմին սկիզբով, այս հարցը իր տեսական բնութիւնը անդին, կը ստանայ շատ գործնական եւ ախտահարական նշանակութիւն: Կ'սկիզբէն, որ 1914ին Վիեննա գումարուելիք Երկրորդ Ինտերնացիոնալի Հերթական խորհրդաժողովը կարենար այս մասին եզրակացութեան մը հասնիլ: Սակայն, պատերազմին բերումով, այդ խորհրդաժողովը տեղի չ'ունենար: Փաստօրէն, Երկրորդ Ինտերնացիոնալը անգոր կ'ըլլայ հարցին միասնական պատասխան մը տալէ: Իւրաքանչիւր երկրի սոցիալիստական կուսակցութիւն կը շարժի ըստ իր դատողութեան, համակերպելով զարդացող դէպքերու ընթացքին, առանց ներգործօն նախաձեռնութիւններու եւ ըստ էութեան աջ Հոսանքի տեսակէտներուն համահունչ:

Երկրորդ Ինտերնացիոնալի ձախ Հոսանքի տեսակէտերը վերաբարձեցիւ եւ զանոնք գործնական կեանքին մէջ կիրարկելու կը լծուի Լենին: Իտալացի սոցիալիստներու նախաձեռնութեամբ եւ Լենինի աշխոյժ գործակցութեամբ, Սեպտեմբեր 1915ին, Զուիցերիոյ Յիմերվալտ քաղաքին մէջ տեղի կ'ունենայ 11 երկիրներու սոցիալիստ կուսակցութիւնները ներկայացնող 38 պատգամաւորներու խորհրդաժողով: Լենին կ'առաջարկէ չմասնակցիլ ընթացող պատերազմին եւ սկսիլ քաղաքացիական պատերազմներ: Դարձեալ ի յայտ կու գան երեք Հոսանքներ: Լենինի գլխաւորած Վիմերվալտեան Ձախ կոչուած խմբաւորումը համախոհութեան կու դայ միջին Հոսանքին հետ, որոնց կողմէ պատրաստուած եզրափակիլ յայտարարութիւնը ամբողջապէս չ'արտայայտեր ձախ Հոսանքին տեսակէտերը:

Ձախերուն համար ապարդիւն կ'անցնի նաեւ յաջորդ տարի Կինտալի մէջ գումարուած Յիմերվալտեան Բ. Խորհրդաժողովը: Իսկ 1917ին, Սթոք-հոլմի մէջ գումարուած Յիմերվալտեան Գ. Խորհրդաժողովին, միջին Հոսանքի ներկայացուցիչները կ'առաջարկեն վերակենդանացնել Երկրորդ Ինտերնացիոնալը:

Լենինի համար այս առաջարկը անընդունելի կ'ըլլայ: Ան բաւազէս կ'ըմբռնէ, որ Երկրորդ Ինտերնացիոնալին մէջ իր տեսակէտերը պիտի մտային փոքրամասնութիւն: Հաստատ մեալով իր համոզումներուն վրայ,

Լենին 1917ին կը պլաւորէ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը, որուն յաղթանակէն անմիջապէս ետք, կը ձեռնարկէ ձախ տեսակէտերուն համախոհ կուսակցութիւններով նոր միջազգայնականի մը ստեղծումը: 1919ին, Երկրորդ Ինտերնացիոնալին զուգահեռ եւ փաստօրէն իբրեւ վերջինիս մրցակից համախմբում, կը ծնի Երրորդ Ինտերնացիոնալը կամ Կոմինտերնը:

ՄԻՂԿ Երկրորդ Ինտերնացիոնալի հիմնադիր համազումարէն սկսեալ Հեռու չէր սոցիալիստական աշխարհէն ներս կատարուող տեսական այս պայքարներէն: Անոր համար, սակայն, առաջնակերթ էին Հայ Ժողովուրդի ֆիզիքական գոյութեան հարցն ու ազատ եւ ինքնիշխան Հայրենիք մը ունենալու ծրագրային առաջադրանքը: Յեղափոխական միջոցներով Թրքահայութեան ազատագրութիւնը ապահովելու համար, 1888ին հրատարակուած ՄԻՂԿ Մրազիբը կ'ըսէր, թէ «որեւէ պատերազմ՝ մղած այս կամ այն օտար պետութեան կողմից Թիւրքիայի դէմ՝ պէտք է համարել յարմար ըստ ժամանակի նպատակի (այսինքն՝ Թրքահայաստանի դատի լուծման - Ե.Ճ.) իրագործման համար (ընդգծումը սկզբնաղբիւրինն է - Ե.Ճ.)»²⁸: Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումէն ետք՝ 1909ին, Կ. Պոլսոյ մէջ կայացած ՄԻՂԿ Զ. Համազումարը կ'որոշէ որդեգրել զործունէութեան օրինական ձեռք եւ իշխող Իթթիհատ վէ Թերաքըր Կուսակցութեան դէմ տանիլ քաղաքական-քարոզչական պայքար: Սակայն ՄԻՂԿ յաջորդ (եւ պատերազմէն առաջ վերջին)՝ Ե. Համազումարը, զումարուած Ռուսմանիոյ Քէօստենիէ (Քոսթանեցա) քաղաքին մէջ, 1913ին, կ'որոշէ վերադառնալ ոչ-օրինական, յեղափոխական ձեւերուն եւ Իթթիհատի դէմ սկսիլ զինեալ պայքար: Բնական է, որ ՄԻՂԿի ծրագրային դրոյթներն ու համազումարի որոշումները պէտք է հաշտ ընթանային միջազգային սոցիալիստական շարժման մէջ երեւան եկած հոսանքներուն հանդէպ անոր կեցուածքին հետ: Ուստի, ՄԻՂԿ կը դիրքորոշուի ի նպաստ «Հայրենասէր սոցիալիստներուն» յառաջ քաշած «պաշտպանողական Հայրենասիրութիւն» կոչուած տեսութեան, ըստ որուն յարձակման ու ճնշման ենթարկուած ազգերու սոցիալիստական կուսակցութիւններուն պարտականութիւնն է մասնակցիլ պատերազմին եւ պաշտպանել իրենց Հայրենիքն ու ազգը:

Ըստ էութեան «ձախ սոցիալիստներուն» հակադրուող Հնչակեան այս տեսակէտը պաշտպանելու եւ անոնց կողմէ կատարուած քննադատութիւններուն հակազդելու համար, Սապահ Գիւլեան Փրոֆիտենսի (ԱՄՆ) մէջ 1916ին կը հրատարակէ *Սոցիալիզմ Եւ Հայրենիք* երկասիրութեան երկրորդ պրակը՝ Գիրքը ամփոփումն է վերեւ յիշատակուած *Լա Վի Սոսիալիստ* հանդէսի Հարցախոյզին: Գիրքի «Նախաբան», «Ներածութիւն», «Յաւելուած» եւ «Մեր Խօսքը» բաժիններուն մէջ, Սապահ Գիւլեան խօսօրէն կը քննադատէ «ձախ սոցիալիստներն» ու Հայ կեանքէն ներս անոնց

տեսակետերուն պաշտպանները, առաւելաբար՝ ՌՄԴԲԿ բոլլեիկեան Հատուածին պատկանող հայ դործիչներ:

Յարբեր չէր պատկերը իրական կեանքին մէջ: Պատերազմի սկիզբէն, ՄԴՀԿ ամբողջապէս կը ներգրաւուի օսմանցիներու դէմ կռուող կամաւորական զուեղեր պատրաստելու աշխատանքին: ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը 1914ի վերջաւորութեան կը հրապարակէ կամաւորագրութեան հրահրող կոչ մը, որ, վերնագիրի կարմիր գոյնին պատճառով, յայտնի կը դառնայ որպէս Վարմիր Կոչ: Հնչակեան կամաւորները կը կռուին Կովկասեան Ռազմաճակատին վրայ, ինչպէս նաեւ՝ Պաղեստինի ու Կիլիկիոյ մէջ:

Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, 16 Յունիս 1917ին, Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ ՄԴՀԿ Երջանային Խորհրդաժողովը, որուն կը մասնակցին Ռուսաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերը՝ 88 ձայնատար պատգամաւորներով, ինչպէս նաեւ Թիֆլիսի մէջ Հաստատուած ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան եւ Թիֆլիսի տեղական մասնաճիւղի վարչութեան լրիւ կազմերը՝ խորհրդակցական իրաւունքով: Կը քննարկուի ՄԴՀԿի դիրքորոշումը ռուսական յեղափոխութեան, անոր յաղթանակէն ետք ստեղծուած ժամանակաւոր Կառավարութեան, պատերազմը շարունակելու հարցին ու բոլլեիկներու վարած ընդդիմադիր քաղաքականութեան հանդէպ: Խորհրդաժողովին, Խալիկ եւ Ֆլորա Վարդանեաններու գլխաւորութեամբ 17 պատգամաւորներէ բաղկացած փոքրամասնութիւն մը կ'առաջադրէ ամբողջական հաւանութիւն տալ բոլլեիկեան քաղաքականութեան՝ ընդհուպ ՄԴՀԿի միաձուլումը բոլլեիկներուն հետ: Այս տեսակէտը հիմնովին կը մերժուի եւ խորհրդաժողովը եզրափակելի իր շրջաբերականին մէջ կը գրէ՝

Ռուսական Յեղափոխութիւնը գաղափարական նոր հոսանքներ երեսն քերեց, մասնաւոր Ռ. Ս. Դ. Բանտրական կուսակցութեան շարքերում: Չնզ ծանօթ են Լենինիզմը եւ նրան մօտ հայեցակէտները: Պէտք է ասած, որ մեր շարքերում էլ Լենինիզմի պոսպագանդ էր մղուել, եւ եղան մասնակիցներ կօմիւնիստս, որոնք նոյն պոսպագանդայով ուղեցին երեսն գալ եւ այստեղ: Բնականաբար այդ պոսպագանդան, ինչպէս դուրսը նոյնպէս եւ կօմիւնիստսն շունեցաւ յաջողութիւն եւ կօմիւնիստսը գրեթէ ամբողջութեամբ իր դժգոհութիւնը յայտնեց Լենինիզմի պոսպագանդայի եւ տակտիկայի դէմ: Դրա ամենապերճախօս արտայայտութիւնները եղան մեր ծրագրի մշակումը եւ մեր այն ռեզօլիցիաները, որոնցով մենք ճշդեցիմք մեր դիրքը դէպի այն հարցերը, որոնք այսօր շահագրգռում են ամբողջ Ռուսաստանը. նոյն իսկ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը, այն է պատերազմը, ժամանակաւոր ռուս կառավարութիւնը եւ այլն եւ այլն²⁶:

Երջարերականը, որ կը կրէ խորհրդածողովի դիւանին ստորագրութիւնը, կ'աւարտի յատկանշական եզրակացութեամբ ձը:

Կարող է պատահել, որ մեր կուսակցութեան շարքերում յայտնեն դասալիքներ, որպիսիները յայտնեցին Ե. Պատգամ. Ժողովից յետոյ: Այդ դասալիքները մեզ վնասել չեն կարող, նրանց մենք կարծամարտենք, ինչպէս արհամարհեցինք 12 տարի առաջ: Ինչպէս աշխարհի երեսի բոլոր դասալիքները, այնպէս էլ սրանք կերթան խայտառակութեան ճանապարհով՝ դէպի բարոյական անկումը, որպիսի անկման արժանացան 12 տարի առաջ զնացող դասալիքները, որոնք աւելի մեծ հեղինակութիւններ էին ներկայացնում: Եթէ յայտնեն այդ դասալիքները, մի վրդափէշ, վստահ եղէք, որ նրանք ոչ մի վնաս տալ չեն կարող²¹:

Երջարերականին մէջ ակնարկուած ծրագրի վերամշակումը տեղի կ'ունենայ, եւ խորհրդածողովը կը վաւերացնէ Ռուսաստանի եւ Անդրկովկասի մէջ ստեղծուած նոր իրադրութեան համապատասխանող ծրագիր ձը Խ տարբերութիւն հին ծրագրին, նորամշակ ծրագրին մէջ չեն նշուիր բանուոր դասակարգի ազատագրութեան եւ ընկերային արդար հասարակարգի մը կերտման համար յեղափոխական միջոցներ:

Սօցիալ-Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութեան առաջադրելի մը պատակին հասնելու միջոցներն են՝ պարլամենտական գործունէութիւն, պրոպագանդա, ազիտացիա, մանիֆէստացիա, արհեստակցական եւ զիտացիական միութիւններ, գործադուլներ, գործաւորական արտայայտող եւ սպառող համագործակցական ընկերութիւններ, կրթական-կուլտուրական հիմնարկութիւններ եւ այլ այլ բոլոր միջոցներն ու եղանակները, որոնք միջազգային Սօցիալ-Դեմօկրատիայի պայքարի զենքերն են կազմում²²:

Խորհրդածողովը փոփոխութիւն կը մտցնէ նաեւ ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութեան կազմին մէջ: Նախագէս՝ 1915ին, դարձեալ Թիֆլիսի մէջ, Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճեղհերուն միջեւ կայացած խորհրդածողովը կամաւորական շարժումը ղեկավարելու համար կ'ընտրէ Արշակ Պապեանէ (Երկաթ), Սիմոն Հովիւեանէ (Ս. Տաշիր) եւ Լազոյէ կազմուած մարմին մը, չորսնք Կեդրոնի իրաւունքով գործելը վարում են²³: Աւելի ուշ՝ 1918ին, նկատելով որ արագընթաց դէպքերու նանրութեան կեդրոնը կը տեղափոխուի Անդրկովկաս եւ պատերազմին պատճառով համազումար հրաւիրելն անհնար կը դառնայ, ԱՄՆի մասնաճեղհերը Թրոյի մէջ կը գումարեն արտակարգ պատգամաւորական ժողով եւ ունեւորանաւորով այդ մարմինն կու տան Կեդրոնական Վարչութեան ամբողջական լիազօրութիւն²⁴: Թիֆլիսի խորհրդածողովը Կեդրոնական Վարչութեան այս կազմին վրայ կ'ընտրէ նաեւ Ալեքսան Տէր Վարդանեանը, լաւագէս որ այժմ արդէն Կեդր. Վարչութիւնը ունի չորս անդամ-

ներ»²⁵։ (Տէր Վարդանեան յանախակի կ'օգտագործէր նաեւ «Վահան Ղուկասեան» եւ «Վահան Մարտեան» ծածկանունները, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ)։

ՄԴՀԿ իրերալարող կանոնադրութիւններով, շրջանային խորհրդաժողովները կեդրոնական վարչութիւն ընտրելու կամ անոր կազմին մէջ փոփոխութիւն կատարելու իրաւասութիւն չունին։ Այդ լիազօրութիւնն ունի միայն Համագումարը։ Սակայն, Հաւանաբար նկատի առնելով, որ գործող կեդրոնական վարչութիւնը ինքնին ընտրուած է Ռեֆերանտումով (այսինքն՝ Համագումարի որոշում բեկանելու Հարց չկա), նաեւ Համագումար Հրահրելու միջազգային աննպաստ պայմանները, այս Հարցը կանոնադրային բնոյթի ներկուսակցական վէճեր չի յառաջացնիր։

Թիֆլիսի խորհրդաժողովէն կարճ միջոց մը առաջ՝ 12 Մարտին տեղի կ'ունենայ նաեւ ՄԴՀԿ Թիֆլիսի Մասնաճիւղի Ընդհանուր Ժողովը։ Հոս եւս կը քննարկուին նոյն Հարցերը եւ դարձեալ երեւան կու գայ բոլշեւիկներու Հետ ամբողջապէս գործակցելու կողմնակից փոքրամասնութիւն մը՝ նոյնինքն Յայիկ ու Ճյորա Վարդանեաններու, ինչպէս եւ Դանուշ Եւսէփեանի գլխաւորութեամբ։

Վարդանեան ամոյն մասնակցութիւնը Թիֆլիսի զոյգ ժողովներուն պատահական չէր։ Այդ խորհրդաժողովներուն եւ ընդհանրապէս նոյն օրերուն Հնչակեան շարքերուն մէջ կը վերայայտնուին եւ արագօրէն ղեկավար դիրքեր կը ստանձնեն 1906էն ՄԴՀԿի Հետ իրենց կապերը խզած շատ մը գործիչներ։ Աքսորէն կը վերադառնայ Մարո Նազարբէկեան եւ Փեթրոկրատի մէջ Լենինի Հետ տեսակցելէ ետք կու գայ Թիֆլիս ու կը ստանձնէ ղեկավար դիրքը Լենին եւ իր Հայ գործակիցներէն Ստեփան Եւահումեան Մարո Նազարբէկեանին խորհուրդ կու տան մնալ ՄԴՀԿի մէջ՝ «Հայ իրականութեան շրջանում բոլշեւիկեան պրոպագանդա տանելու նպատակով»²⁶։ Աւելի ուշ, Ամերիկայի Հնչակեան ղեկավարութեան մէջ կը յայտնուի Աւետիս Նազարբէկեան, որ 1913էն սկսեալ տեսական թղուածներով վերսկսած էր աշխատակցիլ Հնչակին։

1918ին իրական թանակներուն Անդրկովկաս կատարած յարձակման ընթացքին, ՄԴՀԿ կը պաշտպանէ Հայոց Հայրենիքի սահմանները գէնքով պաշտպանելու տեսակէտը եւ գործնապէս կը մասնակցի այդ ուղղութեամբ տարուող աշխատանքներուն։ 8 Փետրուար 1918ի Վոցիսլ-Դեմ Հնչ-Կուսակցութիւն» վերնադիրով Թուրքիկին մէջ, ՄԴՀԿ Երեւանի Տանկահայ վարչութիւնը կը տեղեկացնէ թէ վկուսակցութեանս կեդր. վարիչ մարմինը պաշտօնապէս իր ուժերը տրամադրած է Հայաստանի Ապահովութեան գործին» ու կը Հրահանգէ բոլոր զբնկիւններուն եւ Համակիրներուն խիստն եւ եթ երթալ եւ գէնք վերցնել»²⁷։ 18 Մայիս 1918ի «Քաղաքացիներ» կոչին մէջ, ՄԴՀԿ կեդրոնական վարչութիւնը կը գտնէ թէ թա-

Լայկերը ընթացող զէպերուն յանցաւորները փնտռելու ժամանակը չէ, ալ

ժամանակ է գործելու, կռուի դաշտ մեկնելու:

Մեր վերջին յոյսը զենքը ձեռքերնիս մեզ պաշտպանելու վրայ է:

Ձիմնեցէք ով ինչպէս եւ ինչով կարող է:

Պահանջեցէք Անդրկովկասի կառավարութիւնից զէնք, փամփուշտ եւ ամէն տեսակ ռազմամթերք:

Համախմբուեցէք բոլորդ, առանց կուսակցութեան խտրութեան, բայց ոչ թէ խաղաղ ազգարնակչութեան եւ հարեւանների վրայ յարձակելու, այլ ինքնապաշտպանութեան եւ մեր երկիրը մերս խուժող թշնամու դէմ խիզախելու համար:

Յեղափոխական կուսակցութիւններ, ասպարէզ եկէք, ժամ է գործելու:

Աւելի լաւ է զէնքը ձեռքին մտնել ժողովրդի եւ յեղափոխութեան մարտի մեջ, քան թէ վատարար ստրկօրէն ընկնել թշնամու սրի եւ զնդակի առաջ²⁸:

Յաջորդ օրը, 17 Մալխին, ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը հրապարակէ հետևեալ կոչը:

Սոց. Դեմ. Հնչ. Կուսակցութիւնը սրանով յայտարարում է, որ Կենտր. Վարչութեան կից ընտրուած է ՋԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ, որ պարտականութիւն ունի զէնքի կոչելու ընդունակ բոլոր ընկերներին եւ համակիրներին:

Խստիւ պատուիրում ենք մերկայանալ Ձիմնորակ մարմնին ամսիս 17-ից սկսած առ. ժ. 10-1, երեկ. 4-6: Ստորակսկայա 20²⁹:

Պատերազմի եւ խաղաղութեան հարցերուն հանդէպ բոլշեիկներու պաշտպանած տեսակէտերուն հակառակ կ'արտայայտուէր նաեւ արտասահմանի հնչակեան մամուլը, որոնց մէջ ամենահեղինակաւոր Օրիտասարդ Հայաստան կը գրէ:

Բոլշեիկների ամենամեծ յանցանքը, սոցիալիստական տեսակէտից, եղաւ Բրեստ-Լիթովսկի խաղաղութիւնը եւ ազգերի ինքնորոշման այն անիշխանական եւ անժամանակակից հասկացողութիւնը, որ նրանք իրականացնել ուզեցին՝ պարզապէս իրենց կուսակցական շահերից եւ տիրապետութիւնից մղուած:

... Բոլշեիկները ամենամեծ յետադիմական շարժումը կատարեց Հայաստանը Տաճկաստանին վերադարձնելու համաձայնութիւնը տալով եւ Ռուսաստանի բաղկացուցիչ ազգերից, ինքնորոշման հասկացողութեամբ, իրենց բախտին թողնելով նրանց, որոնք այդ բարձր սկզբունքը ո՛չ հասկանալու կարողութիւնը ունէին եւ ո՛չ էլ իրենց ազգային մշակոյթը դէպի այդ կէտն էր հասցրել:

... Այսպես, ուրեմն, ընդհանուր մարդկության շահի տեսակետից դեմոկրատական մի Ռուսաստանի գոյությունը բացարձակ անհրաժեշտություն է թե՛ այդ, եւ թե՛ Թուրանականության մեջքը կտորելու տեսակետից:

... Ռուսաստանը ներդաշնակող, ճիշդ իր պատմական հոսանքի առաջ կանգնեցնող միակ կուսակցությունը, միակ ծրագիրն ու ուժը, դա մեծշնչիկությունն է. մտիկ ապագան նրանն է: Ռուսաստանի մեջ իսկական սոցիալիզմը, զուտ Մարքսիզմը ներկայացնողը նա է³⁰:

ՄԻՂԿԻ վերոյիշեալ պատմական յայտարարութիւններն ու առած որոշումները յատկօրէն կ'ապացուցեն, որ երբ 1919ին, Մոսկուայի մէջ, կը գումարուի կոմիստերնի Հիմնադիր Համագումարը, ՄԻՂԿԻ իր տեսակէտերով եւ գործունէութեամբ կը գտնուէր կոմիստերնի ծնունդ տուող պատճառներուն ամբողջապէս հակառակ բեւեռին վրայ:

Հն.ԶԱԿԵԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ ԴԻՊԻ ԲՈՒՇԵՒԻՉՄ ԵՒ ԿՈՍՏՆՏԵՆՆ

ՄԻՂԿԻ խոր եւ ամբողջական շրջադարձը դէպի բոլշեւիկեան (զոր, Մարտ 1918էն ետք կարելի է նաեւ կոչել կոմունիստական) դիրքորոշումը բառացիօրէն տեղի կ'ունենայ ժողովրդապէս կոմիստերնի Հիմնադիր Համագումարի կայացման օրերուն:

Ճ. Մարտ 1918էն Թիֆլիսի մէջ գործող ՄԻՂԿԻ Կեդրոնական Վարչութիւնը կը հրատարակէ Գործաւոր Թերթը, որու խմբագրական աշխատանքներուն իր գործօն եւ աշխոթ մասնակցութիւնը կը բերէ Մարտ Նազարէկեանու Գործաւորի Թիւերուն մէջ լոյս տեսնող գաղափարական ընդթի թղթաւածները յաճախ կ'աւարտին Վեցցէ՝ Գ. Միջազգայնականը լողունգով:

Գործաւորի այս դիրքորոշումը խզում յառաջ կը բերէ Մայիս 1918էն ի վեր Վրաստանի մէջ իշխող մենշեւիկներուն հետ, եւ վերջիններս կը խափանեն Գործաւորի լոյս ընծայումը: ՄԻՂԿԻ անկախ Վրաստանի մէջ կը գառնայ ընդդիմադիր կուսակցութիւն:

1920ին արդէն, ՄԻՂԿԻ արեւելումը խորհրդային կ'ըլլայ ու Համակրող կոմիստերնի, ի բացառեալ պատերազմի հանդէպ բոլշեւիկներու պաշտպանած տեսակէտէն եւ Հայաստանի սահմաններուն առնչութեամբ Մոսկուայի քաղաքականութենէն:

1 Մայիս 1920ին, ՄԻՂԿԻ կը մասնակցի Երևանի ցոյցերուն եւ այդ առիթով բոլշեւիկներու կողմէ առաջնորդուած հակապետական կոյթներուն: Ան իր շարքերէն կու տայ մէկ զո՛ւ եւ երկու տասնեակ ձերբակալեալ: Իսկ Ալեքսանդրապոլի մէջ, հեյլակեան վաղեմի մարտական գործիչ Հայկ Ամատունի Հայաստանի Հանրապետութեան դաշնակցական կառավարութիւնը ժամանակաւորապէս տապալած բոլշեւիկեան Ռազմա-Յեղափոխական կոմիտէին կողմէ կը նշանակուի քաղաքի ոստիկանութեան պետ³¹:

Կոմիտեերնի եւ խորհրդային իշխանութեան Հանդէպ ՄԻՀԿի տածած ձեռնարկներն եւ Համակրական կեցուածքին արտայայտութիւններէն կ'ըլլայ ՄԻՀԿ պատուիրակութեան մը այցը Մոսկուա եւ Հայաստանի սահմաններուն կապակցութեամբ բանակցութիւնները Լենինի, ռազմական կոմիսար Լեւ Տրոցկիի եւ խորհրդային այլ պաշտօնատարներու հետ: ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութիւնը վերջիններու կը փոխանցէ 30 Սեպտեմբեր 1920 թուակիր «Տեղեկատուական Հաղորդում Կիլիկիան Հանրապետութեան Իրադարձութիւններուն, Արարատեան Հանրապետութեան Արդի Վիճակին Եւ Հայկական Սոցիալ-Դեմոկրատական շինչակ» կուսակցութեան Գործունէութեան Մասին» վերնագիրով ընդարձակ տեղեկագիր մը:

Աւելի քան մէկ ամիս Մոսկուա մնացած Հայկական պատուիրակութեան այցը կը Համընկնի նոյն նպատակով Մոսկուա գտնուող Լեւոն Շանթի գլխավորած Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան բանակցութիւններուն վերջին օրերուն: Բուլեւիկներու դաշնակից քեմալական Թուրքիոյ Հայաստանի վրայ կատարած յարձակման նախօրէին կատարուող այդ խօսակցութիւնները, ըստ երեւոյթին, սահուն չեն ընթանար: Այդ օրերուն Մոսկուա գտնուող խորհրդային պաշտօնատարներէն Ս. Լօրեյի (Սուրէն Երզնկեան) այցելութիւն կու տայ ՄԻՀԿ պատուիրակութեան անդամներէն իրեն վաղածանօթ Բ. Միւնիքին (Քաղաքացիական պատերազմի վերջինիս հիւրանոցային սենեակին մէջ, Լօրեյի կը վկայէ թէ Միւնիք կ'ապրէր Զղազրգիւ պահեր եւ բնաւ գոհ չէր վարուող բանակցութիւններէն²⁸ :

Այսուհանդերձ, ՄԻՀԿ Վրաստանի Խորհրդածողովը 11 Նոյեմբեր 1920ին կ'որոշէ ամբողջապէս որդեգրել խորհրդային արեւելում եւ այդ մասին քուէարկուած բանաձեւը կը հրապարակէ Հայերէն Նոր Թուրք (29 Նոյեմբեր) եւ ռուսերէն Կոմունիստ Ֆրոնտի (1 Դեկտեմբեր) թերթներուն մէջ: Կը ներկայացնենք այդ յայտարարութեան Նոր Թուրքին յղուած մեղենագիր Հայերէն օրինակը.

Ս.-Դ. Հնչ. Կուսակցութեան Վրաստանի Խորհրդածողովի Ընդունուած Բանաձեւերը Հայաստանի Վերաբերմամբ

Ս.-Դ. Հնչ. Կուս. Վրաստանի Խորհրդածողովը, մի շարք միտներում քննելով մերկայ տագնապայից եւ յուսախառ կացութիւնը եւ հայ ժողովրդի գլխին պայթած աղէտն ու նրա քաղաքային պատճառները, ամսիս 11-ի միտում ընդունեց հետեւեալ բանաձեւը.

1. Նկատելով, որ Հայաստանում տիրող մերկայ *ռեժիմը* եւ նրա ղեկավարները, շեղուելով յեղափոխական լուրջագներից, իրենց գործելակերպով եւ վարած քաղաքականութեամբ ոչ միայն չկարողացան փրկել կա-

ցութիւնը, այլև խաղալիք դառնալով Անտանտի իմպերիալիստական ամենակու ճգումներին, ահաւոր վտանգի ենթարկեցին հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական անկախութիւնը, այլև նրա ֆիզիքական գոյութիւնը:

2. Նկատելով, որ Հայաստանի պետական ներկայ ղեկավարները՝ հակառակ Անտանտի՝ հայ ժողովրդի վերաբերմամբ ցոյց տուած - թէ Հայաստանում եւ թէ Կիլիկիայում - շահաղիստական նենգաւոր քաղաքականութեան - որի գոհն է այսօր նոյն այդ ժողովուրդը - դարձեալ նրանից են ակնկալում այդ ժողովուրդի փրկութիւնն ու գոյութիւնը:

3. Նկատելով, որ Հայաստանի գիւղացիութիւնն ու քանուորութիւնը, չնայած յեղափոխութեան քաղաքի նուաճումներին եւ առաջադրած լուզումներին, բռնի կերպով մեկուսացնում են պետական կեանքից, որի միակ ղեկավարները պիտի հանդիսանային նրանք, համաձայն իրենց սոցիալական պայմանների եւ պատմական անբռնաբարելի իրատուների, եւ որոնք միայն ի վիճակի են իրագործելու հայ դեմոկրատիայի իսկական եւ լիակատար ազատագրութիւնը...

Ս.-Դ. Հնչ. Կուս. Վրաստանի Խորհրդաժողովը հայ ժողովրդին վերջնական կործանումից ազատելու եւ նրա ֆիզիքական գոյութիւնը եւ անկախութիւնը պաշտպանելու միակ ելքը եւ փրկութիւնը գտնում է համաձայն կուսակցութեան սկզբունքների ներկայ ոեժիմի եւ նրա ղեկավարների տապալման եւ գիւղացու-քանուորական-խորհրդային-իշխանութեան հաստատման մէջ Հայաստանում²⁴:

Հոկտեմբեր 1920ին, քեմալական թուրքոյ կողմէ Հայաստանի Հանրապետութեան վրայ կատուարած յարձակման ժամանակ եւս, ի տարբերութիւն բուլղեիկեան քարոզութեան, ՄԻՀԿը կող կ'ընէ թիկունք կենալ Հայկական բանակին Օրինակի Համար, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀԾԴ) Երեւանի Կեդրոնական Կոմիտէի, Սոցիալիստ Յեղափոխականներու Հայաստանի Կոմիտէի, Ժողովրդական Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի, Հայ Ռամկավար Կուսակցութեան Հայաստանի Խորհուրդի եւ ՄԻՀԿ Երեւանի Մասնաճիւղի Վարչութեան 20 Հոկտեմբեր 1920 թուակիր, Համատեղ կոչին մէջ կ'ըսուի-

Հայաստանի քաղաքացիներ,

Մոմենտի լրջութիւնը ստիպում է մեզ բոլորիս անելի մեծ չափերով զգաստանալ ու գոհաբերել:

Թշնամու վտանգը հրամայում է բոլոր զէնք կրելու ընդունակ քաղաքացիներին՝ հրապարակ գալ ... եւ խոյանալ դէպի գործակատը:

Միջկուսակցական Մարմինը յայտարարում է սրանով ընդհանուր գործադար բոլոր զէնք կրելու ընդունակ քաղաքացիներին:

Թողք կուսակցականները, համերաշխ ու ոգետրուած, կանգնած են իրենց դիրքերում:

Հայ քաղաքացիութիւնը եւս պիտի անխտիր ծառանայ թշնամու հանդէպ որպէս մի մարդ:

Ի զէն քաղաքացիներ, մի վերջին ճիգ եւս, յաղթանակը մերն է:

Թող կորչի արիւմարբու Քեմալը:

Կեցցէ ազատ հայրենիքի պանծալի քանակը³⁵:

Հայաստանի մէջ խորհրդային կարգերու Հաստատումէն ետք, ՄԴՀԿի կեցուածքը բնախական բանակներուն Հանդէպ կ'ըլլայ ժխտական, որ յատկօրէն կ'երեւի 11 Դեկտեմբեր 1920ին ՄԴՀԿ Երեւանի Մասնաճիւղի վարչութեան Հայաստանի Յեղափոխական կոմիտէին (Յեղկոմ) դրած նաժանկէն: Ըստ երեւոյթին նախապէս յղուած Հարցաշարի մը պատասխանը եղող նամակին մէջ կ'ըսուի թէ՛

Հայաստանում տեղի ունեցած յեղաշրջումը բերում է Ազատ Հայաստանում խորհրդային իրաւակարգ բանուորա-գիւղացիական կառավարութեան ոչ միայն հայ աշխատատրութեան՝ այլեւ մեր բոլոր տուժած, քայքայուած եւ դժբախտացած հարեւաններին, մի երեւոյթ որ բոլորում է կուսակցութեանս ընդգրկած սկզբունքից, ըստ որում կուսակցութիւնս ցերեմակն ուղջունում է կատարած յեղաշրջումը, տտեղծուած խորհրդային իշխանութիւնը Հայաստանում...

Նամակը կ'աւելցնէ՝

Ս. Դ. Հնչ. Կուսակցութեանս Հայաստանի խորհրդային իշխանութեան հերթական խնդիրների նկատմամբ՝ առաջնակարգ տեղն է տալիս Հայաստանի միջազգային արտաքին դրութեան:

Կուսակցութեանս համար ցանկալի է որ Խորհրդային Հայաստանը բոլոր վիճելի հողային կցումների առթիւ հարեւան պետութիւնների հետ՝ դիմէ խաղաղ միջոցների փոխադարձ համաձայնութեամբ եւ Խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ, այս հարցում, ներկայիս ամենակարեւոր տեղն են բռնում թիւրք-հայկական յարաբերութիւնները եւ վիճելի հարցերը:

Անգորայի կառավարութեան գործերը գրաւում են Հայաստանի սահմաններում, նկատի ունենալով որ ներկայումս Հայաստանում յայտարարուած է խորհրդային իրաւակարգ բանուորա-գիւղացիական կառավարութիւն, այլեւս ոչ մի պատճառ չկայ որ երբ Խորհրդ. Ռուսաստանի բարեկամ յայտարարող Մուստաֆա Քեմալի գործերը մնան Ռուսաստանի դաշնակից Խորհրդային Հայաստանի երկրամասերում, քանի, որ Մուստաֆա Քեմալը կարող է միանգամայն իրեն ազատ զգալ Երոպական իմպերիալիստների դէմ վարած կռուի ընթացքին: Խորհրդային Հայաստանի կողմից նրան չի սպառնում ոչ մի վտանգ՝ որովհետեւ Խորհրդ. Հայաստանը տապալելով անցեալ կառավարութիւնը ոչ մի իմպերիալիստական ձգտում չունի, մինչդեռ նրա գործերի հետացումը Հայաստանի

տանձաններից հնարատրություն պիտի տայ զբառուած վայրերի գաղթած ազգարճակչութեան վերադառնալ իր բնակավայր:

Սեր ցանկութիւնն է որ որջ Կովկասի պրովետարիատը Խորհրդ. Ռուսաստանի աջակցութեամբ համախմբուի նոյն դրօշակի տակ եւ յանուն պրովետարիատի դիկտատուրայի կազմի մի սերտ դաշնակցութիւն, որը հնարատրութիւն կու տայ իւրաքանչիւրին առանձնապէս եւ բոլորին ընդհանրապէս նուիրուելու խաղաղ եւ շինարար աշխատանքի²⁶:

Նորահաստատ խորհրդային իշխանութեան դէմ 1921ի Փետրուարեան Ապստամբութեան օրերուն եւս, երբ տակաւին Ալեքսանդրապոլի դաւառը կը գտնուէր քեմալական զօրքերու գրաւման տակ եւ թրքական սպառնալիքը չէր վերացած Հայաստանի վրայէն, ՄԻՀԿ Համաձայն կը գտնուի Հայկական բանակը զօրացնելու եւ անոր թիկունքը ազաւոյնելու Հայկական բանակին պարէն ազաւոյնելու եւ բարոյականը բարձրացնելու նպատակով, 26 Փետրուար 1921ին, Երեւանի մէջ կը կազմուի միջկուսակցական մարմին մը, բաղկացած վեց կուսակցութիւններէ՝ Ժողովրդական, ՀՅԴ, ՄԻՀԿ, Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական (սպեցիֆիկ), Սահմանադիր Ռամկավար եւ Սոցիալիստ Յեղափոխական²⁷:

Միւս կողմէ, 10 Յունուար 1921 թուակիր, թիւ 14 շրջաբերականով, Թիֆլիսի մէջ զործող ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ բոլոր շրջանները Երեւանի մէջ, 15 Յունիս 1921ին գումարելու կուսակցութեան Ը. Համագումարը, զիսկ մինչ այդ եթէ որեւէ անակնկալ դէպք արգելք Հանդիսանայ՝ Սօֆիայում (Բուլղարիա) դարձեալ նոյն օրին: Երջաբերականին մէջ նշուած օրակարգի 12 կէտերէն կրորդը էմիգրէր դէպի Խորհրդային Հայաստանն է, իսկ չորրորդը՝ «ԱՅ-րդ Ինտերնացիօնալին միանալու Հարցը: Երջաբերականի աւարտին, որպէս յետ-գրութեան, Կեդրոնական Վարչութիւնը կը նշէ թէ 1918ին Թիֆլիսի մէջ նախատեսուած Համագումարը չէ կայացած, որովհետեւ արտասահմանեան մասնաճիւղերը պէտք եղած արձագանգը չեն տուած եւ Կեդրոնը ստիպուած կը շարունակէ մնալ իր պաշտօնին վրայ, ըսակայն եթէ այս անգամ էլ սոյն կերպ վարուեն մեր արտասահմանի Մ-ճիւղերը, մենք ազատ Համարելով մեզ ապագայ պատասխանատուութիւններից, մեզ ենք վերազաւում մեր Հետագայ անելիքները²⁸: Նախատեսուած այս Համագումարը եւս իր օրին տեղի չ'ունենար՝ շրջանի ռազմա-քաղաքական անկայուն կացութեան պատճառով:

Փետրուար 1921ին, Վրաստանի մէջ եւս կը Հաստատուի խորհրդային իշխանութիւն: 26 Փետրուարին, Լոռիի Ձէզոք Գօտիի ապստամբ Հայկական ութերը, որոնց մէջ Ասատուր Ռոստոմեանի Հրամանատարութեամբ 400 հոգինոց հնչական խումբը՝ Կարմիր Բանակի ստորաբաժանումներուն Հետ, յաղթական կը մտնեն Թիֆլիս: Պարտուած նախկին մենչե-

իկեան իշխանութեան ընդդիմադիր եւ խորհրդային կարգերու հաստատման մասնակից ՄԻՀԿ որոշ ժամանակ մը կ'ունենայ գործունէութեան ազատութիւն եւ նկատելիորէն կը բարձրանայ անոր հեղինակութիւնը³⁶։

Եւանդաբան արք. միսիոնարներն մէջ, ինքնակամ քայլով մը, ՄԻՀԿ Թիֆլիսի Մասնակիցը ակումբի ցուցանակին կը գրէ Վ. Դ. (Կոմ.) Հնչակեան Կուսակցութիւնն եւ կը սկսի նոյն ձեւով ստորագրել կուսակցական պաշտօնաթուղթերը։ Այս քայլը կը վրդովէ կոմունիստները, որոնք փարձիք Ասոց թերթի թիւ 38ին մէջ կը հակադարձեն՝ Վարդգէս ստորագրութիւնը կրող յարձակողական թղթաւածով մը։ Այս առիթով Վ. Դ. (Կոմ.) Հնչ. Կուս. Թիֆլիսի Մ-դի Վարչութիւնը 18 Ապրիլին բողոքի նամակ մը կը յղէ Կարմիր Ասոցի խմբագրութեան։ Վարչութիւնը կը շնորհակալ լինի սկզբանէ Հնչակեան Կուսակցութեան «մարքսիստական» ծրագրի «Հետուսը» նպատակը յատկանշուած է «սոցիալիստական, աշխիքն կոմունիստական հասարակարգ հաստատելու միտման» ձգտումներով։ Այս կ'ընդգծուի թէ 1918ին՝ «Կարմիր Բանակի Թիֆլիս մտնելուց 3 տարի առաջ, երբ նոյնիսկ ոճիր էր համարուած բոլշեւիկներէ անունը տալը», Հնչակեանները գէշ գացած էին տիրող հոսանքին եւ 11 Ապրիլին ուսանելով եւ հայերէնով լոյս բնծայուած թուղթիկով մը հրապարակաւ ընդդիմացած էին Անդրկովկասը Ռուսաստանէն անջատելու եւ անկախ պետութիւն յայտարարելու որոշման։ Միաժամանակ, նամակին մէջ կը շնորհակալուի թէ դարձեալ 1918ին Հնչակեանները մերժած էին «մենչեւիկեան-դաշնակցական սեւ րլիկի առաջարկը՝ զինեալ դուրս գալ բոլշեւիկեան սպառնալիք յարձակման դէմ Թիֆլիսի վրայ» եւ թէ երբ նոյն օրերուն բոլշեւիկները կը պատրաստուէին յարձակում գործել քաղաքի կառավարիչի պալատին ու զինապահեստին վրայ, կոմունիստներն ու Հնչակեանները «համազործակցութեան միջոցներ ենք մտածում, մանաւանդ, որ յարմար առիթ կար, քանի որ բացի մեր տեղական ընկերներից, հազարի չափ զինուած ընկերներ էին եկել Սիմֆերապոլից եւ Հարաւային Ռուսաստանից»։ Նամակին մէջ յատկանշական են նաեւ հետեւեալ հատուածները.

Եթէ կոմունիզմի մասին գաղափար չունեցողները եւ ոտքից զլուխ նացիոնալիստներն ու հակաբոլշեւիկները մի վայրկեանում, մոզակամ գաւազանի գօրոքեամբ կոմունիստներ նմ հռչակում եւ զուրգոյրանքի արժանանում, մենք որ դեռ 35 տարի առաջ ընդգրկել ենք Կարլ Մարքսի եւ Ֆրիդրիխ Էնգելսի «Կոմունիստական Մանիֆեստը», իրաւունք չունենք այժմ այսպէս անուանուելու...

Մեր վերաբերմունքը դեպի 3-րդ Ինտերնացիոնալը «Մակայն ինպերիալիստները ինչ լուծում էլ, որ տալու լինեն, այդ լուծումը չի կարող մեր տեսակետից կատարեալ ազատագրութիւն լինել հայ ժողովրդի հարստահարուած զանգուածների համար։ Ուստի եւ մենք անխափան կը

շարունակենք դասակարգային կռուի անշեղ ուղին այն նոր մեթոդներով եւ կռուի ձեւերով, որ ցոյց կը տայ մեզ Մոսկուայում գումարած 3-րդ Ինտերնացիոնալը, որի դրօշակակիրն ենք 32 տարուց ի վեր: (1919 թ. Մարտի 24, «Գործատր» նօ. 1)

Բնորոշ է այն հանգամանքը, որ Ամերիկայի մեր կուսակցութեան օրգանը մէկ ամսով փակուում է կառավարութեան կողմից «Բուլշեիկեան» պրօպագանդա մղելու պատճառով, որպէս նաեւ «Երկիր» մեր կուս. օրգանը Կ. Պոլսում, նոյն հիմունքով Անտանտի կողմից...

1920 թ. Դեկտ. կայացել է Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնի Հնչ. Կուս. վարչ. անդամների ներկայացուցիչների խառը ժողովը, ուր քննել են միասին աշխատելու վերաբերեալ հարցերը «Բոլոր խնդիրների նկատմամբ լիակատար համաձայնութեան են եկել, բացի ժուլուելու խնդրից, որ համարուել է Ընդ. Հրատապ Ժողովի գործ եւ որը ի վիճակի կը լինի առաջիկայ Յունիսի 15-ին լուծում տալու, իբրեւ զերագոյն մարմին: Սոյն հարցի մասին Կոմ. Կուսակցութեան Կենտր. անդամները տուել են իրենց կատարեալ համաձայնութիւնը...

Կոմունիստ քառը գործ ենք անել (sic! - Ե.Ճ.) փակագծի մէջ ոչ այն պատճառով, որ կոմունիստները Վրաստան են մտել, այլ այն պարզ պատճառով, որ դա դեռ 35 տարի սրանից առաջ եղել է մեր դաւանանքի, մեր ծրագրի առանցքն ու հիմնաքարը: Եւ, որ էականն է «Մ. Դ.» բառերը առժամայէն պահպանելով կարծել չտանք, թէ մենք մենշեիկներ ենք կամ նրանց գործունէութեան եւ սկզբունքների ջատագով, որպիսի Վարդգէսի համար պատասխանատու ենք մեր Կուս. Գերագոյն Մարմինն այլ ոչ փորձով դատախազների եւ անկոչ խնամակալների...

Դեռ 1919թ. երբ Անդրկովկասում ոչ մի կուսակցութիւն քաջութիւն չուներ մենշեիկեան կառավարութեան օրով «Խորհրդային Իշխանութիւն» բառերն իսկ արտասանելու, բարձրագոյ յայտարարելիք (sic! - Ե.Ճ.) («Գործատր» նօ. 1 եւ այլ) «Կեցցէ սոցիալիստական յեղափոխութիւնը: Կեցցէ Խորհրդային Իշխանութիւնը: Կեցցէ 3-րդ Ինտերնացիոնալը»:

Կրկնում ենք նոյնը եւ այժմ, առանց սակայն հաճոյամալու ամենադոյզն (« - Ե.Ճ.) իսկ ցանկութիւն ունենալու նորելով կոմունիստներին եւ մողայի սիրահարներին...⁴⁶

Կոմունիստական Կուսակցութեանը խանդավառ Մշ-ՀԿի անուան մէջ փոփոխութիւն կատարելու այս փափաքը արդիւնքն էր պատմաբաղադրական կարգ մը իրադարձութիւնների: 1917ին Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակին, 1920ին Խորհրդային Հայաստանի զոյաւածան, Հայկական Հարցի ստացած նոր պատկերին, Հայ Ժողովուրդի Հանդէպ արեւմտեան տէրութիւններու շահադիտական վերաբերմունքին ամբողջա-

կան բացառապես, կոմիտեանի արձակած լուսնագնացներն Հանդէպ լաւատես փրարներունքին, եւն-:

Այդպիսի տրամադրութիւն միայն ՄԻՂԿԻ մօտ չէ որ երեսն կու գայ Այդ օրերուն, Հոկտեմբերեան Յեղափոխութեան ստեղծած խանդավառ մթնոլորտին մէջ, զէպի կոմունիստական կուսակցութիւնը բացուելու տրամադրութիւններ ի յայտ կու դան ալ ընկերավարական կուսակցութիւններու որոշ անդամներու եւ անկուսակցական մտաւորականութեան մօտ:

ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐՈՒ ԿՈՄԻՆՏԵՐՆԻՆ ԱՆԴԱՍԱԿԾԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

Նոյն օրերուն, սակայն, նորակազմ կոմիտեանը կ'առաջնորդուի կուսակցութիւններու մասին այն սկզբունքով, որ անոնցմէ իւրաքանչիւրը սոցիալական դասակարգի մը շահերու արտայայտիչն է: Պրոլետարիատի միակ իսկական ներկայացուցիչը կը համարուի կոմունիստական կուսակցութիւնը, եւ քանի որ խորհրդային կարգերու տակ հաստատուած էր պրոլետարիատի դիկտատուրա, ուստի ոչ-պրոլետարական, այսինքն՝ ոչ-կոմունիստական կուսակցութիւններու համար տեղ չկայ Արտասահմանեան կուսակցութիւններուն Հանդէպ, կոմիտեանը կը վերաբերի իր Բ. Խորհրդաժողովին (Յուլիս-Օգոստոս 1920) կողմէ վաւերացուած կանոնադրութեան Ձև յղուածներու տրամադրութիւններով, որոնց համաձայն, այն կուսակցութիւնը որ կը փափաքի անդամակցիլ կոմիտեանին, պէտք է արմատական վերափոխման ենթարկէ իր ծրագիրը եւ ամբողջապէս որդեգրէ կոմիտեանի ծրագիրն ու որոշումները ՅԹԷ, նոյն երկրէն կան արդօրինակ մի քանի կուսակցութիւններ, ապա անոնց համատեղ գոյութիւնը կը դառնայ անտրամաբանական եւ անոնք պէտք է ձուլուին մէկ եւ միակ կոմունիստական կուսակցութեան մէջ: Կոմիտեանին յարող իւրաքանչիւր կուսակցութիւն պէտք է այս օրակարգով համազումար հրաւիրէ եւ իր շարքերէն արտաքսէ բոլոր անոնք, որոնք կ'ընդդիմանան կանոնադրութեան Ձև տրամադրութիւններուն⁶:

Այդ օրերուն, կոմիտեանի համար քաղաքական կարեւոր խնդիր կը դառնան նաեւ Արեւելքի ժողովուրդներուն մօտ ծագելիք հակապաշտօնատիրական յեղափոխութիւնները, որոնք, ըստ կոմունիստական շրջանակներու մօտ առկայ մեկնաբանութեանց, Հոկտեմբերեան Յեղափոխութեան ազդեցութեան տակ պէտք է ստանային նոր վերելք եւ կրէին անոր ազդեցութիւնը⁷: Դէպի Արեւելք տանող կարեւոր ճամբաներէն մէկը, դարձեալ բուլղարիկեան տեսարաններու, կ'անցնէր Անդրկովկասէն: Այդ ճամբուն վրայ, յեղափոխութեան ալիքը պարտէր ներգրուել բոլոր Վազնիւս վաւերաբողները, իսկ պրոլետարիատի դիկտատուրան՝ ճգմել բոլոր

Հակառակորդները Բոլշևիկեան ռոզ մեդի Հեռ չէ՝ մեդի դէմ է՝ լուսնադին ականջալուր, ՄԻՂԿ եւ բոլոր միւս ոչ-կոմունիստական կուսակցութեանները կամ պէտք է միանալին յեղափոխութեան ակիբին կամ ճշմունչին պրոլետարիատի դիկտատուրայէն:

Այս պայմաններուն տակ, իր առաջին Երազիրին (1888) մէջ կոմունիստական, սոցիալական յեղափոխութիւնը Հիմնական նպատակ ընդունած՝ ՄԻՂԿի Համար, որ նաեւ ողջունած ու որոշ չափով ալ մասնակցած էր Վրաստանի, Հայաստանի եւ Միջին Ասիոյ՝ մէջ խորհրդային իշխանութեան Հաստատման պայքարներուն, ամբողջապէս անընական կը դառնար ընդդիմադիր, ընդդատակեալ կամ վտարանդի կուսակցութեան մը վերածուիլը Ուստի, ինքնակամ քայլերէ անդին, կը սկսին կատարուիլ ՄԻՂԿի եւ Կոմիտերիի միջեւ մերձեցում թառայանելու առաջին պաշտօնական փորձերը: 7 Նոյեմբեր 1922 թուակիր, թիւ 569 նամակով, ՄԻՂԿ Կեդրոնական Վարչութիւնը Ամբրիկայի Շրջանի Վարիչ Մարմինն կը Հաղորդէ թէ «Հնչակեան Կուսակցութիւնը Հայաստանում եւ Վրաստանում պաշտօնապէս կառավարութիւնների կողմից ճանաչուած է, լեզուայնացիայի ենթարկուած եւ ազատ գործելու Համար Հարկ եղած գրաւոր արտօնաթղթեր ստուած»: Նամակը կ'աւելցնէ.

Կենտրոնական Վարչութիւնս՝ Կովկասեան ընկերների համաձայնութեամբ՝ յատուկ մի ընդարձակ եւ հիմնաւորուած դեկլարացիայով դիմել է Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի 4-րդ Կօնգրէսին եւ իւր կողմից երկու ընկերների պատուիրակներ է նշանակել դեկլարացիայն մերկայացնելու եւ զեկուցումներ տալու համար: Մեր ցանկութիւնն է պաշտօնապէս ընդունուիլ Երրորդ Ինտերնացիոնալի մէջ, պահպանելով մեր Կուսակցութեան ինքնուրոյնութիւնը մի շարք պատճառներով, որոնց հետ համաձայն են նաեւ Կոմունիստ ընկերները՝:

Ըստ երեւոյթին, ՄԻՂԿ Կեդրոնական Վարչութիւնը կ'անապարէ իր եզրակացութեան մէջ, որովհետեւ ՄԻՂԿ Թիֆլիսի Վարչութեան 6 Մայիս 1922ի տարեկան Հաշուետուութեան մէջ կը կարգանք.

Վարչութեան նրկորդ հոգը եղել է մեր կուսակցութեան օրինակացման լեզուայնացիայի խնդիրը: Յաճախ խօսուել է ինչքան դժուարացնում էր մեր գործը եւ կասեցնում մեր ետանդը այն հանգամանքը որ մեզ պարզ չէր կատարութեան եւ կոմունիստական կուսակցութեան վերաբերմունքն ու դիրքը դէպի մեզ: Նախկին ընդհանուր ժողովը (գումարում՝ շուրջ տարի մը առաջ - Ե.Տ.) ընդգծում էր այդ հանգամանքը եւ նախկին վարչութեան անգործունէութեան պատճառը տեսնում «մեր կուսակցութեան իրաւական կացութեան անորոշութեան» մէջ: Վարչութիւնս իր յաճախակի դիմումներով Կենտրոնին եւ այս վերջինի ջանքերի շնորհիւ կարողացաւ վերջապէս ստանալ մեր կուսակցութեան օրինա-

կանացունը Վրաստանի սահմաններում: Այս օրինականացումը իդարկ է դնո յի սպառում մեր փոխյարարերութիւնների հարցը կոմմունիստական կուսակցութեան հետ: Այդ հարցը իր վերջնական լուծումը կստանայ երբ մեր կուսակցութեան բանակցութիւնները կոմմունիստական Ինտերնացիոնալի հետ մի որոշ դրութեան յանգեն⁴⁶:

Եւ իրօք, ՄԻՂԿ Կեղրոնական Վարչութիւնը, 1922ի վերջաւորութեան, դիմում կը կատարէ 5 Նոյեմբերին բացուած Կոմիտերիի Դ. Խորհրդաժողովին՝ փափաքելով իր տեղամակցութիւնը անոր Դիմումին կը կցուի նաեւ ՄԻՂԿի գործունէութեան մասին տեղեկագիր մը Գրեգոր Միլիեան, տեղրադառնալով այդ տեղեկագիրին կը գրէ՝

Հնչակեան Կեդր. Վարչութիւնը Երրորդ Միջազգայնականին մերկայացրած իր տեղեկագրի մէջ կուսակցութեան դրութիւնը շատ փայլուն էր մերկայացրել:

Ըստ այդ տեղեկագրի՝ Թուրքիայում Հնչակեան կուսակցական թերթեր «Երկիր», «Տարոս», «Նոր Սերունդ», «Պայքար»ը եւ այլ պաշտպանում են Խորհրդային Հանրապետութեան սկզբունքները եւ Հնչակեան կազմակերպութիւններն ունեն Թուրքիայում, Կիլիկիայում, Սուրիայում եւ սահմանակից վայրերում 18,000 անդամներ:

Ըստ նոյն տեղեկագրի դարձեալ Իրանում Հնչակեանները կիմնել են առաջին ընկերվարական թերթը՝ «Ձանգ», ապա եւ «Պայքար»ը հայերէն լեզուով եւ «Ֆիքր»ը պարսկերէն լեզուով եւ քաղկացած են 1500 հոգուց:

Սոյն տեղեկագրի մէջ ասուած էր նաեւ, որ Բալկանեան երկրներում (Բուլղարիա, Յունաստան եւ Ռումանիա) ապրում են 2,800 Հնչակեաններ, որոնք ունեն իրենց թերթը՝ «Բալկանեան Մամուլ», Եգիպտոսում ապրում են 1,700 Հնչակեաններ, որոնք հրատարակում են իրենց թերթը՝ «Ձարթոնք», Ֆրանսայում կան 200, իսկ Ամերիկայում՝ 12,000 Հնչակեաններ: Այս վերջին երկրում Հնչակեաններն ունեն 60 կազմակերպութիւններ եւ հրատարակում են «Երիտասարդ Հայաստան», «Կուսակ», «Վերածնութիւն» եւ «Սոցիալիստ Հայաստան» թերթերը, ունեն սեփական տպարան եւ հայերէն լեզուով գրքերի մեծ հրատարակութիւն⁴⁷:

Խորհրդաժողովէն ետք, Կոմիտերիի նախագահութեան հրահրով բանակցութիւններու Համար Մոսկուա կը մեկնի ՄԻՂԿ Կեղրոնական Վարչութեան առեւապետ Պապեան (Երկաթ), Վերադարձին, Պապեան իր հետ կը բերէ հետեւեալ փաստաթուղթը.

Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտե
Նախագահության Բանաձևը,- 5 Փետրուարի, 1923 թ.
Հայկական Սոց.-Դեմ. Հնչակեան Կուսակցության
Կոմունիստական Ինտերնացիոնալի Մէջ Մտնելու Հարցի Առթիւ

1. Հայկական Ս. Դ. Հնչ. Կուսակցութիւնը, լինելով Ռուսաստանի սոց.-
դեմոկրատիայի հեագոյն յեղափոխական գնդերից մէկը, իր գոյութեան
ամբողջ ընթացքում գործել է Ռուսաստանի Ս. Դ. Բանուորական Կու-
սակցութիւնից առանձնացած, ժամանակին իր շարքերում ընդունած լի-
նելով միջազգայնական տարրեր՝ Ռուսաստանում եւ ի մասնաւորի Հա-
յաստանում:

Նոյն առանձնացումը պահպանել է նաեւ Ռուսաստանի Կոմունիս-
տական Կուսակցութեան նկատմամբ: Անկախօրէ կերպով ընդգծելով իր
իրատուները հայկական պրոլետարիատի քացատիկ ներկայացուցչու-
թեան՝ Ռուսաստանի սահմաններում եւ Արտասահմանում, Հնչակեան
Կուսակցութիւնը, տերիտորեալ ոռոցիալ-դեմոկրատների միամալու
սկզբունքին, որոնք իրենց մէջ էին առնում բոլոր ազգութիւնների պրոլե-
տարիատի առաջապահ գունդը, հակադրում էր հայկական պրոլետար-
իատի միջազգային միացման սկզբունքը եւ այդ ուղղութեամբ ամբողջո-
վին անց էր կացնում միեւնոյն սկզբունքը ինչ որ «Բունտ»ը: Նոյնիսկ իր
մուտքը Կոմինտերնի մէջ Հնչակեան Կուսակցութիւնը իր յայտարարու-
թեան մէջ պայմանաւորում է նրանց միջազգային միացման ամբողջա-
կանութեամբ եւ ինքնավար դրութեան ճանաչմամբ: Այդ սկզբունքը Կո-
մինտերնի համար իհարկէ բոլորովին անընդունելի է: Այդ պատճառով
Կոմինտերնի նախագահութիւնը հնարաւոր է համարում հնչակեան
կազմակերպութիւնների մուտքը հետեւեալ պայմաններով.

ա) Հնչակեան Կուսակցութեան Ռուսաստանի կազմակերպութիւնը եւ
նրա Կենտրոնական Վարչութիւնը Թիֆլիսում պէտք է հրաժարուեն ի-
րենց միջազգային միութիւնից:

բ) Դիմել Հնչակեան բոլոր կազմակերպութիւններին առաջարկել ձուլուել
տերիտորիալ կոմունիստական կուսակցութեան մէջ:

գ) Դիմել Ռուս. Կոմ. Կուս.-եան Կենտրոնական Վարչութեան, խնդրելով
հնչակեան կազմակերպութեան Ռուսաստանի անդամների ընդունելու-
թիւնը Ռուս. Կոմ. Կուս.-եան մէջ:

դ) Հնչակեան Ռուսաստանի կազմակերպութիւնը չի կարող ընդունուել
Ռուս. Կոմ. Կուս.-եան մէջ հասարաբար, քացատութիւն կարող է արուել
ընդունելութեան պայմանների մասին համաձայնութիւն կայացնելուց յե-
տոյ միայն. պրոլետարական տարրերը ընդունում են միայն պերտմալ
(անհատական - Ե. Ռ.) կերպով:

2. Արտասահմանի հնչակեան կազմակերպութիւնների վերաբերեալ.

ա) Ամերիկայի հնչակեան կազմակերպութիւնը, որը հնչակ. պատուիրակութեան ներկայացրած ճիւղերի համաձայն, իր մէջ միացնում է մի քանի հազար քանուորներ՝ պէտք է ձուլուի համաամերիկեան «Լորկեր Պարտի» (Workers' Party - Ե.Ո.) կազմակերպութեան հետ: Դրա համար անհրաժեշտ է տանել երկար մախնական աշխատանք Հնչակեան Կուսակցութեան յեղափոխական տարրերի մուտքի համար ամերիկեան «Լորկեր Պարտի» մէջ, որը համակրում է Կոմիւնտերնիմ: Այդ մախնապատրաստութիւնից յետոյ հրաւիրել հնչակեան կազմակերպութեան համաամերիկեան համագումար վճռելու համար այդ կազմակերպութեան յեղափոխական տարրերի մուտքը «Լորկեր Պարտի» մէջ:

բ) Հնչակեան Կուսակցութեան բուլղարական կազմակերպութեան խնդրի որոշումը յանձնել Բուլղարական Կոմ. Կուս.-եան, իսկ Բալկանեան այլ երկրներում միեւնոյն աշխատանքը անցկացնել Կոմիւնտերնի ներկայացուցիչների միջոցով:

գ) Հնչ. Կուս.-եան Տանկատանի կազմակերպութեան վերաբերեալ Կոմիւնտերնի Գործադիր Կոմիտէի մախնագահութիւնը անժամանակ է զտնում Տանկ. Կոմիտիստ. Կուսակցութեան լիակատար ձուլումը Հնչակ. Կուս.-եան հետ: Առաջիկայում միջեւ Տանկ. Կոմ. Կուս.-եան հետ ձուլումը, Հնչ. Կուս.-ը համարում է կոմիտիստ. կուս.եան համակրող եւ իրրիւ այդպիսին ունենում է իր ներկայացուցիչը Տանկատանի Կոմ. Կուս.-եան Կենտրոնական Վարչութեան մէջ, մօտ մասնակցութիւն ունենալով Տանկ. Կոմ. Կուս.-եան աշխատանքների մէջ:

դ) Արեւելի միւս երկրներում (Պարսկաստան, Եգիպտոս) հնչակ. կազմակերպութիւնները պէտք է ամմիջապէս դիմեն Կոմիւնտերնի տեղական սեկցիաներին, խնդրելով մտցնել հնչակ. կազմակերպութիւնների անդամներին նոյն երկրի կոմ. կուս.-եան մէջ, այն պայմաններով որոնք կը մշակուեն փոխադարձ համաձայնութեամբ:

Կոմիտիստական Ինդերնացիոնալի Գործադիր Կոմիտէի
մախնագահութիւն

ստորագրութիւն (Օ. Վ. Կոմսիմեր)

Հնչ. Կ. Կ. Վ. ատենապետ (ստորագրութիւն)⁴⁸

Սոյն փաստաթուղթէն յտակօրէն կ'երելի, որ Հնչակեան Կուսակցութեան Կոմիւնտերնին միանալու փափաքը վերջինիս կողմէ վերածուած է Մի-Հիւր կոմունիստական կուսակցութեան տեղական բաժանմունքներուն մէջ լուծարելու նախագիծ-առաջարկի մը:

Սիր տրամադրութեան տակ կան այս փաստաթուղթի հարէն երեք տարրեր օրինակներ, մէկը՝ ձեռագիր, իսկ միւս երկուքը՝ տարրեր մեքե-նագրութիւններով: Երեք օրինակներուն տակ ալ Կոմիւնտերնի Գործադիր

կոմիտէին կողմէ ստորագրած է Օտտօ Վիլհելմ կուռաինէնը⁶⁰, իսկ ՄԻՂԿի ատենապետին անունը նշուած չէ:

Ըստ երեւոյթին, Պապեանի վերադարձը Մոսկուայէն եւ կոմիտեանի առած որոշումներուն ճնշարկումը ՄԻՂԿ Կեդրոնական Վարչութեան մէջ կը խլին բաւական ժամանակ: Ինչպէս տեսանք, Յ Մալխին, ՄԻՂԿ Թիֆլիսի Մասնաճիւղի Վարչութիւնը տակաւին կը սպասէր բանակցութեանց արդիւնքին: Միայն 10 Յուլիսին է, որ ՄԻՂԿ Կեդրոնական Վարչութիւնը շրջաբերականով մը շրջանափն վարիչ մարմիններուն պաշտօնապէս տեղեակ կը պահէ կոմիտեանի Հետ իր ունեցած յարաբերութեան եւ անոր արդիւնքին մասին:

Այս առիթով գրուած շրջաբերականն առաջին Հերթին աչքի կը զարնէ իր կրած ստորագրութիւններով: Սովորաբար, Կեդրոնական Վարչութեան պաշտօնաթուղիները կը ստորագրէին բացառապէս ատենապետն ու ատենադպիրը: Սակայն, ինչորոշ առարկայ շրջաբերականը կը կրէ Սրկաթի (ատենապետ), ՎաՀան Մարսեանի (ատենադպիր), Մարօ Նազարբէկեանի եւ Տաշիրի ստորագրութիւնները: Յստակ չեն թէ ինչու՝ Կեդրոնական Վարչութիւնը կը խախտէ նաժանկագրութեան իր ընթացիկ կարգը, երբ եւ ինչպէս Լազօն կը դադրի Կեդրոնական Վարչութեան անդամ ըլլալէ եւ անոր տեղ կը գրաւէ Մարօ Նազարբէկեանը: Հարցը աւելի կը կենտրոնի, երբ նկատի առնուի, որ 1906էն սկսեալ ՄԻՂԿի ամբողջականութիւնն ու ինքնուրոյնութիւնը պահպանելու տեսակէտէն, Մարօ եւ Լազօ կը գտնուէին հակառակ դիրքերու վրայ:

Զարմանալիօրէն, այս պարագան Հնչակեան պատմագիրներու կողմէ արժանի ուշադրութեան չ'արժանանար: Օրինակի համար, Արսէն Կիտուր, այդ մասին առանց բացատրութիւն տալու, կը գրէ՝ «1823 Փետրուար Եին Հնչակեան կուսակցութեան Կեդր. Վարչութեան անդամներն էին ատենապետ՝ Արշակ Բաբեան, ատենադպիր՝ ՎաՀան Մարսեան, անդամներ՝ Մարօ Նազարբէկեան եւ Տոքթ. Տաշիր»⁶¹: Հրանդ Գանգրուճի եւս նոյն ձևով կը գրէ՝ «Մարօ, Վ. Ղուկասեան, Ս. Տաշիր, Տոքթ. Պապեան Կեդրոնը կը ղեկավարէին»⁶²:

Մեր մօտ եղած տուեալներէն դատելով, միայն Եղիկեան իր օրին կ'անդրադառնայ այս հարցին ու կը Հետեցնէ թէ կանոնադրային կողմիս խախտումով մը Կեդրոնական Վարչութեան կազմին մէջ Մարտի անուան երեւումը եւ Լազօյի անուան բացակայութիւնը արդիւնքն էր բոլշևիկներու գործադրած ճնշումներուն՝ ղեկաւորելու համար ՄԻՂԿի ամբողջական ձուլումը իրենց մէջ⁶³:

Այս տեսակէտը կ'ամրապնդուի Մարտի կողմէ ուսներէնով գրուած ինքնակենսագրութեան Հետեւեալ հատուածով:

Չնայած այն բանին, որ ես վճռականապես կը բողոքէի Ա. Պապովի (Պապեանի - Ե.Ճ.) ուղեւորութեան դէմ, գտնելով որ ան ընդհանրապէս հեղինակատր եւ իրազեկ չէ Կուսակցութիւնը Կոմիտերնի առջեւ ներկայացնելու համար, չնայած իմ գրատր պատճառաբանումած բողոքին (եւ շատ հիւանդ էի եւ չկրցայ անձամբ խօսիլ իր հետ), յղում թիֆլիսի Վարչութեան (պատճէմ՝ անձամբ իրեն), մեկնեցաւ Մոսկուա: Ես սկզբունքօրէն դէմ էի անոր մեկնումին, որովհետեւ ան զնաց Կուսակցութեան ինքնուրոյն գոյութեան զաղափարը պաշտպանելու մտադրութեամբ եւ դէմ էր միաձուլման: Բարեբախտաբար, իրերու տրամաբանութիւնը անկի գորատր էր քան անոր մտադրութիւնը եւ ան հարկադրում էր հնազանդի Կոմիտերնի բացարձակապէս ճիշդ տեսակէտին²³:

Այսօր, սակայն, արխիւային տուեալները նոր յոյս կը սփռեն կատարուած կանոնադրային այդ խախտումին վրայ եւ երեւան կը բերեն ցարդ պատճազրութեան ուշադրութենէն վրեպած իրականութիւն մը Նորայտ տուեալները միաժամանակ կը բացատրեն այդ կարեւոր շրջաբերականին ուշացման, նամակադրային կարգի խախտման եւ կատարուած անուանափոխութեան պատճառները:

Փաստօրէն, գոյութիւն ունին նոյն վերնագիրն ու թուականը կրող իրերանման երկու շրջաբերականներ: Առաջինին տակ յարգուած է նամակադրութեան կարգը, իսկ երկրորդը կը կրէ վերոյիշեալ չորս ստորագրութիւնները: Երջաբերականներուն առաջին կէտը, իր բովանդակութեամբ նոյնն է՝ լեզուաոճական մանր տարբերութիւններով: Անոնք կը տարբերին իրենց երկրորդ կէտով: Երջաններ կը յղուի երկրորդ տարբերակը, իսկ առաջինը կը մնայ արխիւին մէջ:

Ստորեւ ամբողջութեամբ կու տանք արխիւին մէջ մնացած առաջին տարբերակը, ապա՝ երկրորդ տարբերակի փոփոխութեան ենթարկուած բաժինը:

Շրջաբերական Նամակ Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղերին

Միւրեւի ընկերներ,

Մրանից մօտ վեց ամիս առաջ Կենտրոնական Վարչութիւնըս մի ընդարձակ դեկլարացիա (յայտարարութիւն) ուղարկեց Սող Ինտերնացիոնալի IVդ կոնգրեսին, խնդրելով որ մեր կուսակցութեանը անդամ ընդունի իր մէջ, իբրեւ կոմունիստական աշխարհահայեացք եւ հիմնական դասամբը ունեցող կազմակերպութիւն:

Կոնգրեսի աշխատանքների ասարտումից յետոյ Սող Ինտերնացիոնալի Գ-որժաղիդ Կոմիտէից հետագիդ ստացանք, որով մի ներկայացու-

ցիչ էին խնդրել բանակցելու համար: Մենք ուղարկեցինք ընկ. Երկաթին Մոսկուա: Բանակցութիւնների մանրամասնութիւնները աւելորդ համարելով գրել Չեզ, ուղարկում ենք Կոմիտեերնի Գործադիր Կոմիտէի որոշումը մեր յայտարարութեան առիթով:

Ընկերներ, գիտէք, որ քաղաքական հանգամանքները 35 տարի սրանից առաջ բոլորովին այլ էին քան թէ այժմ: Այնպիսի հսկայական փոփոխութիւններ են տեղի ունեցել, որ աւելորդ է իսկ խօսել: Մեր կուսակցութեան հեռաւոր նպատակը՝ կոմունիստական յեղափոխութիւնն՝ սկսած է եւ կոմունիստական կարգերի տիրապետութիւնը իր թափի մէջ է... Մեր պաշտպանած ամենաառաջին հարցը՝ Տաճկահայերի խնդիրը՝ այսօր գերազանցապէս այլ պատկեր ունի, քան թէ 35 տարի սրանից առաջ: Ինչ լուծում էլ որ ստանայ այդ հարցը, նա չի լինիլ 45 տարի մեզ շարունակ խայտառակարար խարդ էլ յօշոտող Անտանտի ձեռքով, այլ միմիայն ու միմիայն Խորհրդային Ռուսաստանի ձեռնովութեամբ՝ մասնատրապէս եւ Կոմիտեերնի ջանքերով՝ ընդհանրապէս:

Անա թէ ինչու ամեն կերպ պէտք է աշխատենք մեր բաղդը կապել Կոմիտեերնի բաղդի հետ, մեր պաշտպանած ժողովրդի եւ դասակարգի բաղդերը ես նոյն կատակարութեան բաղդի հետ անպայմանօրէն: Ուստի ըստ այնմ լաւ քննեցէք սոյն ներփակ ուղարկւած որոշումը: Գումարեցէք կոմիտեերնի եթէ չբջանակների է վերաբերում խնդիրը, եւ ընդհանուր ժողովներ՝ եթէ մասնաճիւղերին է վերաբերում եւ Չեք պատասխանն ամեն մի կէտի վերաբերմամբ անյապաղ մեզ գրեցէք:

Գործը յոյժ շտապողական է: Ընդհանուր Պատգամատրական Ժողովի գումարումը բացարձակապէս անհնարին է ներկայ պայմաններում: Մեր 3-4 հրատերի փորձերը պերճախօս ապացոյցներ են այդ բանին: Հետեւաբար եւ այս միջոցին (Ռեֆերենդում) ենք դիմում, որպէսզի զէք այս միջոցով կարողանանք ընդհանուր կուսակցութեան կամքն իմանալ, այնպէս որ մեր պատասխանը Կոմունիստական Ինտերնացիոնալին կը լինի միանգամայն եւ պատասխանը եւ կարծիքը ընդհանուր Կուսակցութեան:

Ընկերական սիրալիր բարեմներով

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն
Թիֆլիս Ատենապետ՝ Երկաթ Ատենադպիր՝ Վ. Մարսեան⁵⁴

Երջարեհրականի երկրորդ տարբերակին մէջ, չորրորդ պարբերութեան ձեւ սկսեալ կը կարդանք Հետեւեալ, տարբեր շարադրանքը.

Անա թէ ինչո՞ւ ամեն կերպ պէտք է աշխատենք մեր բախտը կապել Կոմիտեերնի եւ Կոմմուն. Կուս. հետ մեր պաշտպանած ժողովրդի եւ դասակարգի բաղդն եւս նոյն խորհրդային կատակարութեան բաղդի հետ անպայմանօրէն: Ունինք այժմ մեր Խորհրդային, Սօցիալիստական Հայաստանը, որը մեր խոնավների իրականացումն է եւ նա կարող է ամեն

նայանք բախով եւ փայլուն կերպով իրագործել մեր փայտայած խղճերը: Ռուսաստանում, առանձնապէս, մեր գոյութիւնն իրրեւ ինքնուրոյն կուսակցութիւն կորցրել է քոլորովին խր նշանակութիւնը եւ raison d'être: Տասնեակ տարիներ առաջ կոմունիստական սկզբունքներ ընդգրկած մի կուսակցութիւն կարող է արդեօք ինքն իրեն անձնապայմանութեան մատնել, երբ այդ կոմունիստական իրաւակարգը հաստատուել է, եւ, համաձայն Կոմինդերնի 21 յօդուածի՝ նոյն սկզբունք դաւանող մի այլ կուսակցութիւն գոյութիւն ունենալ չի կարող: Ահա թէ ինչու, երբ նորերս Կոմինտերնից վերստին գրութիւն ստացանք միութեան խնդիրը անյապաղ կարգադրելու համար, համաձայն ներկիակեալ պայմանների, մենք, որ սկզբունքով վաղուց ընդունել էինք միութեան խնդիրը եւ միմիայն տեխնիքական հանգամանքների պատճառով ժամանակատրուապէս յետաձգել, բարոք համարեցինք ընդառաջ գնալ եւ պատուար կերպով մեր գաղափարակից մեծ կուսակցութեան յարիչ, առանց մացիօմալիստական ճղճիմ հաշիւները ուշադրութեան առնելու: Այս է պահանջում մեր կուսակցութեան պատիւը եւ 35 տարուայ ընդգրկած կոմունիստական վեհագոյն սկզբունքները:

Գրելով այն տողերը, յայտով ենք, որ արտասահմանեան մ-ճիւղերն էլ կը հետեւեն այն որոշման, վարելով Կոմինտերնի ներկիակեալ քանաձեռի համաձայն:

Թիֆլիսի Մ-դի ընդհանուր ժողովը միաձայն միացել է մեր որոշման: Ռուսաստանի մեր միւս կազմակերպութիւններն էլ ուրախութեամբ կը միանան, քանի որ այդ են պահանջում պրօլետարիատի գերագոյն շահերը եւ մեր կուսակցութեան հիմնական նպատակը:

	Ընկերական սիրալիր բարեմներով	
	Ի դիմաց Հնչակեան Կուս. Կեդրոն. Վարչութեան	
10 Յուլիս 1923թ.	Ատենադպիր	Ատենապետ
Թիֆլիս	Վ. Մարսեան	Երկաթ
Մարօ Նազարբեկեան		
Դոք. Ս. Տաշիր ⁵⁵		

Երկու շրջաբերականներուն միջև գոյութիւն ունեցող տեսակէտերուն տարբերութիւնը ակնհայտ է: Մինչ առաջին շրջաբերականը կը խօսի բախտը կոմինտերնին միացնելու մասին եւ այս հարցով կը դիմէ շրջաններուն, երկրորդը՝ կը խօսի բախտը նաեւ կոմունիստական կուսակցութեան հետ կապելու, վերջնականապէս անոր յարելու, ՄԻՂԿի գոյութեան իրաւունքը աւարտած նկատելու եւ մասնաճիւղերուն առջև ալլընտրանք չի ձգեր՝ քան հետեւիլ Թիֆլիսի Մասնաճիւղի օրինակին:

Եւ իրօք, տարօրինակ զուգադիպութեամբ մը, շրջաբերականի յղման օրը, 10 Յուլիս 1923ին, տեղի կ'ունենայ ՄԻՂԿի Թիֆլիսի Մասնաճիւղի ան-

դամական ժողովը, որ ամբողջութեամբ կը նուիրուի այս Հարցի զննարկման: Ժողովի ատենագրութենէն ի յայտ կու գայ, որ ՄՒՀԿ-Կոմիտեան յարաբերութեան եւ Մոսկուայի մէջ տեղի ունեցած բանակցութեանց մասին զեկուցած է Պապեան (Երկաթ), որ իբրեւ եզրակացութիւն յայտարարած է, որ

Կենտրոնական Կոմիտէն արդէն վճռել է իր վերջինց ցիստում միանալ եւ ձուլուել Կոմ. Կուսակցութեան հետ եւ այդ յայտնում է ոչ թէ իբր զեկուցում կամ խորհուրդ խնդրում, այլ, այդ Կենտրոնի վճիռն է եւ յայտնում է մեզ այդ ի կատարումն, եւ ով որ մեզ հետ է, պիտի միանայ այդ վճիռն եւ յուսով է, որ այդ վճիռը, որը չի թոյլ տայ եւ չի կարող դառնալ քննութեան առարկայ, միաձայն կ'ընդունին մեր բոլոր ընկերները, եթէ մենք ընդունում ենք կոմունիստական խոխալոզիան⁵⁵:

Պապեանի տուած զեկուցէն ի յայտ կու գայ նաեւ որ Մոսկուայի մէջ բանակցութիւնները սահուն չեն ընթանար: Կոմիտեանի Գործադիր Կոմիտէն կը ներկայացնէ մեր մէջընթաց բանաձեւը, զոր Պապեան կը մերժէ ստորագրել, առարկելով թէ նման փաստաթուղթի մը տակ ստորագրելու համար ան պէտք ունի բոլոր մասնաճիւղերուն հաւանութեան: Պապեանի Թիֆլիս վերադարձէն ետք, ՄՒՀԿ Կեդրոնական Վարչութեան կողմէ 8 Ապրիլին Կոմիտեանին կը յղուի նամակ մը, ուր կը բացատրուի թէ այդ նախազիծը զրկուած է հեշակեան բոլոր մասնաճիւղերուն եւ անոնցմէ կը սպասուին պատասխաններ: Կոմիտեանը իր 10 Մայիս թուակիր պատասխանին մէջ (որ ՄՒՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը ստանայ 3 Յունիսին) զարմանք կը յայտնէ թէ ինչու՞ ՄՒՀԿ Կեդրոնական Վարչութիւնը դիմած է այդ քայլին, երբ նախազիծը պատրաստուած է հեշակեան ներկայացուցիչին հետ: Պապեան 10 Յունիսի ժողովի մասնակիցներուն չլիջեցնում է որ այդ բառերը մի թիւրիմացութիւն էր, որ ինքը չէ մասնակցել այդ պրօեկտը մշակելուն⁵⁶:

Այս ատենագրութիւնը միաժամանակ կը բացատրէ թէ ինչու՞ Կոմիտեանի որոշման տակ չի նշուիր Պապեանի անունը⁵⁷: Ժողովին արձանագրութիւնը սակայն չի բացատրեր, թէ ինչու՞ ՄՒՀԿի ինքնուրոյնութիւնը պաշտպանելու մտադրութեամբ Մոսկուա մեկնած եւ հոն Կոմիտեանի որոշումին տակ ստորագրելէ հրաժարած Պապեան, քանի մը ամիս ետք, Թիֆլիսի անդամական ժողովին (նաեւ անկէ ետք), կը պաշտպանէ միաձուլման տեսակէտը եւ այն ալ արգիլելով շարքին Հարցի զննարկումը կատարել: Այդ բացատրութիւնը, որ ժամանակաշրջանի ընդհանուր մթնոլորտին համահունչ կը թուի ըլլալ, կը տրուի տարիներ անց, ՄՒՀԿ Կեդրոնական Վարչութենէն արտասահման անցած միակ անձին՝ Մարտեանի կողմէ, երբ վերջինս 1949ին Փարիզի մէջ իր հեշակեան ընկերներուն կը

պարզարանէ թէ այդ «չրջարերականը իրենք հրատարակած են Համայնավար կուսակցութեան ճնշումներուն տակ»⁶⁰ :

Կոմիտեերնի որոշումէն եւ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան շրջաբերականէն անկախ, այդ շրջանին, Կոմիտեերնը գաղափարականորէն Հարազատ կազմակերպութիւն մը նկատելու եւ կոմունիստական կուսակցութիւններուն հետ զործակցելու ընդհանուր տրամադրութիւն մը կը նշմարուի ՄԴՀԿ գրեթէ բոլոր շրջաններուն մօտ: Օրինակի համար, ՄԴՀԿ Յունաստանի Շրջանի Վարիչ Մարմինը 1923ի իր մայիսմէկեան թուուցիկի վերջաւորութեան արձակած լողունգներուն շարքին կը գրէ «Կեցցէ՛ Երրորդ Միջազգայնականը» եւ «Կեցցէ՛ Համայնավարութիւնը»⁶¹, նոյն տարին եւ նոյն առիթով Թեհրանի մասնաճեղքը իր հրատարակած թուուցիկի աւարտին կը գրէ. «Կեցցէ՛ Երրորդ Ինտերնացիօնալը»⁶²: Քանի մը ամիս առաջ, նոյն մասնաճեղքը, իր հրատարակած մէկ այլ յարտարարութեան վերջաւորութեան, տարբեր լողունգներու շարքին կը գրէր. «Կեցցէ՛ Համայնարհային Պրօլետարական Յեղափոխութեան հնոց կարմիր Մոսկուան»⁶³ :

ՀՆՁԱԿԵԱՆ-ԿՈՄՈՒՆԻՍՏ ԾԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՏԻ Մէջ ԵՒ ԱՏԼՈՒՐ

Կոմունիստական կուսակցութիւններուն հետ զործակցելու հնչակեան տրամադրութիւնները ամէնէն աւելի ներգործօն ազդեցութիւն կ'ունենան ԱՄՆի շրջանին վրայ: Եղիկեան կը դատէ.

Լեւինի եւ մրա ընկերների համար ամենաեղբարքի շրջանը Ամերիկան էր, ուր «12,000 Հնչակեաններ» էին ապրում, բաժանուած «60 կազմակերպութիւնների մէջ», տէր սեփական տպարանի եւ չորս թերթերի ու մեծածախ հրատարակչութեան, գրեթէ անլի ուժեղ ու անլի լա կազմակերպուած քան Ուղղորդա Փարթիւն, Երրորդ Միջազգայինի մասը կազմող այս կիսահրեական-կիսանեղրական կազմակերպութիւնը: Հնչակեանների միացումով Ուղղորդա Փարթիւն ոչ միայն երկու անգամ պիտի ուժեղանար, այլեւ տէր դառնար սեփական տպարանի եւ չորս թերթերի միանգամից⁶⁴:

Մինչ այդ, Սեպտեմբեր 1919ին, ձախ խմբաւորում մը, Ճօն Ռիտի գլխաւորութեամբ, կ'անջատուի Ամերիկայի Սոցիալիստական կուսակցութեան եւ կը հիմնէ Ամերիկայի Կոմունիստական Բանուորական կուսակցութիւնը: Նոյն ամսուն, ձախ սոցիալիստներու մէկ այլ խմբակ, Չարլզ Ռութենպերկի գլխաւորութեամբ, կը հիմնէ Ամերիկայի Կոմունիստական կուսակցութիւնը: Մայիս 1921ին, այս երկու կուսակցութիւնները կը միաձուլուին որպէս Ամերիկայի Կոմունիստական կուսակցութիւն եւ Դեկտեմբերին կը մտնեն օրինական պայմաններու մէջ գործող Բանուորական

Կուսակցութեան մէջ 1920ի կէսերէն, Ամերիկայի Կոմունիստական Կուսակցութիւնը որպէս կազմակերպչական կառույց կ'որդեգրէ «խզուական ֆեդերացիաներու» սկզբունքը: Կը ստեղծուին կուսակցութեան անդամները ազգային պատկանելիութեան հիման վրայ համախմբող 18 «խզուական ֆեդերացիաներ», երեւոյթ մը, որ եղած էր ՄԻՂԿԻ եւ ՌՄԴԲԻ միջեւ հիմնական տարակարծութիւններէն մին:

1921ի կէսերուն կը կազմուի նաեւ «Հայկական ֆեդերացիան», որ օրինական գետնի վրայ կը գործէ Հայ Բանուորական Միութիւն անուան տակ: 1922ի սկիզբը, շուրջ 380 հոգի, Մնար Մնարեանի գլխաւորութեամբ, կ'անջատուին ՀԵԴէն, կը կազմեն Հայ Աշխատաւորական ֆեդերացիան եւ յարարելութեան մէջ կը մտնեն Ամերիկայի Կոմունիստական Կուսակցութեան Հետ: Կարճ ժամանակ անց, Հայ Բանուորական Միութիւնն ու Հայ Աշխատաւորական ֆեդերացիան կը միաձուլուին ու կը հիմնեն օրինական ձեւով գործող Հայ Բանուորական Կուսակցութիւնը, որ կը դառնայ Ուորքըրզ Փարթիի «Հայկական ֆեդերացիան»:

Հնչական Կուսակցութիւնը Ուորքըրզ Փարթիի «Հայկական ֆեդերացիային» մէջ լուծելու աշխատանքը նախաձեռնողներէն կ'ըլլայ ՄԻՂԿԻ: Համազումարէն ետք բողոքներուն միացած Գրիգոր Վարդանեան, որ խորհրդային իշխանաւորներու օրհնանքով ստեղծուաց Հայաստանի Օգնութեան Կոմիտէի աւաքելութեամբ 1922ի վերջերը կը գտնուէր ԱՄՆ: 1920ին ստեղծուած եւ վարչականօրէն ՌԿԲԿ կեդրոնական ղեկավարութեան ենթակայ Հայաստանի Կոմունիստական (բողոքիներէ) Կուսակցութեան (ՀԿԲԿ) Կեդրոնական Կոմիտէին ներկայացուցած Վարդանեանի մէկ զեկուցագիրը նոր լույս կը սփռէ իրողութիւններուն վրայ:

Ամերիկայի Կոմ. Կուսի Կենտրոն. որոշեց անմիջապէս ինձ յատկացնել կուսակցական ճեքքին աշխատանքներին մասնաւոր հնչականներին միացման գործին...

Ընկերների մեծամասնութիւնը թէ Հայ եւ թէ Ամերիկացի համաձայնուեցին իմ կարծիքի հետ եւ այսպէսով, որոշեցին ինձ ուղարկել զանազան քաղաքներ արտաքննապէս Խորհրդային Հայաստանի տեխնիքական օգնութեան ընկերութեան մասնաճիւղեր կազմելու իսկ ներքնապէս Կոմունիստական Կրուպաներ կազմակերպելու...

Ինձ յաջողուեց Հնչական Կենտրոնից վերձնել (sic! - Ե.Ճ.) մի կարեւոր դոկմա, որը հրահանգում է բնդարձակ կերպով աշխատանքներ տանել իրենց մասնաճիւղի մէջ եւ միեւնոյն ժամանակ առաջարկում էր Հայաստանի Կոմ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէին եթէ հրահանգի մրանց գնալ եւ ձուլուել քանուորական կուսակցութեան մէջ իրենց պատրաստ էին անելու այդ...

Եւ դիմեցի Ամերիկայի Կոմ. Կուսակցութեան ընդհանուր կենտրոնին եւ այս աշխատանքների համար եւս տուեցի իմ տեղեկատուութիւն, որից յափազանց գոհ մնացին նրանք վճռեցին մի կերպ մի քիչ փող յատկացնել նորից ինձ շարունակել տալու այդ աշխատանքները...

Այդ ժամանակները Հնչակեանները իրենց Կենդանի կողմից ինձ դիմեցին, որ միջնորդեմ իրենց եւ Ամերիկայի Կենտրոնի միջեւ նրանց եւ Բանտորականներին միացում կատարելու համար...

Հնչակեանների հետ միութեան աշխատանքները եւս ստիպուած էի տանել երկու կուսակցութիւններից գաղտնի կերպով ի հարկէ ընդհանուր կենտրոնի հաւանութեամբ անմիջապէս պէտք զգացինք կազմել մի գաղտնի կրուպա երկու կուսակցութիւններից խառն, որի գործն էր տանել այդ աշխատանքները:

Այսպէս Բանտորականների կողմից վերցրեցինք ընկերներ Սննարեան եւ Ջարդարեան իսկ Հնչակեանների կողմից վերցրեցինք Նազարբէկեան եւ բժիշկ Տէր Բաղդասարեան վերջին երկուքը եւս գաղտնի կերպով անդամ գրուեցին Կոմ. Կուսակցութեան ընդհանուր Կենտրոնին հրահանգների տակ մնալու համար. այսպէս մեր աշխատանքները մենք ձեռնարկեցինք որոշեցինք, որ Նազարբէկեանն անմիջապէս ուղարկենք ՓոսՏոն (sic! - Ե.Ճ.) այնտեղ իրենց թերթ խմբագրի եւ իրեն խմբագրած թերթի առաջին համարում կոչ պէտք է անել Ամերիկայում արմատական կազմակերպութիւնների միացման. մոռացայ յիշեցնել, որ սոյն խմբագիրներ (անընթեռնելի քառ - Ե.Ճ.) ընտրուած էի Հայաստանի Կոմ. Կուսակցութեան կողմից. իսկ ընկ. Ռութներկ որպէս քարտուղար Ամերիկայի ընդհանուր կենտրոնի ընտրուած էր մեզ հետ Ամերիկայի Կոմ. Կուս. ի կողմից: Հնչակեանների դրած պայմանները միութեան համար հետեւեալներ են. նրանք առարկում էին, որ կարճ ժամանակուայ համար իրենց անուն եւ թերթի անուն պահուի պարզ այն պատճառով, որ կասկածներ կար ուրիշ խմբակ դուրս կը գար մոյն անուան (տա՛կ - Ե.Ճ.)⁶⁴:

Ըստ երեսփոխան, Եգալտնիք ձեռով տարուող այս աշխատանքները այդքան ալ անյայտ չէին, որովհետեւ ՄԻՀԿ Ամերիկայի Շրջանի Կեդրոնական Վարչութիւնը իր 6 Դեկտեմբեր 1922 թուակիր շրջաբերականին յիշել կը գրէ:

Սննք բոլորովին կը զգուշացնենք մեր ընկերները բոլոր անոնցմէ, որոնք կը մօտենան մեր շարքերում՝ զիրենք «գողմալու» համար: «Բանտորականները» այդ մեթոտներով մեր շարքերը քայքայել որոշած են իրենց Պտգմ. Ժողովին մէջ, որուն արձանագրութիւնը մեր տրամադրութեան տակ է: Այսպէս եղէր եւ մի՛ խաբուիք: Վստահեցէք ձեր ընտրած Մարմինին, օգնեցէք անոր եւ ձեր ամենակարեւոր արմատական փափաքները պիտի իրականացնէ ան՝⁶⁵:

Կոմիտեերնի 5 Փետրուար 1923ի որոշումէն ետք, դէպքերը կը ստանան ալ ընթացք: ՄԴՀԿ Ամերիկայի Երջանի Կեդրոնական Վարչութեան կողմէ 7 Յունիս 1923ին Հրապարակուած շրջաբերականին մէջ կ'ըսուի.

Մայիս 19-20 Մարմինս իր անդամներու մեծամասնութեամբ վարչական ու խորհրդակցական խիստ կարեւոր ժողով մը ունեցաւ Նիւ Եորքի մէջ, ուր ներկայ էին նախապէս ընկերներ՝ Ա. Նազարբէկ, Ս. Սապահ Գիլեան եւ Վ. Մորլեան: Կուսակցական ներքին եւ արտաքին շատ կենսական խնդիրներ, լրջօրէն ուսումնասիրուելէ եւ երկար խորհրդակցութիւններէ ետք, կարգ մը խիստ որոշումներ տրուեցան ու կարգադրութիւններ եղան, որոնց մէկ մասին գործադրութեան Մարմինս արդէն անմիջապէս ձեռնարկած է, իսկ միւս մասն ալ որպէս օրակարգի կարեւոր հարցերէն մին՝ յառաջիկայ Պատգ. Ժողովի նկատառութեան պիտի յանձնէ⁶⁶:

Յաջորդող ամիսներուն, ՄԴՀԿ Ամերիկայի Երջանի Կեդրոնական Վարչութեան եւ Ուորքըրզ Փարթիին միջեւ տեղի կ'ունենան պաշտօնական բանակցութիւններ: Յունիս 1923ին, անոնց միջեւ կը գոյանայ Համաձայնութիւն մը, ըստ որուն Հայ Բանուորական Կուսակցութիւնը կը ձուլուի ՄԴՀԿի մէջ, որ այսուհետեւ կը կոչուի Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական Ճետերացիա-Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւն՝ ու կը նկատուի Ուորքըրզ Փարթիի «Հայկական Ճետերացիան»: Երեսուցարջ Հայաստան թերթը կը դառնայ վերլինիս խոստովողը կը նշանակուի ժամանակաւոր ղեկավարութիւն մը՝ բաղկացած տասը անձերէ, Հինգը՝ Հնչակեան եւ Հինգը՝ բանուորական:

Գործակցութեան այս ձեւէն դժգոհ կը մնայ Մեսրեանի գլխաւորած խումբը, որ կը հեռանայ Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական Ճետերացիա-Ս. Դ. Հնչակեան Կուսակցութենէն, գալն գտնելով ոչ ամբողջապէս կոմունիստական: Մեսրեանի խմբի արարքը խիստ դատապարտեց Ամերիկեան Բանուորական Կուսակցութեան Գործկոմը, ինչպէս նաեւ Կոմիտեերնում արդ կուսակցութեան ներկայացուցիչ Ի. Ամտերը, որակելով դա իբրեւ աղանդաւորութիւն, Փրակցիոնականութիւն⁶⁷: Սղած տարակարծութիւնները Հարթելու Համար, 22-23 Փետրուար 1924ին Պոստոնի մէջ տեղի կ'ունենայ Համագումար մը, որուն կը մասնակցին 38 պատգամաւորներ, Հաւասարապէս՝ Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական Ճետերացիա-Ս. Դ. Հնչակեան Կուսակցութենէն եւ Հայ Բանուորական Կուսակցութենէն: Համագումարին կը մասնակցի նաեւ Ուորքըրզ Փարթիի գլխաւոր քարտուղար Ռոմենպերի, որուն առաջարկով ըորոշում է ընդունուում, ըստ որի վերոյիշեալ կուսակցութիւնները երեք ամսուայ ընթացքում պէտք է միաւորուէին⁶⁸: Ըստ պատմաբան Վարդան Աւետիսեանի,

«Բանուորակները» տակտիկական նկատառումներով համաձայնեցին հնչակեան ամուսնի ժամանակառաջ պահպանման, ինչպես նաև «Երիտասարդ Հայաստանը» կոմունիստական կազմակերպության օրգան դարձնելու հետ: Յետագայ իրադարձություններն զգալ տուին իրենց սխալը: Ազգայնական բեռնից չձերբազատուած մի շարք տարրեր, յատկապես հնչակեան պարագլուխները, բռնեցին իմտրիզների ու պատակառումների ուղին⁶⁹:

Համագործակցութեան այս փորձէն դժգոհ կը մնան նաև Խորհրդային Հասարակական Իշխանաւորները 12 Դեկտեմբեր 1923ին, ՀԿԲԿ Կեդրոնական Կոմիտէի Առաջին քարտուղար Աշոտ Յովհաննիսեան, Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական Ֆեդերացիայի Կեդրոնական Վարչութեան յղած նամակին մէջ, կը գրէ-

Ստեղծելով Հայ Բանուորական Ֆեդերացիա ամերիկահայ բանուորութեան երկու կազմակերպութիւնները, Հայ Բանուորական Կուսակցութիւնը եւ Հնչակեան Սոցիալ-Դեմոկրատները, ըստ երեւոյթին դեռ պահպանել են երբեմնի տարանջատ գոյութեան քանի մը աւտրիքտուները: Հայ Բանուորական Կուսակցութեան անուանը Հայկական Ֆեդերացիան տարօրինակ յանառութեամբ միացնում է լիկվիդացիայի ենթակայ Հնչակեան Սոց-Դեմ. Կուսակցութեան անունը: Ստացում է նոյնիսկ այնպիսի մի տպաւորութիւն, որ չէ թէ հնչակեան սոց-դեմ. կազմակերպութիւնն է ձուլում բանուորականի մէջ՝ այլ ընդհակառակը: Այսպէս՝ Հնչակեան հին պաշտօնաթերթը՝ Երիտասարդ Հայաստանը՝ Ֆեդերացիայի բերան դառնալով պահպանել է հին անունը եւ հրատարակչութեան 1903-1923 տարեթուերը:

Ենթադրելով համդերձ, որ նորակազմ միութեան այս պարագաները ժամանակառաջ բնոյթ ունեն, գտնում ենք, որ անգամ այդ պայմանով, անհանդուրժելի է Հայ Բանուորական Կուսակցութեան կողմից տրուած կոմպրոմիսը: Դա կարող է միայն մեծամեծ խաչընդոտներ ստեղծել ամերիկահայ բանուորական մասսաների հետեւողական կոմունիստական դաստիարակութեան եւ կազմակերպական արգաստոր աշխատանքի առաջ ու միաժամանակ հետո վանել մեզանից դաշնակցական այն բանուորներին որ յուսախաբուած են իրանց կուսակցութիւնից, բայց կը դժուարանան մտել դիմադարձ լինել դէպի մի կազմակերպութիւն, որ կրում է Հնչակեան անուն:

Կարող ենք պնդել, յիշատի, որ Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս ամբողջութիւն եւ իր կազմակերպութիւններն ու օրգաններ մասնատրապէս տասնեակ տարիների կեանք մաշելով հայ միջավայրում հետեւողական բանուորական, միջազգային կամ կոմունիստական վարքագիծ են տարել: Հնչակեան Կուսակցութիւնը եղել է մեզանում հարազատ ծնունդ մամր բուրժուազիայի, կիրառել է ազգայնական պրոպագանդի

ու խմբապետական գործելակերպի գրեթե նույն մեթոդները, որ ընտանի էին Դաշնակցության շարքերում: Հնչակեան «Սոցիալիզմը» առելի ռեալ յեղափոխական գործօն չէ եղել, քան դաշնակցական «Ընկերվարությունը»: Կարելի չէ զնգել պատմության երեսից այն փաստը, որ յարելով Սոց-Դեմոկրատիային հնչակեան մարմինները ենթարկուել են շարունակ մենշևիկեան դիրքափոխումներին: Կամ մոռացության տալ հնչակեանների գործօն մասնակցությունը իմպերիալիստական պատերազմին և Կիլիկիայի վերջին առանտիւրային: Հնարաւոր է անգիտանալ խստաւ, որ նոյնիսկ այսօրուայ մեր յարգելի քարեկամ Ա. Նազարբէկը տակաւին 1919 թ. իր ընկերներին ուղղած բաց նամակում ողջունում էր «Միացեալ Եւ Անկախ Հայաստանը» և ամենատար մակդիրներով որակում Կոմունիստական Կուսակցության գործն ու գաղափարաբանութիւնը: Հերքուած չէ մինչ այսօր այն փաստը, որ Փետրուարեան Հակայեղափոխութեան օրերին Երեւանի հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն են յայտնել Ս. Վրացեանին, ինչպէս նաեւ անհերքելի է այն, որ այսօր իսկ կան հնչակեան թերթեր ու կազմակերպութիւններ, որ ներհակում են Կոմունիստների արձակած միութեան լոզունգին և շարունակում են կապումս մնալ ազգայնական հին գաղափարաբանութեանն ու գործելակերպին:

Բոլոր այս փաստերը գալիս են վկայելու միայն, որ միութեան ակտով Բանուորական Կուսակցության շարքերն անցնող Ամերիկայի հնչակեան մասսաների քաղաքական անցեալն ու ներկան բաժանում են գաղափարական խոր մի վիճով, որ չի կարելի հետեւաբար կազմակերպական շարայարութիւն ստեղծել պատմականօրէն մահուան դատաւարութեամբ «Հնչակեանութեան» կամ «Սոցիալ-Դեմոկրատիայի» ու յեղափոխական ստեղծարար աշխատանքի կոչուած Բանուորական Կուսակցութեան միջեւ: Հնչակեան Կուսակցութեան կովկասեան կազմակերպութեան օրինակով պէտք է մէկ ընդմիջու վերագնահատել հնչակեան անցեալը, գիտակցել, որ բանուորական մասսաները կարող են կազմակերպուել ու դաստիարակուել եթէ ազատագրուեն ի սպառ հնչակեան և սոց-դեմ. տրադիցիաներից, մտնել անվերապահ միասնական կուսակցութեան շարքերը, առգորուեն անխառն ու հետեւողական կոմունիստական մտայնութեամբ, գործադրեն ըստ ամենայնի Ամերիկայի մայր կուսակցութեան և իր հայկական հատուածի աշխատանքի կոմկրետ պայմաններին համապատասխանող կոմունիստական տակտիկան:

Այս տեսակէտից նպատակայարմար ենք գտնում, որ նախնական ազիտացիոն աշխատանքից յետոյ, Կոմիւնիստների Գործադիր Կոմիտէի իրահանգի համաձայն, հրախրէք կարճ ժամանակամիջոցում նախկին հնչակեանների պատուիրակային ժողով ու առմիշտ ու հեղինակաւոր կերպով լուծէք կազմակերպական այս կարևոր խնդիրը: Փոյթ չէ եթէ

միացածների շարքերից այդ դեպքում հեռանալու լինեն հնչական այն-
պիսի տարրեր, որ չեն կամենայ որդեգրել կազմակերպչական խնդիրնե-
րում վերն արժարժած տեսակետը: Հասկացողությունների յտակություն
և կազմակերպչական մեթոդների պարզություն: Քաղաքական ներկայ
ծանրակշիռ վայրկեանին այդ է կարևորը ամենից առաջ և ամենից
շատ: Բանուորական մասսաների միության գաղափարը վերջ ի վերջոյ
կը շահի եթէ իրացնելու լինի այս պարզ ճշմարտությունը: Եւ մենք սիրում
ենք հաստատել, որ ամենից շատ և հեշտ կ'իրացնեն այդ ճշմարտությու-
նը հենց հնչական բանուորական մասսաները, որ հարազատ կուսակ-
ցութեան տասնեակ տարիների փորձից ծանօթ են ճակատագրական
այդ հետեւանքներին, որ ունեցել է Հայաստանի աշխատաւորութեան
համար ազգային մանր քուրժուական սոցիալիզմի գաղափարական
խայտարդեւտությունն ու կազմակերպչական անխտրականությունը:
Խրատ առնելով այդ փորձից և ղեկավար ունենալով Կոմունիստական
Կուսակցությունը Հայաստանի աշխատաւոր մասսաները մեր օրերին
կանգնում են գաղափարական և կազմակերպչական ինքնահաւաքման
դասակարգայնօրէն քիւրեղացած մի տեսակետի վրայ: Համոզուած ենք,
որ արտասահմանեան հայ բանուորությունը ևս կարելոյ այս խնդրում չի
յապաղի իր համերաշխությունը յայտնաբերել Հայաստանի աշխատաւո-
րութեանն ու իր ղեկավար կուսակցութեանը⁷⁰:

*Մինչ այս նամակը, Անդրկովկասեան Խորհրդային Հանրապետութիւն-
ներու Դաշնակցութեան ղեկավարներէն Ալեքսանդր Միասնիկեան Մար-
տակոջ թերթին մէջ կը գրէ թուով եւ յարձակողական թղուած մը, ուր
գտնելէ ետք թէ Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական
Ճեղքացիւ-Ս. Դ. Հնչական Կուսակցութիւն Հերկար անունը ոչինչ չի ա-
սուււմ, կ'եզրակացնէ:*

մեզ ամենեւին չի գրադեցնում և չի հրապուրում այնպիսի մի ֆիրմա,
ինչպիսին «Ս. Դ. Հնչական Կուսակցությունն է»: Այդպէս ուրեմն: Բան-
ւորները մտնում են իրենց կուսակցութեան մէջ դա Կոմունիստական
Կուսակցությունն է. Սօցիալ Դեմոկրատական վիժուածքն ու Հնչական
ամենթեթութիւնը կապ չունեն Կոմունիզմի հետ. վերջինս մասսաների ու-
նեցուածքն է, իսկ սեմակ սօցիալ-դեմոկրատիզմը չի կարող նշանաբան
ծառայել այն կուսակցութեան, որին նպատակն է Կոմունիզմը, ուսմու-
քը՝ Տեղափոխական Մարքսիզմը, իսկ գործը՝ մարտական քայլերը:

Արդ, հրաժարուենք սօցիալ-դեմոկրատիզմից ու հնչականությունից:
Կեցցէ Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայկական Ճեղք-
ացիւն, կեցցէ նրա օրգան «Բանուոր»: Մենք համոզուած ենք, որ «Ս.
Դ. Հնչական» մականունը, որպէս քիւրիմացութիւն մի շատ ժամանա-
կաւոր քիւրիմացութիւն կը լինի, կ'անցնի ու կը գնա⁷¹:

*Բանուորականներու աջ շտակովական նկատառումներէն՝ եւ ինչ
Հալաստանի իշխանաւորներուն պինդ կեցուածքներէն ետք, շատ ընակա-
նաբար, գոյացած համաձայութիւնը կը խզուի, եւ ՄԻՀԿ Ամերիկայի
Շրջանի կեդրոնական Վարիչ Մարմինը կը հրապարակէ թիւ 1 շրջաբերա-
կանը, ուր կ'ըսուի:*

Ա. Այս վեց ամսուայ ընթացքին Ուօրկըրս Պարտին երեւան դրաւ իր
մտքին միտումները, ան ջանաց մեր մասնաճիւղերը մկատել իր սեփա-
կան մասնաճիւղերը, քայքայել մեզ:

Շրջաբերականներով եւ հրապարակապէս եկաւ յայտարարելու որ
ինքը միտում ունի Կուսակցութեան ու թերթին անունը վերցնել:

Բ. Ան ամէն ուռնձգութիւններ լրաւ որպէսզի Շիքակոյի Կուսակցու-
թեան սեպտեմբեր 26-ին ու Պոսթոնի տարարանը գրաւէ եւ պահանջեց
մեզմէ իւրաքանչիւր անդամակցողէ 50 սէնթ, բացի այլեայլ տուրքերէ, ո-
րուն մէկ մասը արդէն ստացած է:

5. «Բանուորականները» դարձան Ուօրկըրս Պարտիի գործիք՝ մեզ
քայքայելու, մեր գործունէութիւնը անդամալուծելու տեսակետէն:

Շրջաբերականը կ'եզրակացնէ որ յետայսու՝

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի շրջանը
բոլորովին անկայս է եւ իր կուսակցական ամբողջական կազմը կը պահէ
եւ գործունէութիւնը կը շարունակէ համաձայն իր ընդհանուր ծրագրին:

Բ.- Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ոչ մի առնչու-
թիւն ունի անցեալ ներկայ կամ գալիք «Հայ Բանուորական» Կուսակցու-
թեան հետ:

Գ.- Երիտասարդ Հայաստանը յատուցիկաւ 16րդ թիւէն կը հրատա-
րակուի որպէս օրգան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
Ամերիկայի շրջանին:

Դ.- 38րդ Պատգմ. Ժողովէն ընտրուած անդամները պիտի շարունա-
կեն շրջանին կուսակցական գործերը վարել՝ Սոցիալ Դեմոկրատ
Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական Վարիչ Մարմին անունով:

Ե.- Պիտի գործածուի մեր կուսակցութեան կնիքն ու զինանշանը
(ընդգծումը փաստաթուղթինն է - Ե.Վ.):

*Շրջաբերականը կը հրահանգէ նաեւ շարքին՝ ոչ մէկ յարաբերութիւն
ունենալ Ուօրկըրս Փարթիին հետ՝*

*ՄԻՀԿ-Կոմունիստ (Կոմիւնիստի տեղական բաժանմունք) գործակցու-
թեան փորձեր տեղի կ'ունենան նաեւ ալ համայնքներէ ներս: Պունետս Այ-
րէսի մէջ, կը հրատարակուի Արմէնիստան Մամուլ շարաքաղաքի մը որ-
պէս օրգան «Ամերիկեան Բանուորական Կուսակցութեան Հայկական Ֆե-
տերապիայի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան»²⁸: ՄԻՀԿ
Պարսկաստանի Գործադիր Մարմինը 19 Դեկտեմբեր 1928ին կը յայտա-*

բարե թէ կուսակցութիւնը Պարսկաստանի մէջ պիտի գործէ իբրև կոմիստերնի բաժանմունք եւ պիտի հետեւի Երթոտասարգ Հայաստանի ուղեգիծին¹։

Ամերիկայի օրինակին նման, բոլոր վարչերուն մէջ ալ յառաջ կու գան տարակարծութիւններ եւ գործակցութեան այդ փորձերը երկար կեանք չեն ունենար։ 23 Մարտ 1924ին արդէն, ՄԴՀԿ Պուրկարիոյ Երջանի Գործադիր Կոմիտէն իր հրատարակած կոչերէն մէկուն աւարտին կու տայ Վեցցէ՛ ինքնուրոյն Հնչակեան կուսակցութիւնը լողունգը, որ պատմական այս շրջագիծը նկատի չառնելու պարագային կը հնչէ անիմաստ²։

ՄԴՀԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Դէպքերու այս ընթացքին զուգահեռ, Թիֆլիսի մէջ գործող ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը շարունակէ Ռուսաստանի եւ Անդրկովկասի մասնահիւղերը ՌԿ(Բ)Կի մէջ ձուլելու իր աշխատանքները։ 18 Նոյեմբեր 1923 թուակիր, թիւ 18 շրջաբերականով, Կեդրոնական Վարչութիւնը շարքերուն կը տեղեկացնէ թէ ՄԴՀԿ ՌԿ(Բ)Կի մէջ ձուլելու համար Մոսկուայի մէջ կազմուած է յանձնաժողով մը, որ եզուցակները պիտի ուղարկէ Թիֆլիս, ուր, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին մասնակցութեամբ, պիտի լուծուի այս հարցը։ Երջաբերականը ապա կը հրահանգէ․

1/- Խիստ դիպցիպլինա մտցնել ընկերների շարքերում։

2/- Ընդ տանել նրան Կոմունիստօրեն կրթելու եւ դաստիարակելու համար։

3/- Կուսակցութեան մէջ ընդունել միմիայն պրոլետարական տարրերին։

4/- Վերացնել անգրագիտութիւնը ընկերների մէջ³։

Աւելի ուշ, 2 Յունիս 1924 թուակիր, թիւ 20 շրջաբերականով, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը «Հնչակեան Կուս. Կովկասեան Մ.Տիւղերին Եւ Ընկերներին» կը յայտնէ թէ

Շրջանակներից մի քանիսը Եզիպտոս, Պարսկաստան եւ մասամբ Ամերիկա պաշտօնապէս հաւանութիւն տուին Կեմըր. Վարչ. բռնած դիրքին այդ հարցում եւ մեզ յայտնեցին իրենց կատարեալ համամտութիւնը, որը եւ վստահութիւն մերժնչեց մեզ շարունակելու ձուլման առթիւ մեր հետապնդումները⁴։

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան այս եզրայանգումը բացայտօրէն չի համապատասխաներ ամբողջական իրականութեան՝ ձիշդ է որ, այդ շրջանին, Հնչակեան շարքին մօտ կը գերակշռեն Կոմիստերնի հանդէպ համակրական արածադրութիւն եւ փափաք անոր հետ գործակցութեան կամ անոր անդամակցութեան։ Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ ՄԴՀԿ-Կոմիստերն յարաբերութեան սկիզբը կը համընկնի այս փա-

փառքին եւ կը վայելէ շրջաններուն Համաժողովները Սակայն, նոյն խանդավառութեամբ չ'ընկալուէր կուսակցութեան շրջանները կոմունիստական կուսակցութեան տեղական կազմակերպութիւններուն մէջ լուծելու կոմիտեաներն առաջարկը:

Այս երեւոյթին յաւաքոյն վկայութիւններէն է ՄԴՀԿ Ամերիկայի Շրջանի Կեդրոնական Վարչութեան 3 Յունիս 1924ի շրջաբերականը, ուր կ'ըսուի-

Դեռ այդքանը քաակամ չըլլալով «Կեդրոնական Վարչութիւնը» անոնց կանխատ ստանալու Մասնաճիւղերու եւ Երջաններու հաւանութիւնը՝ ինքնագլուխ դիմում կատարեց Երրորդ Միջազգայնականին. որու հետեւանքը եղաւ, ինչպէս գիտէք, Կուսակցութեանս լուծման որոշումը: Ուրախ ենք յայտնելու, որ Կուսակցութեանս ո՛չ մէկ Երջանը ընդունեց տրուած որոշումը, քնդիակատակը որոշեց պահել Կուսակցութեանս անբողականութիւնը⁷⁸:

Ըստ երեւոյթին, ձուլման աշխատանքները սահուն չին ընթանար նոյնիսկ Խորհրդային Միութեան տարածքին: ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան վերոյիշեալ շրջաբերականին մէջ, նշելէ ետք թէ ձուլման աշխատանքները կարգ մը անձեր կը փորձեն խոչընդոտել, կու տայ Տիգրան Գազանճեանի անունը, որ կրցած է Թիֆլիսի, Պաթումի, Սուխումի եւ Կրասնոտարի մասնաճիւղերուն մօտ այս գործընթացին դէմ ընդդիմադիր հոսանք ստեղծել⁷⁹: Գազանճեան, ՄԴՀԿ Պաթումի Ընդհանուր Անդամական Ժողովին, Ռկ(ը)Կ ներկայացուցիչներուն ներկայութեան, Հանդէս է դալիս պրովոկացիոն Հակակուսակցական եւ Հակայեղափոխական մի ճաւուռով, ինչպէս նաեւ Թիֆլիսի մէջ Վիւր մի քանի Համախոհների Հետ (զըլխատորպէս զոման Ժամանակ կուսակցութիւնից Հեռացումաների) գաղտագողի դաւադրական ժողովներ է գումարում նպատակ ունենալով քանդելու ձուլման գործը եւ վերականգնանելու իւր արատաւորուած անձը: ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ շարքերէն արտաքսել Գազանճեանը, զուծել Թիֆլիսի Մ-ճիւղը, նշանակել քննութիւն մի քանի խառնակիչ անձերի վերաբերեալ եւ անպահանջել ընդհանուր ժողով, իսկ մինչ այդ գրաւել կնիքը եւ թոյլ չտալ նրա գործածութիւնը անպատասխանատու անձերի կողմից⁸⁰:

Օղած փաստերէն պարզորոշ կ'երևի, որ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը գտնուի մասնաճիւղերը ինքնալուծարքի ենթարկելու կոմիտեաների որոշման եւ անոր ընդդիմացողներու ճնշումներուն միջև: Որպէս կը կամ ինքնարդարացում, ան յաճախ կը լիւեցնէ թէ ստորագրած չէ Կոմիտեաների որոշման տակ: Այս կապակցութեամբ, Կեդրոնական Վարչութիւնը շրջաններ կը յղէ շրջաբերական մը, ուր կ'ըսուի-

Կեդրոնական Վարչությունը 1918, 1921, 1922, 1923 և 1924 թուականներուն յատուկ շրջափոխականներով Ընդհանուր Պատգմ. Ժողով է հրապիրել, որոնց ժամանակին դժբաղդաբար չեն արձագանգել շրջանները: Այդ պատճառով Կոմիտեերնի հետ Կեդրոնը բանակցութիւններ վարելէ առաջ նախապէս խորհրդակցել է Անդրկովկասեան մեր կազմակերպութիւնների հետ (հրապիրում յատուկ Կոմֆէրանսների միջոցով), ունենալով արտասահմանի մի քանի շրջանների համաձայնութիւնը եւս (Եգիպտոս, Ամերիկա, Տաճկաստան, որոնց գրութիւնները գտնուում են Կեդրոնի արխիւում) եւ յենուելով արտասահմանի մեր կուսակցական մամուլի՝ («Երկիր», «Ջաճգ», «Երիտ. Հայաստան», «Բաղկանեան Մամուլ», «Սիւրիական Մամուլ») բռնած ընթացքի վրայ: Կոմիտեերնի ներկայացրած ընդարձակ դեկլարացիայում Կեդր. Վարչութիւնը փախար յայտնելով հանդերձ ընդունուիլ Երրորդ Միջազգայինի անդամ, միաժամանակ հիմնադրուած պահանջք է դրել որ Հնչակեան Կուսակցութեան իրատունը տրուի անպայման պահել իր անունը եւ կազմակերպական սիւտետնը, մասնադրապէս արտասահմանի մէջ: Կեդրոնական Վարչութիւնը երբեք չի յայտարարել Կուսակցութիւնը լուծուած, եւ ասիկա երկու հիմնական պատճառներով: Ա.- որ Կուսակցութեան լուծման իրատունը Ընդհ. Պատգ. Ժողովին է վերապահուած, Բ.- որ Կուսակցութեան գոյութեան խարխիւր - ՏԱՃԿԱՀԱՅ ԴԱՏԸ - դեռ կը մնայ անլուծելի, պարագայ մը որ Կեդրոնը Կոմիտեերնի հետ ունեցած բանակցութիւնների ընթացքում քանիցս շեշտած է:

Շրջափոխականը կ'անդրադառնայ նաեւ կուսակցութիւնը լուծուած հռչակող կեղծ յայտարարութեան մը եւ զանիկա կ'որակէ Կալազիրներու» կողմէ խաղ մը,

որի դէմ Կեդրոնական Վարչութիւնը խստիւ բողոքեց, աշխատեցաւ հրապարակաւ միեւնոյն քերթում մի հերքում տալ, քայց (կոմունիստ գործիչ Ասքանազ - Ե. Ճ.) Մոսկուայէն եւ իր ընկերները հակառակեցան, մերժեցին հրատարակել, վասնզի իրանք եւս Հնչակեան անջատ գոյութեան չէին կարող հանդուրժել, մանաւանդ Անոր վայելած ժողովրդականութեան, որ ձեռք էր բերել Անդրկովկասի մէջ Խորհրդային իրաւակարգի հաստատման օրերին⁶¹:

ՄԴՀԿ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Այս միջոցին, նոյնանման իրավիճակ կը տիրէ նաեւ ՄԴՀԿ Երեւանի մասնաճիւղին մօտ: Հոս եւս, Կոմիտեերնի եւ ՀԿ(Բ)Կ ջանքերն ու ճնշումները կ'ուղղուին դէպի Հնչակեան Կուսակցութեան լուծարքը, սակայն նախընտրաբար՝ վերջինիս ցանկութեամբ: Այդ միտումը յատկօրէն կ'ե-

րեւի ՄԴՀԿ Երեւանի Վարչութեան 21 Յուլիս 1924ի նիստի քաղուածքէն, ուր կ'ըսուի-

1. Համաձայն սոյն տարուայ Ռ.Կ.Կ. Կենտկոմի Յունիսի 19-ի եւ Անդրերկնի Յուլիսի 9-ի որոշումների Հնչակեան Կուսակցութեան Երեւանի մասնաճիւղը ենթարկել լիկվիդացիայի եւ նրա անդամների անկետային ցուցակը ուղարկել ի տնօրինութիւն Հայաստանի Կ.Կ. Կենտրոնական Կոմիտէին:

2. Հ.Կ.Կ. Կենտրոնական Կոմիտէի թղթաւթեանք եւ գիտութեանք Հնչակեան Կուսակցութեան Երեւանի Մասնաճիւղը մասնակցում է Մեպտեմբեր 28-ին Յունաստանի Աթէնք քաղաքում կայանալիք հնչակեան համագումարին տալով իր ներկայացուցիչը, որը ի մօտս ծանօթ լինելով Հայաստանի անց ու դարձին եւ խորհրդային իրաւակարգին կարող է համագումարում նպաստել Հնչակի արագ լիկվիդացիային եւ հնչակեան ընկերների կոմմունիստական կուսակցութեան շարքերը անցնելուն⁶²:

ՄԴՀԿ Երեւանի Մասնաճիւղին համար ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ 12 Սեպտեմբերին գումարուած Ընդհանուր Անգամական Ժողովը Երեւանի Վարչութիւնը ՀԿԿԿ Կեդրոնական Կոմիտէին կը յղէ այդ ժողովէն բխած հետեւեալ գրութիւնը.

Հնչակեան Կուսակցութեան Երեւանի մասնաճիւղի վարչութիւնը գրութեանս հետ ուղարկում է Երեւանի մասնաճիւղի ղեկարացիան, որը դուրս է քերտած ամսոյս 12-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովում ի պատասխան ձեզնից ստացած No. 293/ս գրութեան երկրորդ կէտի⁶³:

Ինչ կը վերաբերի ժողովէն բխած յայտարարութեան, ապա, մեր տրամադրութեան տակ կը գտնուին նոյն հանգամանքը կրող չորս յայտարարութիւններ, որոնք իրենց ընդհանուր եզրակացութեան մէջ իրերանման են, բայց կը տարբերին իրենց շարադասութեամբ եւ նրբորանգներով: Ստորեւ կու տանք անոնցմէ մէկը՝ ամբողջութեամբ.

Դիկլարացիա Հնչակեան Կուսակցութեան Երեւանի Մասնաճիւղի Երեւանի մասնաճիւղը ենթարկում է լիկվիդացիայի, նրա անդամները անցնում են կոմ-կուսակցութեան շարքերը հետեւեալ հիմունքներից ստիպուած.-

1. Յետադարձ հայեացք գցելով մօտ չորս տասնեակ տարիների Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան վրայ, մենք գտնում ենք, որ նա իր գործունէութեամբ ամբողջ ժամանակ, իսկ ծրագրով մինչեւ 1903 թիւը, եղել է աւելի շուտ ազգային ռոմանտիկ հոդի վրայ կանգնած եւ քելուզ յաճախ իրանից ներկայացրել է դիմադիր ոյժ հայ իրակամութեան մէջ դէպի Դաշնակցութիւնը, սակայն կռուի ժամանակ իր տակտիկայով շատ քիչ է տարբերուել Դաշնակցութիւնից:

2. 1903 թ. Հնչակեան Կուսակցութիւնը աշխատել է իր գործունէութիւնը կենտրոնացնել դասակարգային կռուի շուրջը՝ միջազգային ոգով տարիների ըմբացքում հրատարակած թռուցիկները, նրա կողմից առաջ քերած բանտարական կազմակերպութիւնները, վերջին տարիներում նրա թռնած գործունէութեան ուղեգիծը, գաղութներում նրա տարած քաղաքականութիւնը գալիս են այդ ապացուցելու:

Սակայն Հնչակեանների փոքրամասնութիւնը համաշխարհային մասշտաբի դիմաց, հայ իրականութեան քացառիկ դրութիւնը, ինպերիալիստական պատերազմը, դաշնակցականների տիրապետութիւնը, հնչակեանների գործունէութիւնը դժուարացրին, իսկ Հայաստանում հնչակեանները ակամայից անգործութեան մատուցեցին ասպարէզ մետուելով մերթ ընդ մերթ իրանց բողոքներով ընդդէմ Դաշնակցութեան ոտնձգութիւնների և նեղ շովինիստական հակամտերի:

Հնչակեանների իղձը ու փառիակը (sic! - Ե.Ճ.) եղել է կոմունիստական իրաւակարգերի կիրառումը մեր կեանքի մէջ, որը այսօր իրականացած ենք տեսնում:

3. Հնչակեան Կուսակցութիւնը այսու հետեւ, երբ դասակարգային կռիւլ իր լայն և ցանկալի ծաւալն է ստացել եւ 3-րդ Ինտերնացիոնալը կանգնած է համաշխարհային յեղաշրջման շնքին, բոլորովին կորցրել է իր նշանակութիւնը մինչեւ անգամ հայ իրականութեան համար, ապա ուրեմն հասել է ժամը նրան լիկվիդացիայի ենթարկելու, իսկ նրա անդամներից նրանց, որոնք կանգնած են դասակարգային կռուի ռեալ ուղղութեան տեսակէտի վրայ, շտապել անցնելու Կոմկուսի շարքերը:

4. Մենք Երեւանի մասնաճիւղի անդամներս վերջին յեղաշրջումների տարիներում համոզուած էինք եւ ներկայիս էլ մեր համոզումները, գործնականում անց ու դարձին ակամատես եւ մասնակից լինելով, աւելի խորացաւ, որ միակ կուսակցութիւնը, որը եկել է կատարելու իսկական յեղափոխութիւնը, հաստատելու բանտորա-գիւղացիական դիկտատուրան, վերջ տալու բոլոր շահագործումներին, հարթելու ճանապարհը դէպի կոմունիստական ցանկալի իրաւակարգերը, դա է Կոմունիստական Կուսակցութիւնը:

Ահա թէ ինչն է հարկադրել Երեւանի մասնաճիւղին լիկվիդացիայի ենթարկելու կազմակերպութիւնը:

Կեցցէ Համաշխարհային Մեծ Յեղափոխութիւնը:

Կեցցէ Պրոլետարիատի Յարթմանը:

Կեցցէ 3-դ Ինտերնացիոնալը:

Կեցցէ Կոմունիստական Կուսակցութիւնը:

Ժողովի Նախագահ՝ Մ. Թապաղեան
Քարտուղար՝ Ա. Խանճեան¹⁴

**ՄԻՂԿ Ը. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՒ ՀՆԶԱԿԵԱՆ-ԿՈՍՒՆՏԵՐՆ
ՅԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոկտեմբեր 1924ին, Աթէնքի մէջ տեղի կ'ունենայ երկար սպասուած ՄԻՂԿ Ը. Համազումարը, «Համաձայն Ամերիկայի Երջանի 39րդ Պատգ. Ժողովի կամքին ու քոյր Երջաններու բացարձակ մեծամասնութեան բաղձանքին»¹:

Հայաստանի, Անդրկովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերը կը բացակային Համազումարէն: Կը բացակայի նաեւ Թիֆլիսի մէջ գործող Կեդրոնական Վարչութեան կազմը: Այդ բացակայութիւնը չկամութեան կամ պատահականութեան արդիւնք չէր: Ինչպէս տեսանք, ՄԻՂԿ Երեւանի Մասնաճիւղի Վարչութեան Ձ. Յուլիսի նիստի քաղուածքէն, մասնաճիւղը փափաք կը յայտնէր մասնակցել ՄԻՂԿ Հերթական Համազումարին: Նոյն փափաքը կայ նաեւ ՄԻՂԿ Երեւանի Մասնաճիւղի 16 Սեպտեմբեր 1924ի Ընդհանուր Ժողովի արձանագրութեան մէջ, որուն առաջին կէտին մէջ կ'ըսուի-

Երեւանից ուղարկել երկու ընկեր, որոնք կանգնած լինեն անպայման խորհրդային իրաւակարգերի տեսակետի վրայ, պատրաստուած, ծանօթ կուսակցութիւնների եւ հասանքների պատմութեան եւ մեզ հետ պատահած անց ու դարձի հետ, որպէսզի նրանց վրայ դրած պարտականութիւնները ի կատար ածուի յաջողութեամբ»²:

Թիֆլիսի մէջ գործող ՄԻՂԿ Կեդրոնական Վարչութիւնը եւս, իր շրջաբերականներուն մէջ, յանախ կ'արտայայտուի Հերթական Համազումարը փութացնելու մասին: Աւելին, 10 Յունուար 1921 թուակիր իր թիւ 16 շրջաբերականին մէջ, Կեդրոնական Վարչութիւնը Համազումարի Համար որպէս յարմար վայր կը նշէ Երեւանը, «Իսկ մինչ այդ եթէ որեւէ անակնկալ դէպք արդեւք Հանդիսանայ՝ Սօֆիայում (Քուզարիա) դարձեալ նոյն օրին»³: Ուրեմն, բացառուած չէ, որ այդ բացակայութիւններուն պատճառը խորհրդային իշխանութիւններուն կողմէ դրուած արգելքները ըլլան:

Համազումարէն հոգ, Խորհրդային Միութեան տարածքին եւ արտասահմանի մէջ գտնուող մասնաճիւղերուն միջեւ կուսակցական պաշտօնական կապ կը դադրի գոյութիւն ունենալէ: Ինչ կը վերաբերի առաջիններուն գործունէութեան վերջնական դադարեցման ճշգրիտ թուականին, ապա այդ մասին պատմական տուեալները ժայտ են: Վերջերս, Հայաստանի մէջ ձեռք բերուած խմբանկար մը յաւելեալ լոյս կը սփռէ այդ հարցին վրայ: Այդ լուսանկարին կեդրոնը նստած է Մարօ Նազարբէկեան՝ իր շուրջ ունենալով ութը Հնչակեան գործիչներ: Նկարին տակ, ձեռագիրով գրուած է. «Խորհրդային երկրների Հնչակեան կազմակերպութեան Ժամանակաւոր գործադիր կոմիտէ, 1925 թ. Նոյեմբերի 18-ին արձակուած»:

Բնական է, որ «արձակուած» բառը պէտք է հասկնայ «զործէ դադրած» խնամտով: Սակայն, նոյն ձեռագիրը կ'աւելցնէ. «Նկարուած Ձ1 Մարտի 1928 թ.»⁵⁰: Հաւանաբար, 18 Նոյեմբեր 1925-Ձ1 Մարտ 1928 փամանակաշրջանը պէտք է բնորոշել խորհրդային երկրէն ՄԴՀԿի վերջնական «արձակման» համար:

ՄԴՀԿ Ը. Համազումարը մանրամասնութեամբ կը քննարկէ Կեղրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ Կոմիտեերնի հետ սկսած յարաբերութիւնները եւ անոնց անդրադարձը ներկուսակցական կեանքին վրայ. «Ժողովը բուռն կերպով կը դատաւարտէ Գ. Օղիկեանը: Նազարէկի խիստ ձախակողմեան դիրք կը քննադատէ եւ վերապահ կը գտնուի իր հանդէպ: Կը քննադատուի նաեւ Սապահ Գիւլեան»⁵¹, եւ կ'որոշէ նորընտիր Կեղրոնական Վարչութեան ատենապետ Սեդրակ Քարեանին եւ Հեյաֆի խմբագիր Սապահ Գիւլեանին յանձնարարել Կոմիտեերնի հետ բանակցութիւններու վերսկսումը: Համազումարը կ'որոշէ անվերապահ համակրողի դիրք որդեգրել Երրորդ Ինտերնացիոնալին հանդէպ: Այս կապակցութեամբ քուէարկուած բանաձեւը կ'եղբակցնէ.

Նկատի ունենալով գաղութներու հայ աշխատատրութիւնը՝ որպէս ամբողջութիւն, անդնկակար չձգելու եւ ամոնց մէջ՝ ազգայնական կուսակցութիւններու կողմէ, Խ. Հայաստանի դէմ ըլլալիք ձեռնարկներու խնդրումներուն դէմ արգելք համդիսանալու անհրաժեշտութիւնը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը կը պահէ իր հաւաքական կազմն ու գոյութիւնը եւ ազգամիջեան կազմակերպչական դրութիւնը: Ան՝ կը գործէ որնւէ երկրի մէջ լեկալ գեւոնի վրայ եւ իր գործունէութիւնը կը կեդրոնացնէ հայ աշխատատրութեան մէջ մարքսիստական գաղափարները տարածելու, համաշխարհային ընկերային յեղափոխական կենդանի մէկ քերք եղող Խ. Հայաստանը ամէն կերպ զօրացնելու եւ այս կերպով միջազգային ընկերային յեղափոխութեան յաղթանակին իր գոհողութեան ու պարտականութեան բաժինը քերքելու աշխատանքին մէջ»⁵²:

Կոմիտեերնի հետ բանակցութիւնները վերսկսելու որոշումը չ'իրականանար: Խորհրդային Միութեան տարածքին, Հնչակեան կուսակցութեան լուծարքը դարձած էր գրեթէ իրականութիւն, իսկ արտասահմանի մէջ գոյն կոմունիստական կուսակցութեան մէջ լուծելու փորձերը ձախողած էին եւ ՄԴՀԿ կը պահէր իր ինքնուրոյնութիւնը: Այս իրականութեան լուսին տակ, ի տարբերութիւն նախորդ բանակցութիւններուն, խօսքը կրնար վերաբերիլ միայն Խորհրդային Միութեան տարածքէն դուրս, Կոմիտեերնի կողմէ ՄԴՀԿի ինքնուրոյնութեան ճանաչման, բան մը՝ որ ակնյայտօրէն հեռու էր Կոմիտեերնի եւ մասնաւորաբար ՀԿ(Բ)Կ արամազրութիւններէն:

Այս ուղղութեամբ, նախքան Համազումարը, զէպի Աթէնք իր ճամբուն վրայ, Սապահ Գիւլեան, Փարիզի մէջ տեսակցութիւն կ'ունենայ նորաստեղծ Անդրկովկասեան Խորհրդային Հանրապետութիւններու Դաշնակցութեան Պերլինի ներկայացուցիչ Սիմոնիկ Փիլոսովիանի եւ Երկրագործական Կոմիսար Արամայիս Երզնկեանի հետ՝ վերջիններուս փափաքով Խորհրդային Իշխանութեան ներկայացուցիչները կը վստահեցնեն Սապահ Գիւլեանը, որ ՄԴՀԿի Հանրէպ Կոմիտեանի որոշումը կարելի է բարեփոխել ճշմանուչորս ժամուայ մէջ՝ եւ թէ նաեւ Հնարաւոր է որ Հայաստանի կառավարութիւնն ու Կոմունիստական Կուսակցութիւնը ճանշանն ՄԴՀԿը չորպէս իրենց ներկայացուցիչն ու շարունակութիւնը Հայաստանից դուրս՝ արտասահմանի մէջ, միայն թէ չզրա Համար յարաբերութեան մէջ պիտի մտնել, բանակցութիւններ վարել՝ ուղղակի Հայաստանի Կառավարութեան եւ Կոմունիստ Կուսակցութեան հետ»⁹⁰։ Այս վերաբերմունքին ի տես, Սապահ Գիւլեան, իր տիկնոջ՝ Բերուզին գրած նամակին մէջ կու գայ հետեւեալ եզրակացութեան.

Հոգով մխիթարուցի։ Ինչպէս երեսուն է, Հայ Կոմունիստները երկու մասի են բաժանուած. ոմանք ուզում են, ամէն զնով, մեզ հետ յարմարուիլ, ոմանք էլ՝ - Դաշնակցականներից եւ Հնչակեաններից դարձածները - սաստիկ հակառակ են»⁹²։

Համազումարի որոշման լռյսին տակ, Սապահ Գիւլեան կը նախապատրաստուի մեկնել Մոսկուա։ 14 Փետրուար 1926ին իր տիկնոջ լրան նամակին մէջ ան կը գրէ.

Երկու օր ատաջ մամակ ատայ՝ որ Ս. Փիլոսովեանը եւ Ա. Երզնկեանը արդէն Մոսկուա են հասած։ Խեղճ մամակագիր Ընկերը կարծում է, թէ զրպանս դրամ կայ եւ ինձ իմաց է տալիս, որ Մոսկուա քոչիմ եւ կանխապէս մեր խօսուածին համաձայն՝ Երրորդ Միջազգայինի տակտիկան եւ որոշումը մեր Կուսակցութեան նկատմամբ՝ փոխեն»⁹³։

Նիւթական զժուարութիւններուն կողքին կը ծագի մուտքի արտօնութեան ձգձգումը, որուն պատճառով Սապահ Գիւլեան Յունաստանի մօտ Խորհրդային Միութեան դեսպան Ուստինովին կը յղէ ռուսերէն մի ընդարձակ յայտարարութիւն՝ ... բացատրելով ո՛վ լինելու, ի՛նչ հանգամանքով Հայաստան երթալու, պարզելով, որ ես աւելի՛ Մոսկուայի Երրորդ Միջազգայինի հետ գործ պիտի ունենայի, որքան որ Թիֆլիսի եւ Երեւանի Կոմունիստ Կուսակցութիւններին»⁹⁴։ Յ Ազգային, Սապահ Գիւլեան իր տիկնոջ կը գրէ թէ՛.

Դեսպան՝ Ընկեր Ուստինովը ստացաւ պատասխանը, որ եկել է ուղղակի Երրորդ Միջազգայինի Գործադիր Սարմնի կողմից՝ ասելով որ «քոյլ տան ինձ զնապու ուղղակի Մոսկուա»։ Ուրեմն, իմ յայտարարութեան հիմունքները քննութեան առնելով՝ համաձայնել են, որ ես անձամբ ներ-

կայանամ եւ պաշտպանեմ իմ գրած թէգերս՝ մեր Կուսակցութեան նկատմամբ...

Երբ ողջամբ հասնիմ Մեսկուա, Երրորդ Միջազգայինի առաջին անգամ տրուած որոշումները վերլուծելուց յետոյ՝ մեր իրականութեան անհամապատասխան լինելը պիտի փաստեմ եւ առաջարկեմ լուծում՝ ըստ մեր հայեցակետերի: Պիտի խօսիմ յիսուներկու ազգերի ներկայացուցիչների առջեւ եւ ես մեզ մենակ եմ, յոյսս դրած միայն ինձ վրայ⁹⁵:

Սապա՛հ Գիւլեան կը վկայէ թէ՛ Ուստինով, Հիւպատոս Մաշիցկի եւ Ջեկայի (խորհրդային գաղտնի սպասարկութեան) լիազոր Նեուկի Գանջ չեն խնայեր իր մեկնումը Մոսկուա իրականացնելու համար: 28 Ապրիլի՝ Նամակին մէջ, ան կը գրէ թէ՛ Վերէկ, այս երրորդ Հեռագիրն է՝ որ եկել է Ուստինովին՝

«Ամիսներ սպասում ենք Ընկեր Սապահ-Գիւլեանին»⁹⁶:

Նիւթական միջոցներու շղթութեան, առողջական վատ վիճակի, ապառաջական եւ ներկուսակցական ընդդիմութեան առկայութեան պատճառներով Սապա՛հ Գիւլեանի այցը Մոսկուա եւ բանակցութիւնները Կոմիտներին Հետ տեղի չեն ունենար եւ ան 28 Մաշիսն իր տիկնոջ կը գրէ՛ Վերէ՛ Մոսկուա՝ Կոմիտներին եւ թէ՛ Հայաստան, Թիֆլիզ ընկերներին եւ պաշտօնական անձնաւորութեանց գրեցի, որ դալս յետաձգեցի»⁹⁷:

Կոմիտներին Հետ բանակցութիւնները վերսկսելու Հնչակեաններու փափաքին եւ թափուած ճիգերուն գուզահեռ, խորհրդահայ կոմունիստ ղեկավարները կը շարունակեն իրենց այլամերժ կեցուածքը: Ասոր վառ արտայայտութիւններէն՝ կ'ըլլայ 1924ի վերջաւորութեան Միասնիկեանի հրապարակած Կուսակցութիւնները Գաղութնաւորութեան Մէջ գիւրջը, ուր Հեղինակը, աւելի քան քսան էջ Հնչակեան Կուսակցութեան յատկացնելով, կը գրէ՛

Հնչակեանների մեջ յարակամ տարրերը նրանց հին պարագլուխներն են, որոնք փորձուած գայլերի մման չեն թողնում իրենց որսի օձիքը: Այդ գայլերի հետ իրենց հաշիւմ արդէն վերջացրին Երեսնի, Բագուի, Թիֆլիսի, Մուխամի, Փարիզի, մասամբ էլ Բալկանների ու Պարսկաստանի հնչակեան արհեստաւորներն ու գիտացիները: Բարովներն (այսինքն՝ Արշակ Պապեանի մմանները - Ե. Ճ.) անցան ու գնացին: Բայց կան դեռ Սապահ-Գիւլեաններն ու Նազարբէկները: Պէտք է սրանց էլ անցկացնել: Սրանք էին, որ ժամանակին խանգարեցին հնչակեան աշխատաւորների միացումը Ամերիկայի հայ կոմունիստ քանուորներին: Մի կողմ այդ լիդերներին, եւ այն ժամանակ մէկընդմիջաթօթափելով իրենցից հնի փռշին եւ «Երիտասարդ Հայաստանի» հակասոցիալիստական եւ հակայեղափոխական մարզանքները, այն մի քանի հարիւր քանուոր-արհեստաւորները, որոնք մեծ ձգտում ունին գնալ կոմ-

մունիստական հունով, շատ շուտով կը կարողանան ընթանալ կոմունիզմի դրօշի տակ: Քայքայուած ենչակեանութիւնը չէ, դիակնացած Եդիկեաններն ու Սապահ-Գիլեանները չեն, որ կասեցնելու են այս շարժումը, այս առաջընթացութիւնը: Այսպէս ուրեմն՝ քաթառացած դաւաճան լիղերների վրայով դէպի հայ կոմունիստական կուսակցութիւնը, դէպի միջազգային կոմունիզմը, դէպի պրոլետարական համաշխարհային դիկտատուրան⁹⁸:

ՀԿ(Բ)Կի այս կեցուածքը կը շարունակուի նաեւ յաջորդող տարիներուն: Օրինակի համար, ՀԿ(Բ)Կ կենտկոմը, 9-12 Նոյեմբեր 1928ին գումարուած իր ճրդ Լիագումարին, ազգայնամարտիկեան դէմ պայքարի կապակցութեամբ, կը բանաձեւէ հետեւեալ գնահատականը.

Որքան էլ անախորճիստական մտայնութիւն լինի Հնչակիզմը, որքան էլ մա մարած լինի մեզ մօտ, այնուամենայնիւ, հայ գաղութներում մա դեռ գոյութիւն ունի: Այդ մտայնութիւնը մոյմ դաշնակիզմն է, միայն աւելի թոյլ եւ անզոյն, աւելի վախկոտ, երեքուող եւ քառսային⁹⁹:

ՏԱՐԲԵՐ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

Հակառակ ՀԿ(Բ)Կ այս կեցուածքին, Հնչակեան կուսակցութեան այդ շրջանի պաշտօնական որոշումներուն ու մամուլին մէջ մնալուն ներկայութիւն կը դառնան Խորհրդային Հայաստանի ջատագովումն ու անոր պաշտպանութիւնը հակախորհրդային կուսակցութիւններու յարձակումներէն:

Սրան փաստերու վերլուծումը ցոյց կու տայ, որ այդ շրջանին, Հնչակեան կուսակցութեան մէջ երեսան կու գան երեք հոսանքներ:

Առաջին հոսանքը կ'առաջարկէ միաձուլուիլ կոմիստերնի տեղական բաժանմունքները նկատուող կոմունիստական կուսակցութիւններուն մէջ: Թիւով ամէնէն փոքր այս հոսանքը լուրջ հետք չի ձգեր կարգ մը շրջաններու մէջ (ԱՄՆ, Յունաստան, Լիբանան) փոքր խմբակներ կը միանան տեղական կոմունիստական կուսակցութիւններուն:

Երկրորդ հոսանքի տեսակէտն էր՝ ընդհանրապէս որեւէ կապ չունենալ կոմիստերնի եւ անոր տեղական բաժանմունքները նկատուող կոմունիստական կուսակցութիւններուն հետ, որովհետեւ անոնք հեռու են իրաւ սոցիալիզմէն, այլ համակրութիւն յայտնել Երկրորդ Ինտերնացիոնալին: Այս հոսանքին ակնառու ներկայացուցիչները կ'ըլլան Օդիկեան, Բ. Վարազդատ (Յակոբ Թիւրաբեան), Մ. Ս. Դաւիթ Բէկ (Մարտիրոս Սարգիսեան) եւն: Այս հոսանքը աւելի ազդեցիկ կ'ըլլայ Պարսկաստանի եւ Ֆրանսայի մէջ, ուր յաջորդաբար իբրեւ ամպլոն կ'օգտագործէ Վարազդատի խմբազրած Արժագանդ Փարիզի եւ Նոր Երկիր շարաթաթերները:

Երրորդ Հոսանքը կը պահանջէ պահել ՄԻՂԿի ինքնուրոյնութիւնը, սակայն Համակրիլ Երրորդ Ինտերնացիոնալին եւ գործակցիլ անոր Հետ: Այս Հոսանքին կարեւոր ներկայացուցիչներէն կ'ըլլայ Սապահ Գիւլեան: Կուսակցութեան մէջ ամէնէն աւելի Համակրութիւն վայելողը կ'ըլլայ այս Հոսանքը, որ ինքնին կը ներկայացնէր ծայրայիտ նկատուող առաջին եւ կրկրորդ Հոսանքներուն միջինը:

Տեսակէտերու բախումը տեղի կ'ունենայ երկրորդ եւ երրորդ Հոսանք-ներուն միջեւ, պարզ այն պատճառով, որ առաջին Հոսանքին պատկանող-ները կը խզեն իրենց կապերը ՄԻՂԿի Հետ եւ կ'անցնին կոմունիստական կուսակցութեան շարքերը:

1921ին Սապահ Գիւլեան կը հրատարակէ *Քառերի Ու Եզերի Բացառ-րութիւններ* գիրքը, ուր, 5 Փետրուար 1923ի կոմիտեանի որոշման մէջ ՄԻՂԿի տրուած գնահատականին մէջ դրական կէտեր գտնելէ ետք, կ'ա-ւելցնէ:

Եզրակացնում ենք ասելով միայն այն, որ Սօցիալ Դեմօկրատ Հնչակ-եան Կուսակցութիւնը *անպայմանօրէն* պիտի պահի իր *Կուսակցական անհատական գոյութիւնը*, մա իր կեանքը պիտի շարունակի, հաստատ-րիմ մնալով իր յեղափոխական Մարքսիստական ուղղութեանը՝ Հայ իրականութեան մէջ: Եթէ Երրորդ Միջազգայինին չենք կարող ուղղակի անդամակցիլ *կազմակերպչական տեսակետով*, կարող ենք մնալ *հա-մակիր*, ինչպիսի դրութիւն որ ընդունուած է Միջազգայինի կողմից՝ մի քանի ա՛յլ երկրների Կուսակցութիւնների համար՝ իր կամոնագրային հասկացողութիւնների մէջ (ընդգծումները սկզբնաղբիւրին են - Ե.Ղ.)¹⁰⁰:

Հնչակեան ղեկավարներէն Վ. Տիրատ (Վարդան Տիրատուրեան) եւս, *Սօցիալիզմի Պատմութիւնը* գիրքին մէջ, Երրորդ Ինտերնացիոնալին Հան-դէպ կ'արտայայտուի դրական¹⁰¹:

Տեսակէտերու միջեւ տիրող այս տարակարծութիւնը բնականաբար իր արտայայտութիւնը կը գտնէ նաեւ գործնական կեանքի մէջ: Օգոստոս 1930ին, ՄԻՂԿ Պուլկարիոյ Երջանի ԺԲ. Պատգամաւորական Ժողովը, ո-րոշելէ ետք չզիմել կուսակցութեան կեդրոնական Վարչութեան՝ որպէս-զի յառաջիկայ Թ. Ընդհ. Պատգմ. Ժողովի օրակարգին անցուի *մեր Համա-գործակցութիւնը Երրորդ Միջազգայինականի Հետ Կնդգծումը սկզբնաղ-բիւրին է - Ե.Ղ.*¹⁰², կը պարսաւէ Պրանսայի Երջանն, անոր խօսափող Նոր Երկիրը ու կը յայտարարէ. *Վե՞թէ վերոյիշեալ թերթը շարունակէ իր այժմու ուղղութիւնը, չըջանս պոյսթիթի պիտի ենթարկէլ զայն*¹⁰³:

ՄԻՂԿ Երկրորդ Երջանի Ե. Պատգամաւորական Ժողովն իր կարգին այս կապակցութեամբ միամայնութեամբ կը քուէարկէ Հետեւեալ բանա-ձեւը:

Նկատելով որ Բարիզ հրատարակուող «Նոր Երկիր» Շաբաթաթերթի քաղաքական և սկզբունքային ուղղութիւնը ժխտումն է Կուսակցութեան Ըրդ Պատգմ. Ժողովին մէջ տրուած որոշումներուն, և ընդգրկած ուղղութեան, Ժողովս կը մերժէ ընդունիլ «Նոր Երկիր»ը Հնչակեան թերթ, ցորչափ կը տեսն անոր ներկայ ուղղութիւնը, և պարտականութիւն կու տայ Գործադիր Յանձնախումբին, այս որոշումը հաղորդելու Զոյր Շրջաններու¹⁰⁴:

Նոյնօրինակ դիրքորոշումներով հանդէս կու գան Ամերիկայի Երջանի ՔԶ. Պատգամաւորական Ժողովն ու Յունաստանի Երջանի Վարիչ Մարմինը:

1831ին, Լիոնի մէջ գումարուած ՄԻՀԿ Ֆրանսայի Երջանի Պատգամաւորական Ժողովը կ'որոշէ:

Նկատելով որ Շրջանիս մէջ Կուսակցութիւնը պատակտելու միտող անձերը արդէն իսկ դիմակազերծ եղած են և գրեթէ բոլոր քոյր շրջաններէն ալ անխտիր ճանչցուած են և Եպիսկոպի համարուած յանձին՝ «Նոր Երկիր»ի, որով այլեւս իրենց դաւադիր ուղիէն ընթանալու տրամադիր ո՛չ մէկ գիտակից Հնչակեան չէ մնացած:

Նկատելով, սակայն, որ կրման գտնուիլ շարքային սակաւաթիւ միամիտ ընկերներ, որոնք չկարենալով քախանցել «Նոր Երկիր»ի քացած կուսակցադաւ պայքարին խորը կը մնան վարամտու և տատամտու, կ'որոշէ անգամ մը Ես կրկնել թէ՛ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան վեհ գաղափարաբանութեան հաստատրիմ քարգմանը հանդիսացող Աթենքի Տրդ Գերագոյն Ժողովի որոշումները կ'ընդունի իրր չախանիչ համերաշխութեան և ներդաշնակութեան և կոչ կ'ուղղէ բոլոր ընկերներուն անխտիր գալ զինուորագրուիլ քառասուն երեք տարիներէ ի վեր յեղափոխական պատմէշներու վրայ ծածանուող Հնչակեան կարմիր դրոշին ներքեւ¹⁰⁵:

Սակայն, հակառակ 1831ի ՄԻՀԿի Լիոնի Պատգամաւորական Ժողովի որոշումներուն ևւ տարբեր շրջաններու բացայայտ կեցուածքներուն, երկրորդ հասանքի ներկայացուցիչները կը յաշողին 1832ին իրենց ձեռքը կեդրոնացնել ֆրանսայի Երջանի Վարիչ Մարմինը, որ Եոյն թուականին, ատենագետ Դաւիթ Բէկի և ատենագոյլի Վարազդատի ստորագրութեամբ, կը հրապարակէ «Յայտարարութիւն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղերուն» վերնագրերով 32 էջոց փաստաթուղթ մը, ուր խտորէն կը քննադատէ Կոմիտեիները, Խորհրդային Միութեան մէջ կատարուող անարդարութիւնները, Կոմիտեիներն ու խորհրդային իշխանութիւններուն հանդէպ դրական տրամադրուած Հնչակեանները և իր հա-

Ճակրութիւնը կը յայտնէ Երկրորդ Ինտերնացիոնալին Յայտարարութեան մէջ կ'ըսուի:

Երկէ ինքզինքնին բունդ Հնչակեան անուանողները, որոնք սնած ու սնծցած էին կուսակցութեան շնորհիւ, դրժեցին իրենց եղողմն ու ուխտը ... երթալ պաշտելու համար Գ. Մրջագայնականի շէֆերը, որոնք թէն «Պրոլետարիատի ազատութեան» դրօշակն էին պարզած, քայց երկրին մէջ Չէկա էին հաստատած՝ իր սաղմին մէջ իսկ խեղդելու համար ազատութեան ձգտող որեւէ շարժում, ուր կաշկանդուած էին մամուլի, խօսքի ազատութեան եւ անձի անձեռնմխելիութեան մարդկային ամենէն տարրական իրատուքները, եւ ուր մինչեւ անգամ ականատր պօլշեիկ ղեկավարները բանտով, արտորով, զնդակահարութեամբ կը պատժուէին, եթէ համարձակէին տիրող բռնապետական կարգերու դէմ ամենափոքր քննադատութիւն ընել: Երկիր մը որուն վարչածեղ «ամտամեղի» կը հռչակուէր գայն հաստատողներու կողմէն իսկ: Բեժմ մը, ուր պօլշեիկեան յեղափոխութեան ամենէն կարկառուն դէմքեր, սովետական համրապետութեան մախագան Ռիկով, Ռուսաստանի վարչապետ Սիրցով, յայտնի տեսարաններ Պուխարին եւ Ջինովիւշ, Լենինի ընկեր եւ կարմիր բանակի կազմակերպիչ Թրոցկի, Արհեստակցական Միութիւններու մախագան Թոմսկի, Անդրկովկասի լիագոր Լոմինաձէ, Փարիզի երբեմնի դեսպան Ռարովսկի, բազմաթիւ մտաւորականներ, գիտնականներ, գտարիւն պօլշեիկներ, ինչպէս համայն Ռուսաստանի նոյնպէս եւ Խ. Հայաստանի մէջ պաշտօնանկութեամբ, արտորով, արտաքստմով, զնդակահարութեամբ կը պատժուէին՝ տիրող կամայականութիւններու դէմ բողոքի ծայն բարձրացուցած ըլլալուն համար:

Երբ երկրի մը վարչապետները, արտաքին եւ ներքին, կրթական, անուտրական գործավարները, դեսպաններն ու աշխարհառչակ դէմքերը, Յեղափոխութեան ռահվիրաները մէկ օրէն միառ իբրեւ «դաւաճան» կը հռչակուէին ու կը զսպուէին, դիւրին է երեւակայել թէ՛ որպիսի հակամարդկային արարքներու եւ խոշտանգումներու կ'ենթարկուէին նուազ համբաւատրները, նուազ ազդեցիկները կամ հասարակ ժողովուրդը, անլեզու բանուորներն ու գիւղացիները, զոր սարսափի տակ պահելու համար ստեղծուած է միջնադարեան եւ հաւատաքննական դրութիւն, որուն շնորհիւ քանդուած են ընտանեկան օճախները, թշնամի բանակներու վերածուած են միեւնոյն ընտանիքի անդամները: Մայրը կը լրտեսուի իր հարազատ աղջկան, հայրը՝ իր որդիէն եւ ամենուրեք ամենափոքր կասկածով կամ պարզ ամբաստանութեամբ որեւէ մարդ կրնայ իբրեւ «հակախեղափոխական» որակուիլ ու առանց դատավարութեան զնդակահարուիլ¹⁶:

Յայտարարութիւնը կը քննադատէ ՄԻՂԿԻ Հանդէպ կոմիտեանի 5 Փետրուար 1923ի որոշումը, այդ առիթով Թեֆլիսի մէջ գործող ՄԻՂԿ

Կեդրոնական Վարչութեան հրապարակած շրջաբերականը ու կը հետեցնէ:

Թէ՛ Մոսկուայի Կոմիւնտերնի եւ թէ՛ Խ. Հայաստանի մախող վարչապետին այսքան քացորոշ ու ժխտական, միեւնոյն ատեն արհամարհական ու վիրատրական պատասխանէն յետոյ ռեւէ քաց դուռ մնացած չէր համաձայնութեան համար եւ ոչ ալ ամենադոյզն յուսոյ նշոյլ՝ Հնչակեանութիւնը իբրեւ ամբողջականութիւն ընդունել տալու, ինչպէս կը քաղձար Թիֆլիսի Կեդրոնը կամ պահպանել անոր անկախութիւնը, հասարական կազմն ու ազգամիջեան կազմակերպական դրութիւնը, ինչպէս որոշած էր 1925 (պէտք է ըլլայ 1924 - Ե.Ռ.) Հոկտեմբերին, Աթենքի մէջ գումարուած Ցրոյ Ընդի. Ժողովը, եւ ինչպէս կը պարտադրէր արդէն Հնչակեան Կուսեան Կազմակերպական Կանոնագիրը¹⁰⁷:

Անգամի մը Համար եւս Հարցի վերջնական բիրեղացումը կը մնայ յարող Համազումարին 1934 Օգոստոսին Մարտէջի մէջ գումարուած ՄԻՀԿ Թ. Համազումարը, հաստատելէ ետք թէ՛ կուսակցութիւնը հրեղմիշտ հեռացած է Բ. Միջազգայինէն, կը շեշտէ՝

անկողող անգամ մ'ես իր ինքնուրոյն գոյութեան պատմական անհրաժեշտութիւնը՝ որպէսզի զադութահայ աշխատատրութիւնը, իբր ամբողջութիւն, անդիկավար չմնայ եւ ազգայնական հոսանքներու կողմէ Խորհրդային Հանրապետութեանց դէմ ընդհանրապէս՝ իսկ Խորհրդային Հայաստանի դէմ մասնատրապէս ըլլալից թշնամական ձեռնարկներու սնունդ չը հայթայթէ, կ'որոշէ սերտացնել իր յարաբերութիւնը Գ.րոյ Միջազգայնականի հետ, ընդունելով զայն համաշխարհային պրոլետարիատի դիկավար կեդրոն¹⁰⁸:

ՀՆՉԱԿԵԱՆ-ԿՈՄՄՆՏԵՐՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ

ՄԻՀԿ Թ. Համազումարը միաժամանակ կ'որոշէ Կոմիւնտերնին հետ վերսկսել բանակցութիւնները եւ այդ առաքելութեամբ Մոսկուա կը գործուզէ Միջվարդը (Եղիա Գրիգորեան):

Սերվարդ Կոմիւնտերնի հետ կը հասնի նոր Համաձայնութեան մը, որուն մասին Հնչակ պաշտօնակիցները իր խմբագրականին մէջ կը գրէ:

Այս Ժողովներն քոյսած որոշումն է որ այսօր մարմին առած է, առանց Հնչակեան Կուսակցութեան անկախութիւնը խնդրոյ առարկայ ընելու կամ վտանգելու, համագործակցութիւնով պաշտպանելու համար Ա. Խորհրդային Միութիւնը,

Բ. Խորհրդային Հայաստանը, եւ

Գ. Պայքարիլ Ֆաշիստական սկզբունքների դէմ:

Այս պայմանները, որոնց շուրջ գոյացած է հասկացողութիւնը Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնին եւ համաշխարհային պրօլետարիատի ղեկավար մարմնի-Կոմիտեանի միջեւ, իրենց մէջ չունին Հնչակեան անկախութիւնը վտանգելու ոեւէ բնոյթ, ընդհակառակը անոնք կը փաստեն Հնչակեանութեան մարքսիստական *ամկախ ոյժ* մ'ըլլալը եւ Խորհրդային Միութեան պաշտպանութեան մասին անոր սմուցած ցինջ զգացումները¹⁰⁹:

Կիտուր Հետեւեալ ձեւով կը ներկայացնէ գործակցութեան այս համաձայնութիւնը.

Երկար քանակցութիւններէ ետք, երկուստեք կը գոյանայ հետեւեալ հասկացողութիւնը.-

Ա.- Հնչակեան կուսակցութիւնը արտասահմանի մէջ պիտի պահէ իր գոյութիւնը, անկախութիւնը եւ կազմակերպական դրոշմը:

Բ.- Պիտի շարունակէ իր մարքսիստական գործունէութիւնը ըստ առաջնոյն, սակայն պիտի գործակցի տեղական Կոմունիստական կուսակցութեանց հետ՝ կազմելով միացեալ ճակատ հետեւեալ հարցերու շուրջ.-

1) Պաշտպանել Խորհրդային Միութիւնը, որու հետ մասն Խորհրդային Հայաստանը:

2) Պայքարիլ ֆաշիստական սկզբունքներուն եւ պատերազմի դէմ:

3) Ոյժ տայ տեղական պրօլետարիատի շահերու պաշտպանութեան պայքարին¹¹⁰:

ՄԴՀԿ-Կոմիտեանին վերջին բանակցութիւններուն աննախադէպ ղիւրասահ ընթացքը, ՄԴՀԿի ինքնուրոյն գոյութեան ճանաչումը Կոմիտեանի կողմէ, Փաշիգմի դէմ պայքարի տեսակէտին շուրջ համաձայնութիւնը (րան մը որ նորութիւն չէր ՄԴՀԿի համար), արդիւնք էին այն իրականութեան, որ Կոմիտեանը 1934ին շատ բան փոխած էր 1920ականներու իր քաղաքականութիւնէն ու լոզունգներէն: 1930ականներու սկիզբը պարզ դարձած էր արդէն, թէ տասնամեակ մը առաջ մօտիկ թուացող համաշխարհային յեղափոխութիւնը (Ներսիսեանի Արեւելքի մէջ) այժմ Հեռու էր իրականութիւն դառնալէ: Եւրոպայէն կը լսուէին հերթական համաշխարհային պատերազմի թմբուկի ձայները: Խորհրդային Միութիւնը, կոմունիստական կուսակցութիւններէն անկախ, պէտք ունէր բոլոր ժախկողման, դեմոկրատական ու միջին հոսանքներուն համակրանքին ու դաշինքին: Յուլիս-Օգոստոս 1935ին կայացած իր է. Խորհրդածողովին, Կոմիտեանին առաւելաբար շեշտը կը դնէ Հակաֆաշիստական-Ժողովրդական ճակատներ կազմելու հարցին վրայ: Ան կը հրատարի իր անդամներուն հանդէպ «ՅՆ տրամադրութիւններու» գործադրութիւնը պահանջող քաղաքականութիւնէն եւ կը սկսի բուրժուական, բայց Հակաֆաշիստական

կուսակցութիւններու Հետ կազմել Համաձայնական կամ ժողովրդային ճակատներ:

11 Ապրիլ 1935ին, Կոմիտեերնի Գործադիր Մարմնի քարտուղարութիւնը ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութեան կը յղէ նամակ մը, ուր բարեկամական ոճով մը կ'առաջարկէ, որ կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչ մը՝ խորհրդակցական ձայնով, մասնակցի ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութեան նիստերուն, այլ ներկայացուցիչ մըն ալ՝ դարձեալ խորհրդակցական ձայնի իրաւունքով, մասնակցութիւն բերէ խմբագրական կազմին եւ կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչ մը ներկայ ըլլայ ՄԻՀԿի անդամական ժողովներուն: Կոմիտեերնի քարտուղարութիւնը կը յուսայ, որ Հայտի չարգիլուի ձեր ընկերներուն՝ Կոմկուսի մէջ մուտքը եւ այս ոչ թէ անոր Համար որ անոնք Հեռանան ձեր կուսակցութեան, այլ Հոն եւս մնալով եւ գործելով, միացեալ աշխատանքը սերտացնեն Կոմունիստ Հաստատման հետ, ու կ'եզրակացնէ:

Եթէ մեր այս առաջարկները ընդունելի են եւ Կեդր. Վարչութիւնը կը նկատուի թէ այս հիմքերու վրայ հնարատր է գործակցութիւն հաստատել Կոմունիստ Միջազգայնականի եւ իր հատուածներուն հետ, կ'առաջարկենք որ անմիջապէս քայլեր առնէք նրախանգելով ձեր շրջաններուն, որ Կոմկուսի հետ յարաբերութեան ստմնեց գործակցութեան իրականացման համար խորհրդակցութիւն կատարելու¹¹:

Մեր տրամադրութեան տակ, Կոմիտեերնի այս փափաքներուն գործադրութիւնը Հաստատող փաստեր չկան¹²:

ՄԻՀԿ-Կոմիտեերն Համաձայնութեան լրտին տակ, Հնչակեանները մասնաւորաբար շեշտը կը դնեն Կոմիտեերնի կողմէ ՄԻՀԿի ինքնուրոյնութիւնը ճանչնալու փաստին վրայ, այն նկատելով յաղթանակ մը: Այս առնչութեամբ, ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութեան շրջաբերականներէն մին կը գրէ-

Հնչակեանութեան, որպէս Յեղափոխական Մարքսիզմի ջանակիրը հայ կեանքին եւ Կոմիտեերնի միջոց կայացած հասկացողութիւնը, գործակցութեան ուղին, որու համաձայն, մեր շրջանները, առանց իրենց կազմակերպչական դրոշմներէն շեղուելու որպէս մարքսիստներ-կոմունիստներ, պիտի գործակցին տեղական կոմունիստական հոսանքներու հետ, համաձայն իրենց տեղական քաղաքական պայմաններուն, որոնք եթէ թոյլատու են, չեն վտանգեր մեր կուսակցութեան գոյութեանը: Կեդրոնիս այս յաղթանակը իսպառ լռեցուց կարգ մը մտքով զանճաններու կոկոտը...¹³:

Իր Հերթին, Հնչակ կը գրէ-

Հնչակեան Կուսակցութիւնը սակայն՝ 1934-ին, ճիշտ տեղին վրայ նետեց իր ոտքերը եւ արար-աշխարհի իմացաւ թէ՛ ինչպիսի փառատր վկայա-

կան կրցալ ստանալ անկէ: Այդ տեղը Մոսկուան էր, որուն մէջ բնակութիւն հաստատող Երրորդ Միջազգայինի լուրջ ու խոհուն ներկայացուցիչները, տուին իրենց վճիռը՝ արդարացնելով Հնչակեան Կուսակցութեան անցեալը եւ պատմա-անհատական գոյութեան իրաւունքը¹¹⁴:

Իսկ ԱՄՆի մէջ ՄԴՀԿ-Կոմունիստական Կուսակցութիւն գործակցութեան կազակցութեամբ Հեյախ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան ԺԼ. տարեդարձին առիթով, կը յայտարարէ.

Բացառիկ հաճոյքով կ'ողջունենք այս պատմական տարեդարձի սեմին վրայ իսկ կնքուած միացեալ ճակատը՝ Սօց. Դեմ. Հնչ. Կուս. Ամերիկայի Երջանակին եւ Ամերիկայի Կոմիւնիստական Կուսակցութեան միջեւ, ի պաշտպանութիւն Խորհրդային Միութեան եւ Խորհրդային Հայաստանի¹¹⁵:

Կոմիւնիստներն հետ այս նոր համաձայնութեան դոյացման օրերուն եւս, Հայաստանի իշխանութիւնները շատ խանդավառ չեն ըլլար այդ գործակցութեամբ՝ ի մասնաւորի ՄԴՀԿի ինքնուրոյնութիւնը ճանչնալու զազափարով: Նախքան Մոսկուայի մէջ բանակցութիւններ սկսիլը, Սիւրբարդ կ'աջեղէ Հայաստան: Սա, 1924էն ետք, հնչակեան պատասխանատուի մը առաջին պաշտօնական աջելութիւնն էր Երեւան: Դէպի Մոսկուա վերադարձի օրը, առանձնակի զրոյցի մը ընթացքին, Խորհրդային Հայաստանի վարչապետ Սահակ Տէր Գարրիէլեան Սիւրբարդին կ'ըսէ.

Չնր ժողովի որոշումներուն մասամբ ծանօթացած եմ: Այդ բոլորը լաւ են, րայց յէ՞ք կարծես որ անիլ լաւագոյնը ըրած պիտի ըլլայիք եթէ անջատ գոյութեան վերջ տալով՝ ձուլուէիք տեղական կոմիւնիստական հոսանքին մէջ, զօրացնելու համար աշխատատրութեան պաշտպանութեան գիծը¹¹⁶:

ՄԴՀԿ-Կոմիւնիստներն նոր համագործակցութեան լոյսին տակ, 26 Յունիս 1937ին, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը Կոմիւնիստներին կը յղէ նամակ մը, որուն մէջ ՄԴՀԿ բոլոր շրջաններուն անունով փափաք կը յայտնէ Խորհրդային Հայաստանի մէջ կառուցել սոցիալիզմի համար նահատակուած հնչակեան հերոսներու արձանները:

Կոմիւնիստներն առաջին քարտուղար Գէորգի Դիմիտրով, երկտողով մը, այդ նամակը կը յղէ ՀամԿ(բ)Կ Կեդրոնական Կոմիտէին: Վերջինս, ստացուած նամակը եւ Դիմիտրովի երկտողը կը ղրկէ ՀԿ(բ)Կ Կեդրոնական Կոմիտէին, իր կողմէ եւս յաւելելով 16 Օգոստոս 1937 թուակիր, «Իսխազազտեմի» երկտող մը¹¹⁷: Որպէս պատասխան, ՀԿ(բ)Կ Կեդրոնական Կոմիտէի առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեան, 16 Ապրիլ 1938ին, հետեւեալ ըզադտեմի նամակը կը յղէ ՀամԿ(բ)Կ քարտուղար Անդրէյ Անդրէեւին.

1937 թուականի Օգոստոսին ՀամԿ(ք)Կ Կեդրոնական Կոմիտեն ստացանք Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայէն դրկած նամակը ընկ. Դիմիտրովին:

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կը խնդրէ թոյլ տալ Սովետական Հայաստանի մէջ կանգնեցնել Հնչակեան այն գործիչներու յուշարձանները, «որոնք իրենց կեանքը զոհարեցած են սոցիալիզմի յաղթանակին համար»:

Քննարկելէ ետք եղած առաջարկութիւնը, Հայաստանի Կոմունիստական Կեդրոնական Կոմիտէն մերժեց այդ, հետեւեալ պատճառներով.

1. Հնչակեան Կուսակցութիւնը հայկական ազգայնական, մենշելիկեան կուսակցութիւն է, տասնեակ տարիներ պայքարած է քանդակաւոր-յեղափոխական շարժման եւ Կոմունիստական Կուսակցութեան դէմ: 1921ին Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատումէն ետք, անոնք յայտարարեցին իրենց կուսակցութեան լուծարքը: Հնչակեան Կուսակցութեան առանձին անդամներ, ընդհանուր հիմունքներով, ընդունուեցան Բոլշեվիկեան Կուսակցութեան շարքերը:

Կուսակցութեան բնական ընթացքով լուծարումէն ետք, անոնք անցած են ընդլայնուելու:

2. Ինչպէս ցոյց կու տան 1937ին քանտարկուած հնչակեաններուն դատաքննութեան միւթերը, հնչակեանները դաշինք կնքած են Դաշնակցութիւն կուսակցութեան հետ եւ, սկսած 1921էն, միասնաբար զինեալ պայքար մղած են խորհրդային կարգերուն դէմ: Հաստատուած է որ կուսակցութեան լուծարումէն ետք, անոր Կեդրոնական Վարչութիւնը անցած է ընդլայնուելու եւ մինչեւ վերջերս ղեկավարած է հնչակեաններուն հակախորհրդային պայքարը:

Աքսորուած հնչակեանները խտտովանած են, որ իրենց առջեւ նպատակ դրած են, դաշնակցելով բոլոր հակախորհրդային կազմակերպութիւններուն հետ, ԽՍՀՄի ներքին կամ արտաքին դրութեան սրճան պարագային, խորհրդային կարգերուն դէմ անպատասմբութիւն քարձրացնել բորժուա-ազգայնական կարգեր հաստատելու հետանկարով:

Ինչպէս կ'երեւի վերոյիշեալներէն, Հնչակեան Կուսակցութիւնը եւ անոր զոհուած մարտիկները ո՛չ մէկ կապ ունին քանդակաւոր շարժման, քանուտը դասակարգին եւ սոցիալիզմի հետ. անոնք, Դաշնակցութեան հետ միասին, մինչեւ վերջերս, պայքարած են խորհրդային կարգերուն դէմ՝ տանելով հակայեղափոխական աշխատանք¹¹⁶:

Մեզի յայտնի է՝ թէ ՀԿ(ք)Կ պատասխան-նամակէն ետք, Կոմիտեները կը պատասխանէ՝ ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութեան թէ՛ ոչ, Յայտնի է, սակայն, որ այս կապակցութեամբ ՄԻՀԿ Կեդրոնական Վարչութիւնը Հանդէս կը բերէ որոշ անպարանջ, կրբ 16 Յուլիս 1937ին Հրատարակած

իր թիւ 5 շրջանորականի «Հնչակեան Հերոսներու Յուշարձանը» բաժնին մէջ կը գրէ:

Խորհրդային Միութեան մէջ վերջին տարիներս հաճոյքով ականատես կ'ըլլանք ինն եւ նոր արժէքներու գնահատութեան, մասնատրապետ պրօլետարական դատին համար մարտնչողներու յուշարձաններու կերտումին: Մեր Կուսակցութիւնը արժէքներու տեսակետով հաւաքածոյ մըն է, անոր որոշին տակ ինկողները ոչ միայն կռուած են Հայութիւնը ճնշող բռնութեան դէմ, այլ եւ զանազան երկիրներու մէջ համաշխարհային պրօլետարիատը ճնշող բոլոր տեսակի բռնութեանց, եւ ուրեմն արժանի նոյն գուրգուրանքին եւ գնահատութեան:

Այս պարագան մասնատր նամակներով գրած ենք Մօսկուա, ուր որ անկ է, եւ յանձնած ընկերներու ուշադրութեամբ՝ Խորհրդային Հայաստանի մէջ մեր ընկերներու ի յիշատակ արձան մը կանգնեցնելու համար: Կը հաւատանք որ մեր այս արդար բաղձանք-իրատւնքին եթէ այսօր գոհացում չտրուի, վաղը սակայն անպայման պիտի տրուի, որովհետեւ մեր Կուսակցութիւնը ոչ միայն իր սօցիալիստական գործունէութիւնով այլ եւ Հայաստանի խորհրդայնացման աշխատանքին մէջ առաջին գծին վրայ գտնուելը՝ առաջին օրէն իսկ կանգնած ըլլալով Խորհրդային Միութեան կողքին, ամենուն ծանօթ է: Այս պարագան եւ այժմեան միացեալ ճակատը՝ Կօմիւնտէրնի հետ մեր ունեցած հասկացողութեան համաձայն՝ պիտի նպաստեն մեր այդ բաղձանքին իրականացման մօտիկ ապագային մէջ¹¹⁹:

**ՀԼՁԱԿԵԱՆՆԵՐՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՅԱՋՈՐԴՈՂ
ՏԱՐԻՆԵՐՈՒՆ**

Յամենայն դէպս, ՄԴՀԿ կը շարունակէ իր ինքնուրոյն գոյութիւնը որպէս Երբորդ Ինտերնացիոնալի համակիր կուսակցութիւն: Նոյեմբեր 1937ին, Կեղերոնական Վարչութիւնը կը յայտարարէ:

Այսօր՝ յիսուն տարի վերջ, դեռ մեր գործը ատարած չենք նկատեր. Սօցիալ Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը անպայմանօրէն պիտի պահէ իր կուսակցական անհատական գոյութիւնը զարդաքանայ իրականութեան մէջ, մնալով հաւատարիմ իր Յեղափոխական Մարքսիստական ուղղութեանը եւ անվերապահ գործակիցը Երբորդ Միջազգայնականի¹²⁰:

Յուլիս 1938ին, Փարիզի մէջ կայացած ՄԴՀԿ Ժ. Համագումարը Կոմիւնտէրնի հանդէպ կուսակցութեան կեցուածքին մէջ նորութիւն մը չի բերեր, Այն կ'որոշէ:

ի նկատի ունենալով,

Որ Երրորդ Միջազգայնականը կը համդիսանայ յեղափոխական պրոլե-տարիատի կողմէ յանուն աշխատանքի ազատագրութեան մղուող պայ-քարի գլխատը ազդակը,

Որ աշխատանքի ազատագրութեան իտեւը կը ներկայանայ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան յիմնամայ յեղափոխական պայքարներու վերջնական նպատակը՝ հայկական կեանքին մէջ:

Որ միջազգային իրականութեան ներկայ ժամանակաշրջանին մէջ Եր-րորդ Միջազգայնականի քաղաքական գործելակերպին ծանրութեան կեդրոնը կը կայանայ եւ պիտի կայանայ ֆաշիզմի եւ ռասիզմի դէմ բռնած Կոմունիստական կուսակցութեանց եւ սոցիալիստական եւ դե-մոկրատական կազմակերպութեանց միջեւ միասնական գործունեու-թեան նպատակով ստեղծուած ժողովրդական ճակատի պահպանման եւ այդ ճակատը բոլոր ոյժերու սերտացման գործին մէջ:

Որ Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը կը ներկայանայ որպէս Երրորդ Միջազգայնականի համակիր կազմակերպութիւն մը՝ ներքին եւ արտա-քին ճակատներու յարաբերութեանց մէջ՝ իր կատարեալ անկախ դրու-թեամբ, այլ ոչ անոր երահանգներուն անայայտօրէն ենթակայ՝ ազգային հատուած մը,

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Տասներորդ Համագումարը կ'որոշէ.

Ա) Երրորդ Միջազգայնականի հետ ունեցած իր փոխյարաբերութիւնը շարունակել նախկին դրութեամբ, այն է, կուսակցականօրէն մնալով ան-կախ, ամենուրեք համագործակցիլ ֆաշիզմի եւ ռասիզմի քաղաքակա-նութեան դէմ դիրք բռնած ժողովրդական ճակատի ոյժերուն հետ¹²¹:

Իրօք, Համաշխարհային Երկրորդ Պատերազմի տարիներուն, ՄԻՀԿ ամէնուրեք կը մասնակցի ֆաշիզմի դէմ տարուող պայքարին եւ այդ նպատակով կազմուած ժողովրդային ճակատներուն կարգ մը վարչերու մէջ, այդ պայքարը կը ստանայ մարտական բնոյթ: Հարաւային Ֆրանսա-յի մէջ, գերմանական զբաղման օրերուն, դիմադրութեան մասնակից Հայ մարտիկներու բնականուր պատասխանատուներէն կ'ըլլայ ՄԻՀԿ Մարտէջի մասնաճիւղի ատենապետ Դաւիթ Դաւիթեան¹²², ՄԻՀԿ Յունաստանի Երջանի ատենապետ Արամ Կէօքճեան, դիմադրութեան հետ գործակցու-թեան պատճառով, կը զնդակահարուի գերմանացի զբաղիչ ուժերուն կող-մէ: Այն վարչերուն մէջ, ուր չկար ֆաշիստական բռնազբաւում (ԱՄՆ, Մերձաւոր Արեւելք, եւն.), ուստի եւ՝ դինեալ պայքարի հնարաւորութիւն, ՄԻՀԿ իր ամբողջ կարողականութեամբ կը մասնակցի կարմիր Բանակի հայկական զօրասիւններուն համար կատարուող Հանգանակութիւննե-րուն: Հնչակեան մամուլը ամբողջապէս կը նուիրուի ֆաշիզմի դէմ քա-րողութեան:

ՀնՁԱԿԵԱՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՄՄՆՏԵՐՆԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

